Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԽՍՀՄ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ. ՀԽՍՀ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ

[1929]

ԵՐԵՎԱՆ
1930

ԽՍՀՄ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ. ՀԽՍՀ

355(47)

# ՀՐԱՀԱՆԳ

## ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ

[1929]

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՀԱՅԿ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1930

Наставление для территориальных частей

[1929]

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 239է
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5128 (բ)
ՏԻՐԱԺ 500

# ՀՐԱՄԱՆ

## ԽՍՀՄ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

## № 102

**25 ապրիլի 1929 թ.**

**ք. Մոսկվա**

1. 1929 *թվի հունիսի* 1-*ից գործածության մեջ մտցնել—«Հրահանգ յերկրային զորամասերի համար» հրատ.* 1929 *թվի*:

2. *ԽՍՀՄ ՀՌԽ* 1924 *թվի* № 1095 *հրամանը նույն այդ թվից վերացնել*:

*Ռազմական և Ծովային Գործերի ժողովրդական կոմիսար և ԽՍՀՄ ՀՌԽ-ի*
*Նախագահ՝* ՎՈՐՈՇԻԼՈՎ

(*ԲԳԿԲ Գլխավոր Վարչություն*):

# ՀՈՂՎԱԾ I

## ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Ցերկրային զորամասերին են պատկանում ԲԳԿԲ զորքերի այն զորամասերը, որոնց կազմակերպությունը նախատեսում է հետևյալը.*

*ա) ոչ մեծ մշտական կազմը (բնակազմը), գլխավորապես պետակազմը, որը իսկական զինվորական ծառայությունն անցնում է ԲԳԿԲ անձնական կազմի կադրերի հետ միակերպ.*

*բ) փոփոխիկ կազմի, որը խաղաղ ժամանակ կանչվում է միայն պարբերաբար, կարճատև ժամկետներով՝ ուսուցման համար:*

2. *Ցերկրային զորամասերի փոփոխիկ կազմը համալրվում է իրենց զորական մասերի տեղավորության շրջաններից:*

3. *Ցերկրային զորամասերի կադրերի վրա իրենց զորամասի և նրա շրջանացման սահմաններում դրվում է.*

*ա) պահել զորամասը մշտական մարտական և զորահավաքային պատրաստության մեջ.*

*բ) պատրաստել զորական գլխոցներում կրտսեր հրամանատարական կազմ.*

*գ) անցկացնել նախակոչային պատրաստություն.*

*դ) պատրաստել ԲԳԿԲ հերթական զորակոչից ավելացածներին.*

*դ) զորական և ռազմա-քաղաքական աշխատանքը, միջհավաքների ժամանակաշրջանում.*

*ե) աջակցել տեղական խորհրդային, կուսակցական, արհեստակցական և հասարակական կազմակերպություններին նրանց անցկացրած միջոցառումների մեջ՝ բնակչության ռազմականացման գործում.*

ը) զենքի, հանդերձանքի, հագուստեղենի և մնացած գույքի պահելն ու պահպանումը:

4. Յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում իսկական զինվորական ծառայությունն անցնում է հինգ տարվա ընթացքում և բաղկանում է.

ա) զորամասերի ուսուցման համար միատեղման հավաքներից.

բ) միջհավաքներին արձակուրդում լինելը:

5. Այն անձինք, վորոնք գտնվում են իսկական զինվորական ծառայության մեջ յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում՝ զորական ծառայողներ են:

6. Իսկական զինվորական ծառայությունն անցնելու ժամանակ յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի բոլոր ծառայողները գտնվում են կամ ԲԳԿԲ շարքերում, կամ նրա շարքերից դուրս:

ԲԳԿԲ շարքերում են հաշվվում:

ա) փոփոխիկ սոսկական և կրտսեր պետ կազմի զորական ծառայողները—նրանց ուսուցման համար սահմանված հավաքներն անցնելու ժամանակ, նույնպես և նրանց առանձին զինվորական հանձնարարություններ և առաջադրություններ, միջհավաքների ժամանակամիջոցում, կատարելու ժամանակ և այլ դեպքերում նրանց իրենց զորամասը կանչելու ժամանակ:

բ) փոփոխիկ միջին, ավագ և բարձր պետ կազմի զորական ծառայողները—վարժական կարճատեվ և շարժական հավաքների, զորաշարժերի և այլ վարժական պարապմունքների անցնելու ժամանակ, նույնպես և նրանց դրավելը կատարելու առանձին զինվորական հանձնարարություններ և առաջադրություններ միջհավաքների ժամանակամիջոցում և այլ դեպքերում նրանց իրենց զորամասի կազմի մեջ կանչվելու ժամանակ:

Փոփոխիկ կազմի զորական ծառայողների ԲԳԿԲ շարքերից դուրս գրությունը փոխանցվում է միջհավաքների ժամանակաշրջանում արձակուրդում գտնվելու դրությամբ:

ԲԳԿԲ շարքերում գտնվելու սկզբնական և վերջնական րոպեներ (մոմենտներ) հաշվվում են.

ա) յերկրային զորամասերի սոսկական և կրտսեր պետ կազմի զորական ծառայողների համար,

1) վորոնք անց են կենում նրանց համար սահմանված ուսուցման հավաքները, և հիշված հավաքների առաջին և վերջին օրը ցույց են տրվում համապատասխան հրամաններում.

2) առանձին ռազմական հանձնարարություններ և առաջադրություններ կատարելու համար կանչվածները միջհավաքների ժամանակաշրջանում և այլ դեպքերում նրանց իրենց զորամասի մեջ կանչվելը—համապատասխան հանձնարարություններ և առաջադրություններ ստանալու մոմենտը կամ իրենց զորամասի մեջ կանչվելու և այդ առաջադրությունները և հանձնարարությունները կատարելու մոմենտը կամ զորամասից ազատվելու մոմենտը.

բ) յերկրային զորամասերի փոփոխիկ միջին, ավագ և բարձր պետ կազմի զորական ծառայողների համար վարժական, կարճատև, շարժական հավաքների, մանևրաների և այլ ուսումնական պարապմունքների համապատասխան հրամաններում ցույց տրված առաջին և վերջին օրերը կամ համապատասխան հանձնարարություններ և առաջադրություններ ստանալու կամ իրենց զորամասի մեջ կանչվելու մոմենտը այդ առաջադրություններն ու հանձնարարությունները կատարելու կամ զորամասից ազատվելու մոմենտը:

7. Յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողներն իսկական զինվորական

ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում գտնվում են համապատասխան զորամասերի ցուցակներում և, բացի դրանից, ցուցակագրվում են իրենց բնակության տեղում շրջանային, վոլոստային (և սրանց համապատասխանող) զործադիր կոմիտեներում կամ տեղական ազգական վարչության մարմիններում, յեթե վերջինների դասավորության կետերը չեն զուգադիպում յերկրային զորամասերի կայքերի դասավորությանը:

8. Տեղական խորհրդային մարմինների պարտականությունները յերկրային զորամասերին աջակցություն ցույց տալու՝ յերկրային զորամասերի շրջաններում աշխատանքներ անցկացնելու գործում վորոշվում են կենտրոնական, մարզային, յերկրային, նահանգական և շրջանային (окружной) գործադիր կոմիտեների վորոշումներով (Հավելվածներ №№ 1—4):

---

## ՀԱՏՎԱԾ II

## ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ

9. Յերկրային զորամասերի շրջանացումը կայանում է զորամասերի համար փոփոխիկ կազմի համալրման տեղամասեր սահմանելու մեջ:

10. Տեղական խորհրդային մարմինների հետ կապն ապահովելու և յերկրային զորամասերի աշխատանքը տեղական մարմինների հետ համաձայնեցնելու համար, առանձին զորամասերի, նրանց ստորաբաժանումների և բարձր միավորումների համալրման շրջանների սահմանները, վորպես ընդհանուր կանոն, պետք է զուգադիպեն ընդհանուր վարչական բաժանման սահմաններին:

11. Խոշոր արդյունաբերական կենտրոններում (քաղաքներում) թույլատրվում է, զորամասերի հրամատարության կապը իրենց փոփոխիկ կազմի հետ հեշտացնելու նպատակներով, կատարել առանձին զորամասերի և նրանց ստորաբաժանումների շրջանացում ըստ արտադրական սկզբունքի (փոփոխիկ կազմի աշխատանքի կամ ծառայության տեղի համեմատ):

12. Յերկրային զորամասերի համալրման շըրջաններին ներկայացվող հիմնական պահանջները հետևյալներն են.

ա) շրջանի քաղաքա—բարոյական բարենպաստությունը, որը հնարավոր է դարձնում մարտական զորամաս կազմելու,

բ) յուրաքանչյուր զորամասի համար սահմանված ժամկետներին զորահավաքի պատրաստությունն ապահովելու հնարավորությունը.

գ) զինվորական ծառայություն անելու համար պետքական բնակչության առկայությունը, որ որոշվում է նոր կազմակերպումների ժամանակ յերկու նախակոչյան տարիքներով և չորս տարիքներով, որոնք համապատասխանում են իսկական զինվորական ծառայության առաջին, յերկրորդ, յերրորդ և չորրորդ տարիններին, իսկ գոյություն ունեցող համալրման շրջանների ընդարձակման կամ նոր շրջաններ միացնելու ժամանակ—յերկու նախակոչյան տարիներով: Հիշված տարիքների պետքական բնակչության քանակը պետք է համապատասխանի ըստ յուրաքանչյուր տարիքի շրջանացվող յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի հաստիքային քանակի քառորդին ավելացնելով վոչ պակաս 100 տոկոս բնական նըվազման վրա, բժշկական քննության ժամանակ անպետք ճանաչվածների վրա և զորակոչված կոնտինգենտից զորական դպրոցները համալրելու համար մի մաս ջոկելու վրա.

դ) բնակչության սոցիալական կազմը, վոր ապահովում է փոփոխիկ կազմում բանվորական շերտի 10 տոկոս. բնակչության կուլտուրական աստիճանն և առաջին հերթին գրագիտությունը— բնակչության արական սեռի 19–ից մինչև 26 տարեկան հասակը վոչ պակաս 80 տոկոսով:

գ) հնարավորություն փոփոխիկ կազմը ձիակազմով և զումակով համալրելու տեղական միջոցներից.

ե) յերկաթուղային, գետնուղային և ջրային հաղորդակցության ճանապարհների բավարար զարգացած ցանցը, նույնպես և կապի միջոցների բավարար առկայությունը, վորոնք ապահովում են ղեկավարության անընդհատությունը, զորամասերի մարտական և զորահավաքի պատրաստականությունը:

13. Յերկրային զորամասերի հեծելազորի համար համալրման շրջաններ վորոշելու ժամանակ, բացի հոդ. 12–ում թված հիմնական պահանջներից, հաշվի յեն առնվում այն պայմանները, վորոնք թույլատրում են աշխատավոր բնակչության զինվորական ծառայության կանչել փոփոխիկ կազմում՝ իր ձիով:

14. Մասնագիտական զորամասերի համար համալրման շրջաններ վորոշելու ժամանակ, բացի հոդ. 12–ում թված հիմնական պահանջներից, հաշվի յե առնվում նախակոչային տարիքների մեջ և այն տարիքի մեջ, վորոնք համապատասխանում են իսկական զինվորական ծառայության դըրությանը, համապատասխան–ռազմա–հաշվառման մասնագիտությունների կամ պրոֆեսիաների առկայությունը:

15. Յերկրային զորամասերի շրջանացման ղեկավարությունն ամբողջությամբ վերցրած պատկանում է ԲԳԿԲ Գլխավոր Վարչությանը. առանձին զորամասերի և նրանց ստորաբաժանումների շրջանացման ղեկավարությունն իրա–

կանոնացվում է համապատասխան զորական միավորությունների և զորամասերի հրամանատարության կողմից:

16. Փոփոխիկ կազմով համալրվող շրջանները որոշելու կարգը նոր կազմակերպվող յերկրային զորամասերի համար իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ.

ա) ԲԳԿԲ շտաբը, համապատասխան զորամասերի ընդհանուր տարանեդության (дислокация) հետ, նշում է համալրման շրջաններ զորական միավորությունների (դիվիզիաների, առանձին բրիգադների) համար.

բ) ռազմական շրջանի (округ) շտաբը նշում է համալրման շրջաններ առանձին զորամասերի (գնդերի, առանձին դումարտակների, առանձին վաշտերի, առանձին բաժնյակների (դիվիզիոն), առանձին հեծելավաշտերի, առանձին մարտկոցների և առանձին՝ սանիտարական, անասնաբուժական, ռազմա-տնտեսական, հրետանական և ռազմա-տեխնիկական զորամասերի, հիմնարկությունների և հաստատությունների) համար.

գ) կորպուսի շտաբը ճշտում է առանձին զորամասերի համալրման շրջանների սահմանները.

դ) դիվիզիայի շտաբը (առանձին բրիգադայի) նշում է առանձին զորամասերի ստորաբաժանումների (բաժնյակների, հեծելավաշտերի, վաշտերի, մարտկոցների, խմբերի և նրանց համազորների) համալրման շրջանները.

ե) առանձին զորամասի շտաբը վերջնականապես ճշտում է իր ստորաբաժանումների համալրման շրջանների սահմանները:

17. Ռազմական շրջանի (округ) հրամանատարությունը շրջանացման նախագծերը շրջանների (район) դրության գնահատականով (հավելված 5) ներկայացնում է ԲԳԿԲ Գլխավոր Վարչությանը հաստատելու համար և այդ նախագծերը հաստատելուց հետո միայն տեղերում կատարվում է զորամասերի շրջանացում:

Դիվիզիաների (բրիգադա) կազմի մեջ մտնող զորամասերի շրջանացումը փաստորեն իրականացվում է դիվիզիաների (բրիգադա) հրամանատարների կողմից, իսկ առանձին զորամասերի համար՝ շրջանի ներսում առանձին ստորամասերի սահմանազծումը—այդ զորամասերի հրամանատարների (պետերի) կողմից դիվիզիաների (բրիգադաների) հրամանատարների ցուցմունքներով:

18. Հոդ. 17-ի կարգով հաստատված առանձին զորամասերի համալրման շրջաններում յեղած փոփոխությունները կատարվում են ԲԳԿԲ Գլխավոր Վարչության վորոշումով միայն, ռազմական շրջանների (округ) շտաբների ներկայացնելուց հետո:

Առանձին զորամասերի ստորաբաժանումների համալրման շրջանների փոփոխությունները թույլատրվում են միայն ռազմական շրջանների զորահրամանատարների հաստատելուց հետո, յերբ ներկայացնում են՝ կորպուսների հրամանատարները—յեթե դիվիզիա, առանձին բրիգադա, կամ առանձին զորամաս է մտնում է կորպուսի զորամասերի կազմի մեջ. դիվիզիաների, առանձին բրիգադաների և առանձին զորամասերի հրամանատարները—այն դեպքում, յեթե նրանք չեն մտնում կորպուսների կազմի մեջ և անմիջապես յենթակա յեն ռազմական շրջանի (округ) հրամանատարությանը:

19. Շրջանների ընդհանուր վարչական բաժանման ժամանակ տեղի ունեցած սահմանների փոփոխությունները, վորոնք ընդգրկված են յերկրային կազմակերպումներով առանձին զորամասերի, նրանց ստորաբաժանումների և բարձր միավորությունների շրջանացումն ուղղելը թույլատրվում է կատարել 16—17 հոդվածներում բացատրված կարգով, միայն հերթական զորակոչական տարիք ունեցողների նկատմամբ, թողնելով բարձր տարիքները մինչեվ փոփոխել կազմի

համար սահմանված ծառայության ժամկետները վերջացնելը համալրման նախկին շրջաններում։

20․ Դիվիզիայի շրջանացումը կատարվում է չերկու յեղանակով․

ա) վարչական մեկ շրջանում և դիվիզիայի կազմի մեջ մտնող բոլոր զորամասերի կոմպակտ շրջանացման միջոցով․

բ) բնակչության սակավախտության և մյուս վոչ բարենպաստ պայմանների դեպքում— առանձին զորամասերի համար, առանձին շրջաններ գտնելու միջոցով, շրջաններ, վորոնք վարչականորեն միմյանց հետ կապված չեն։

21․ Դիվիզիայի շրջանի ներսում դիվիզիայի կազմի մեջ մտնող գնդերից ամեն մեկը (հրաձգային, հեծելազորային, հրետանական) պետք է ունենա իր ինքնուրույն համալրման շրջանը։

22․ Հրաձգային դիվիզիայի առանձին հեծելավաշտի համար առանձնացվում է համալրման ինքնուրույն շրջան։

Շրջանում ձիակազմի անբավարար լինելու դեպքում թույլատրվում է հեծելավաշտը փոփոխելի կազմով համալրել հրաձգային և հրետանական գնդերի շրջաններից ստեղծելով հեծելավաշտի համար միայն հիմնական ինքնուրույն կորիզ։

23․ Սակրավոր և կապի առանձին վաշտերի շրջանացումը կարող է կատարվել ինչպես համալրման ինքնուրույն տեղամասերում, նույնպես և հրաձգային և հրետանական գնդերի չերտում․ կապի և սակրավոր առանձին հեծելավաշտերի շրջանացումը, վորպես ընդհանուր կանոն, կատարվում է համալրման ինքնուրույն տեղամասերից։

Սակրավոր և կապի առանձին վաշտերի և հեծելավաշտերի շրջանացումը վորոշվում է դիվիզիաների շտաբների դասավորության կետերով։

24. Ինչպես հրաձգային, նույնպես և հեծելազորային դիվիզիաների թիկունքային հիմնարկությունները փոփոխիկ կազմով համալրվում են շարային զորամասերին համապատասխանող շրջանների շերտերում (հրետ պարկը՝ հրետ գնդի շրջանից, ճարտարագ. պարկը—սապվաշտի, պարենավորման հիմնարկությունները և սանհիմնարկությունները հրաձիգ գնդի շրջանից և այլն):

25. Առանձին զորամասերի ներսում յերկրային լինելու սկզբունքը հասցվում է միայն մինչև վաշտերը, մարտկոցներն և հեծելավաշտերը:

Բնակչության սակավ խտության և այլ անբարենպաստ պայմաններում, վորպես բացառություն թույլատրվում է տեղամասեր դասել (կտրել) մինչև դասակները ներառյալ:

Գնդի մանր ստորաբաժանումները՝ հետախույզների դասակը, տնտեսական խումբը, սակրավորական դասակն և մյուսները համալրվում են, ըստ հնարավորության, գնդի կենտրոնին մոտիկ վաշտային (մարտկոցային, հեծելավաշտային) տեղամասերից, յուրաքանչյուր միավորի համար համալրման հիմնական կորիզ ստեղծելու միջոցով:

26. Տրջանցման ժամանակ ինչպես մասնագիտական զորամասերը (կապի, սակրավոր), վորոնք մտնում են դիվիզիայի կազմի մեջ, նույնպես և առանձին զորամասերի մանր ստորաբաժանումները, համալրման տեղամասերի դասելը կատարվում է, ըստ հնարավորության կոմպակտ ձևով առանց առանձին զորամասն ամբողջ շրջանում ցրվելու:

27. Վաշտային, հեծելավաշտային և մարտկոցային համալրման տեղամասերում սահմանվում են համալրաման տեղամասերի համապատասխան կենտրոններ, վորոնք ապահովված են շենքերով վարժականների համար, վորոնք հան-

գլխանում են նախակոչային պատրաստության և միջհավաքային աշխատանքն անցկացնելու տեղեր:

## ՀԱՏՎԱԾ III

## ՑԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿԱԴՐԵՐԻ ՏԱՐԱՏԵՂՈՒՄԸ (ДИСЛОУПРАВЛЕНИЕ)

28. Դիվիզիայի ղեկավար կազմը, վորպես կանոն, տեղավորվում է բնակարաններում վարչական կենտրոնում, վոր գտնվում է դիվիզիայի տերիտորիայի վրա. Հենց այդ վարչական կենտրոնում բնակարաններում տեղավորվում են գնդերից մեկի և առանձին կապի վաշտի (հեծելավաշտի) կադրերը:

29. Դիվիզիայի հրաձգային և հրետանական գնդերի կադրերը տեղավորվում են բնակարաններում իրենց համալրման շրջանների վարչական կենտրոններում, իսկ մի քանի կենտրոններ յեղած դեպքում կարևորներից մեկում, վորն ունի զորանոցներում տեղավորվելու, կառավարելու և կապի հարմարություններ:

Այս դեպքում յերբ զորանոցային պայմանները ամբողջովին անհնար են դարձնում հրաձգային և հեծելազորային գնդերի կադրերին իրենց համալրման շրջանների սահմաններում բնակարաններում տեղավորվելու, վորպես բացառություն, թույլատրվում է այդպիսիններին տեղավորել մոտակա բնակավայրերում, վորոնք գտնվում են զորամասերի համալրման շրջաններից դուրս. այս դեպքում անհրաժեշտ պայման է դրվում հաղորդակցության լավ ճանապարհների և կապի միջոցների առկայությունը կադրերի բնակարաններում տեղավորելու համար նշանակված բնակավայրի և նրանց համալրման շրջանների միջև:

30. Առանձին սակրավոր վաշտի և առանձին հեծելազորային հեծեավաշտի կադրերը տեղավորվում են բնակարաններում իրենց համալրման շրջանների վարչական կենտրոններում, ըստ հնարավորության մեկ վայրում դիվիզիայի ղեկավարությամբ կամ հրաձգային կամ հեծելազորային գնդերից մեկի կադրի ղեկավարությամբ:

31. Դիվիզիայի թիկունքային հիմնարկությունների կադրերը (սանիտարական, անասնաբուժական, ռազմա-տնտեսական, հրետանական և ռազմա-տեխնիքական) բնակարաններում տեղավորվում են կամ մի վայրում դիվիզիայի ղեկավարությամբ կամ նրանց միատեսակ (ազգակից) շարային զորամասերի տեղավորության վայրերում:

32. Հրաձգային և հրետանական գնդերի վաշտերի և մարտկոցների կադրերի համար վորպես մշտական բնակվելու տեղ ընտրում են գնդերի շտաբների դասավորության վայրերը:

Շրջանի քաղաքական բարենպաստ դրության, գնդի շտաբի հետ լավ կապի և բնակարաններում տեղավորվելու բավարար պայմանների և վարժական զբաղմունքներ անցկացնելու դեպքում թույլատրվում է իրենց համլրման տեղամասերում հրաձգային, հեծելազորային և հրետանական զորամասերի կադրերի չ'կենտրոնացած տեղավորում բնակարաններում մինչև վաշտերը, մարտկոցներն և հեծելավաշտերը ներառյալ:

33. Գնդերի կենտրոններում պահվում են զորանոցային շենքեր գնդի շտաբի, գնդի դպրոցի, խմբերի, հրետանական, սանիտարական և անասնաբուժական հիմնարկությունների, շարային վաշտերի (մարտկոցների) կադրերի համար և պահեստների համար—այն տարողությամբ, վոր բավարարում է գույքի պահպանման պահանջը համաձայն պատերազմի ժամանակ գոյություն ունեցող նորմաներին և ցուցակներին (табель):

# ՀԱՏՎԱԾ IV

## ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ ԿԱԴՐԱՅԻՆ ԿԱԶՄՈՎ ՀԱՄԱԼՐԵԼԸ

### Գլուխ 1. Պետ և շարային կազմով համալրելը:

34. *Յերկրային զորամասերը պետ և շարային կազմի կադրով համալրումը կատարվում է կադրային զորամասերը նույն կազմով համալրելու ընդհանուր հիմունքներով:*

### Գլուխ 2. Յերկրային զորամասերը զորական դպրոցների համալրման առանձնահատկությունները:

35. *Զորական դպրոցները հոդ. 35-ում ցույց տարվում է նախակոչիկներին դպրոցները նշանակելու հետևյալ յեղանակներից մեկով.*

*ա) նեղ-տերիտորիալ—իրենց զորամասերի շրջաններից.*

*բ) խաչաձև—իրենց դիվիզիայի գնդերի միջև.*

*գ) խաչաձև—տարբեր դիվիզիաների յերկրային զորամասերի միջև.*

*դ) խառը, այսինքն յերկրային զորամասերի շրջաններից, վերևում ցույց տված «ա», «բ», և «գ» յերեք կետերից մեկի համալրման յեղանակներով, և կադրային զորամասերի շրջաններից* 15–20 *տոկոսի չափով:*

36. *Զորական դպրոցները հոդ.* 35-*ում ցույց տված համալրման յեղանակներից մեկի ընտրության ժամանակ, հարկավոր է հաշվի առնել շրջանի քաղաքական-բարոյական վիճակը և յելնել համալրման շրջանում զինակոչային տարիք ունեցող անձանց մեջ սոցիալական և կուսակցական*

չերտի առկայությունից, վոր թույլատրում է ռազմական դպրոցները մտնողների ընդհանուր թվում ունենալ՝ ՀԿԿ(բ)և ԼԿՅԵՄ անդամներ 50%, բանվորներ 30%-ից վոչ պակաս, բատրակներ և գյուղական չքավորներ 50%-ից վոչ պակաս:

Յերկրային զորամասերի համալրման շրջանում սոցիալական և կուսակցական վերոհիշյալ նորմաներին հասնելու անհնարության դեպքում անհրաժեշտ է կիրառել համալրման խառը յեղանակը (հոդ. 35, կետ «դ»):

37. Զորական դպրոցների համալրման յեղանակների վերջնական վորոշումը պատկանում է ՀՌԽ համապատասխանող ռազմական շրջաններին:

38. Զորական դպրոցների համալրելը յերկրային զորամասերի շրջաններից ըստ հոդ. 35-ում ցույց տրված յեղանակներից յուրաքանչյուրի կատարվում է այն անձանց սկզբնական անձնական ընտրությունը, վորոնք յենթակա յեն զորական դպրոցները մտնելու նրանց նախակոչային պատրաստություն անցնելու ժամանակ:

39. Նախնական ընտրությունը (հոդ. 38) կատարվում է վոչ պակաս 200 տոկոսի չափով: Զորական դպրոցների փոփոխիկ կազմի հաստիքային քանակից, համաձայն զորամասի հրամանատարի (պետի) բաշխման զորամասի ստորաբաժանումների վաշտերի, (մարտկոցների և հեծելավաշտերի) հրամանատարների և քաղղեկների կողմից, վարժականների ՀԼԿՅԵՄ բջջի մասնակցությամբ և տեղական խորհրդային և արհեստակցական հիմնարկությունների և կազմակերպությունների աջակցությամբ:

40. Զորական դպրոցների թեկնածուներ նշանակվում են հոդ. 36-ում ցույց տված սոցիալական և կուսակցական շերտերի նորմաների համապատասխան նախակոչային պատրաստությունն հաջող անցողների թվից, դրագետներին, կատար-

յալ առողջներին, առավելապես նրանց, վորոնք ցանկանում են սովորել դպրոցներում և ըստ իրենց ընտանեկան–գույքային դրության, իսկական զինվորական ծառայության հերթական զինակոչների ժամանակ չեն օգտվում իրավունքներով և արտոնություններով: Զորքի մասնագիտական տեսակների զորական դպրոցները մտնել ցանկացողների համար թեկնածուներ ջոկելու ժամանակ պետք է հաշվի առնել նախակոչիկների գրագիտությունը և մասնագիտությունը նույնպես:

Զորական դպրոցների թեկնածուների մեջ անգրագիտության վերացումը կատարվում է, առաջին հերթին, տեղերի համապատասխան մարմինների կողմից այն ժամկետներին, վոր սահմանված են զորամասերի հրամանատարության համաձայնությամբ:

41. Վոչ ուշ զինակոչի տարվա մայիսի մեկից վաշտերի (մարտկոցների, հեծելավաշտերի) հրամանատարներն առանձին զորամասի շտաբն են ներկայացնում նախակոչիկների ցուցակները, վորոնք ջոկված են զորական դպրոցների համար հոդ. հոդ. 38—40 կարգով:

Առանձին զորամասերի հրամանատարությունը (հրամանատար և կոմիսար) հաղորդում են համապատասխան շրջանային (գավառական) ռազմական կոմիսարիատներին զինակոչի տարվա հուլիսի մեկից վոչ ուշ թեկնածուների ցուցակը, վորոնք նշանակված են համալրելու դպրոցները զորամասի ստորաբաժանումների համալրման շրջաններից, ցույց տալով ընդունելության և յուրաքանչյուր ստորաբաժանումների շրջանից դպրոցներն ուղարկման յենթակաների քանակը:

42. Զորական դպրոցները զինակոչային տարիքի մարդկանցով համալրումը վորոշվում է նրանց փոփոխիկ կազմի հաստիքային նորմայով և տոկոսային հավելումով: Տոկոսային հավելումը սահմանվում է բնական նվազման համար գա-

նալին պատճառներով— այն չափով, վոր ցույց է տված զինակոչային քանակի բաշխմամբ, և զանելու և բողոքումների համար—հետեվյալ չափով․ 10 տոկոս դպրոցի փոփոխելի կազմի քանակից ներ–տերրիտորիալ համալրման դեպքում 20 տոկոս— համալրման մնացած բոլոր դեպքերում:

Զորական դպրոցներում ծառայությունն անցկենալու առաջին ամսից և խոտանելուց (выбраковка) հետո, զտման (отсеивание) համար սահմանված տոկոսային հավելումը, փոխահաշվվում է դպրոցներից իրենց զորամասերի ստորաբաժանումների կադրային կազմի մեջ: Իսկ դպրոցներում զտանից հետո մնում է միայն փոփոխելի կազմը, նվազման վրա սահմանված տոկոսային հավելումով:

43․ Զորական դպրոցների համալրումը կատարվում է զինակոչային հանձնաժողովների կողմից հերթական զինակոչի ժամանակ, զինակոչիկներին ըստ թեկնածուական ցուցակների ջոկելու միջոցով (հոդ․ 41), սահմանված նորմաների սահմաններում (հոդ․ 42), յերկրային զորամասերի համալրման շրջաններից, իսկ ամեն մի յերկրային զորամասում նրա ստորաբաժանումների համալրման շրջաններից (գումարտակների, բաժնյակների, վաշտերի, մարտկոցների, հեծելավաշտերի):

Զինակոչային հանձնաժողովները պարտավոր են համալրել յերկրային զորամասերի զորական դպրոցները զինակոչիկներով, վորոնք ընտրված են յերկրային զորամասերի հրամատարության կողմից նախակոչային պատրաստության ժամանակամիջոցներին և յերկրային զորամասերի զորական դպրոցների համալրման պահանջը լրիվ կատարելուց հետո միայն զինակոչային հանձնաժողովները կարող են ընտրված զինա-

կուչիկներից ավելիներին նշանակել բատ կարգու- մի այլ զորամասեր:

Զինակոչային հանձնաժողովները, առաջին հերթին ուղարկում են զորական զպրոցները, նախակոչային պատրաստության ժամանակաշրջանում ընկնված թեկնածուներին: Թեկնածուները չբավարարելու դեպքում զպրոցներ են ուղարկվում արտոնության չունեցողները, վորոնք իրենց առողջական դրութեամբ ճանաչված են անպայման պիտանի ԲԳԿԲ կարգերում ծառայելու և համապատասխանում են հոդ. հոդ. 36 և 40 թված պահանջներին:

## ՀԱՏՎԱԾ V

## ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ ՓՈՓՈԽԻԿ ԿԱԶՄՈՎ ՀԱՄԱԼՐԵԼԸ

### Գլուխ 1. Բարձր, ավագ և միջին պետկազմով համալրելը:

44. *Յերկրային զորամասերը բարձր, ավագ և միջին փոփոխիկ պետկազմով համալրումը կատարվում է յերկարատև արձակուրդում գտնված պետկազմի անձերից և վորոնք բնակվում են դիվիզիայի (կամ այլ զորական միավորությունների) համար հատկացված համալրման շրջաններում:*

45. *Յերկրային զորամասերի սկզբնական ձևավորման, նույնպես և նոր շրջաններ տեղափոխելու ժամանակ, փոփոխվող պետկազմով համալրելու կարգի մասին ցուցմունքներ տրվում են շրջանային* (окружной) *վարչությունների կողմից, վորոնք վարում են պետկազմի անձանց հաշվառումը:*

*Այդ նույն վարչությունները միաժամանակ ցույց են տալիս տոկոսային հավելման չափը,*

վորոշելով պաշտոնները, վորոնք յենթակա յեն կարիքից դուրս հաշվի առնելու։

46․ Յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում մտցնելու համար պետկազմի անձանց անհատական ընտրությունը կատարվում և նույն այդ հաշվա—մոբիլիզացիոն մարմինների կողմից, վորոնց անձնական հաշվառքում են գտնվում պետկազմի համապատասխան խմբերը, այսինքն՝

ա) բարձր—կենտրոնական վարչությունների կողմից ․

բ) ավագ, նույնպես և միջին բժշկական և անասնաբուժականը—շրջանային (окружн.) վարչությունների կողմից ․

գ) միջին հրամատարականը, վարչականը և քաղաքականը—յերկրային շրջանների (округ) վարչությունների, նույնպես և անձնական հաշվառում վարող շրջանային (окружной) և գավառական ռազմական կոմիսարիատների կողմից, համալրվող զորամասերի կամ նրանց միավորությունների հրամատարության ներկայացուցիչների և քաղմարմինների մասնակցությամբ։

47․ Փոփոխիկ կազմում նշանակելու համար պետկազմի ընտրությունը կատարվում և հետևյալ հաջորդականությամբ․

ա) հատված 10—ի կարգով «Որենք պարտադիր զինվորական ծառայության մասին» ԲԳԿԲ կադրերում իսկական զինվորական ծառայության անցածները և միջին պետկազմի կոչում ստանալու համար քննություն բռնածները․

բ) ընթացիկ տարում յերկարատև արձակուրդ արձակվածները․

գ) նախկին տարիներում յերկարատև արձակուրդ արձակվածները․

դ) պահեստի պետկազմի անձանց կողմից այդ բանի ցանկություն հայտնողները։

Ծանոթություն․— Անասնաբուժական կազմի անձերից առաջին հերթին նշանակ-

վում են յերկարատև արձակուրդում գտնվողները և ԲԳԿԲ անասնաբուժական կազմի պաշտոններում չծառայածները։

48. Յերկարատև—արձակուրդավորներին փոփոխիկ պետկազմում նշանակելը կատարվում է համաձայն ռազմական մասնագիտությունների և պաշտոնի կատեգորիաների, վորոնց համաձայն գտնվում են հաշվառքում։

49. Դիվիզիայի համալրման շրջանում պետկազմի անբավարար լինելու դեպքում—թույլատրվում է.

ա) Նկատի առնելով հոդ. 48-ը, նշանակել պաշտոնում բարձրացնելով կամ ցածրացնելով մեկ, իսկ անասնաբուժական կազմին յերկու կատեգորիայով.

բ) Նկատի չառնելով հոդ. 44-ը, բայց սույն հոդվածի «ա» կետը կիրառելով նշանակել.

1) ուրիշ, յերկրային զորամասերի ձևավորմամբ ընդգրկված շրջաններից.

2) այն շրջաններից, վորոնք յերկրային զորամասերի ձևավորմամբ չեն ընդգրկված, «Որենք պարտադիր զինվորական ծառայության մասին» հոդ. 173 կարգով.

գ) պահեստի պետկազմի անձանց նշանակել, վորոնք ցանկություն են հայտնել այդ բանին, կիրառելով սույն հոդվածի «ա» կետը.

դ) չբավարարող մասնագիտությունների պաշտոնին նշանակել այն պետկազմի անձանց, վորոնք հաշվառման մեջ են գտնվում այլ մասնագիտություններով, պահանջվողներին նման են (համեմատ) այս դեպքում միջին պետկազմի չբավարարող մասնագիտությունները փոխարինելու թույլատվության մասին ցուցմունքներ տրվում են շրջանային (ОКРУЖНОЙ) վարչությունների կողմից։

50. Փոփոխիկ պետկազմում նշանակման յենթակա անձանց մասին տեղեկություններ զորա-

*մասերին հաղորդվում է ռազմական կոմիսարիատների կողմից:*

*Զորամասերն այդ տեղեկությունները ստանալով, հայտարարում են հրամաններում պետկազմի անձանց փոփոխիկ կազմում նշանակելու մասին, ցույց տալով, թե այդ անձերից ամեն մեկն ինչ պաշտոնի յե նշանակվում:*

51. *Փոփոխիկ պետակազմով յերկրային զորամասերի ընթացիկ համալրումը, վոր առաջ է գալիս զանազան պատճառներով փոփոխիկ կազմից հեռացում, կատարվում է հոդ. հոդ.* 46–52–*ի կարգով, հոդ.* 46–*ում ցույց տված հաշվառ-մոբիլիզացիոն մարմինների կարգադրությամբ:*

*Ընդ վորում, մի քանի պաշտոնների լրիվ համալրման անհնարինության դեպքում, փոփոխիկ պետակազմով ապահովելը կարելի յե կատարել որենք պարտադիր զինվորական ծառայության մասին հոդ.* 176 *կարգով, փոփոխիկ պետակազմի առանձին անձանց այն ժամկետներով, վոր չանցկենա պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու վերջնակետային տարիքներից:*

52. *Յերկրային զորամասերն ուրիշ (միատեսակ) յերկրային զորամասերի շրջան տեղափոխելու ժամանակ, փոփոխիկ պետակազմով համալրումը կատարվում է մի (հեռացող) զորամասերից մյուսները (ժամանող) փոխադրելու միջոցով:*

## Գլուխ 2. Կրտսեր պետակազմով համալրելը:

53. *Փոփոխիկ կրտսեր հրամատարական կազմով համալրումը կատարվում է բացառապես այն անձանց քանակից, վորոնք վերջացրել են զորական դպրոցները ԲԳԿԲ կադրային կազմում—հետեվյալ հաջորդականությամբ.*

ա) առաջին հերթին յերկրային զորամասերի կադրային կրտսեր պետկազմի անձանց թվից, վորոնք յենթակա յեն իրենց ծառայության (по выслуге) առանց ծառայության ժամկետների ընդհատումի ավարտելուց հետո յերկարատև արձակուրդ գնալ իրենց զորամասերի համալրման շրջանները·

բ) յերկրորդ հերթին մյուս զորամասերի (կադրային և յերկրային) կադրային կրտսեր պետկազմի անձանց թվից, վորոնք արձակված են յերկարատև արձակուրդ և վորոնք մշտական բնակության համար յեկել են յերկրային զորամասերի շրջանները:

54· Կրտսեր հրամանատարական, քաղաքական, վարչական, բժշկական և անասնաբուժական փոփոխիկ պետկազմով համալրումը կատարվում է այն անձանց թվից, վորոնք մինչև յերկարատև արձակուրդ գնալը գրավում եյին ԲԳԿԲ կադրային կազմում համապատասխան պաշտոններ:

55· Կրտսեր տնտեսական և անասնաբուժական փոփոխիկ պետկազմով համալրումը կատարվում է, բացի հոդ· 53-ում ցույց տված համալրման կարգից, և այն անձանց թվից, վորոնք մինչև նրանց յերկարատև արձակուրդ գնալը ԲԳԿԲ կադրային կազմում չեյին գրաղեցնում համապատասխան պաշտոններ, բայց ավարտել են կրտսեր տնտեսական կամ անասնաբուժական կազմի պատրաստության դպրոցները:

Յերկրային զորամասերի կրտսեր փոփոխիկ տնտեսական և անասնաբուժական կազմով համալրումը կատարվում է շրջանների (округ) ռազմա-տնտեսական և ռազմա-անասնաբուժական վարչությունների թվական կարգումների համաձայն:

56· Յերկրային զորամասերում փոփոխիկ կրտսեր պետկազմից պաշտոնների նշանակվում են իսկական զինվորական ծառայության 3, 4 և 5 տա-

րիների կրտսեր պետկազմի անձինք, յերկարատեվ արձակուրդում գտնվողների թվից, ամեն մի տարիքից փոփոխիկ կրտսեր պետկազմի հաստիքային քանակի մեկ-յերրորդի չափով, յուրաքանչյուր տարիքին ավելացնելով 15 տոկոս:

57. 53—55 հոդ. հոդ. ցույց տված անձանց անբավարար լինելու դեպքում, թույլատրվում է Որենք պարտադիր զինվորական ծառայության մասին, հոդ. 42 կարգով բանդ. անել յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում, կրտսեր պետկազմի անձանց իսկական զինվորական ծառայության սահմանված ժամկետներից ավելի, յերեք տարուց վոչ ավելի ժամանակով գրավելով նրանց վարժական հավաքները յերեք ամսից վոչ ավելի ընդհանուր ժամկետով, և ազատելով նրանց ստուգման հավաքներից պահեստում գտնված ժամանակ:

58. Փոփոխիկ կրտսեր պետկազմին պաշտոնների նշանակելը, նույնպես և իսկական զինվորական ծառայության ժամկետը վերջացրածներին պահեստ (запас) արձակելը կատարվում է ամեն տարի աշնանը:

## Գլուխ 3. Սոսկական կազմով համալրելը:

59. Սոսկական փոփոխվող կազմով համալրումը կատարվում է ամեն տարի հերթական զինակոչությունների ժամանակ՝ զինակոչային տարիք ունեցող քաղաքացիների թվից, վորոնք ապրում են համապատասխան յերկրային զորամասերի համալրման շրջաններում:

60. Ամեն տարի յուրաքանչյուր յերկրային զորամաս, հերթական զինակոչությունների ժամանակ, նշանակվում են զինակոչիկներ փոփոխիկ կազմի հաստիքային քանակից քառորդի չափով, նվազումի համար հավելումով, վորն ապահովում է փոփոխիկ կազմով համալրումը,

յեռամսյա ուսուցումն անցկենալուց հետո, գյուղական շրջաններում— 15 տոկոս և քաղաքայիններում— 20 տոկոս:

Ծանոթություն 1.— Յուրաքանչյուր դիվիզիայում նշանակված յենթակաների ճիշտ նորման, հերթական զինակոչությունների ժամանակ, ամեն տարի սահմանվում է ԲԳԿԲ Գլխավոր Վարչության կողմից:

Ծանոթություն 2.— Սույն հոդվածով սահմանվում է զինակոչային տարիքի քանակից դուրս (ավելի) ամեն մի յերկրային զորամասի զինակոչության ժամանակ, սովորողների քանակը (контингент) չատացնելու նպատակով, կարելի յե համալրման շրջաններից զինակոչիկների լրացուցիչ քանակ նշանակել:

61. Յերկրային զորամասերի համալրումների շրջաններում զինակոչումը կատարվում է համաձայն «ԲԳԿԲ հերթական զինակոչությունների ձեռնարկի», այդ աշխատանքում անպայման պետք է մասնակցի համապատասխան յերկրային զորամասի ներկայացուցիչը:

62. Զինակոչիկները յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում նշանակվում են հետևյալ հաջորդականությամբ. սկզբում արտոնություն չունեցողները, իսկ սրանց չբավարարելու դեպքում կարգումը կատարելու համար՝ յերկրորդ կարգով արտոնյալները, ապա յերկրորդ կարգով արտոնյալները և ամենավերջին հերթին առաջին կարգով արտոնվածները:

Յերկրային զորամասերի կադրերում նշանակվում են արտոնություն չունեցողները միայն:

63. Ընդհանուր քանակով փոփոխիկ կազմում նշանակվածները, ըստ հնարավորության, պետք է լինեն մինչև 90 տոկոս գրագետներ, այդ թվում վոչ պակաս 10 տոկոս բանվորներ: Բացի դրանից, նշանակվածների ընդհանուր թվից պետք է

լինեն ՀԿԿ (բ) 1.5 տոկոս անդամներ ու թեկնածուներ և 8 տոկոս ՀԼԿՅԵՄ անդամներ:

Ծանոթություն.— ՀԿԿ (բ) անդամների միջին նորման չհավաքվելու դեպքում, լրացվում է ՀԼԿՅԵՄ անդամներով:

64. Յերկաթգծի և ջրային տրանսպորտի բանվորները և ծառայողները, նույնպես և ՄՊՔՎ աշխատակիցները յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում նշանակման յենթակա չեն:

Վորպես բացառություն, ՃՀԺԿ համաձայնությամբ թույլատրվում է յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում նշանակել ջրային և յերկաթգծի տրանսպորտի բանվորներին և ծառայողներին, վորոնք պահանջում են մասնագիտական պատրաստություն:

65. Փոփոխիկ կազմի բաշխումն ըստ զորամասերի և նրանց ստորաբաժանումների կատարվում է այդ զորամասերի և նրանց ստորաբաժանումների շրջանացման համապատասխան ըստ տերիտորիալ սկզբունքի:

Բացառություն են կազմում ՀԿԿ (բ), ՀԼԿՅԵ Միության անդամները և բանվորները, վորոնց բաշխումը, շրջանների (округ) ՀԶԽ ցուցմունքով, կարող է կատարվել տերիտորիալ սկզբունքից խոտորվելով, նրանց հոդ. 63 ցույց տված նորմաների համաձայն զորամասերը հավասար չափով լրացնելու նպատակներով:

## Գլուխ 4. Նոր կազմակերպումների ժամանակ փոփոխիկ կազմով համալրելը:

66. Նոր կազմակերպումների ժամանակ յերկրային զորամասերը փոփոխիկ կազմով համալրումը կատարվում է.

ա) միջին, ավագ և բարձր պետկազմի անձանց նկատմամբ—հոդ. հոդ. 44-50. ցույց տվածի կարգով.

բ) կրտսեր պետկազմի անձանց նկատմամբ— համաձայն յերեք տարիքների քանակների (КОНТИНГЕНТ) խակական զինվորական ծառայությունն անցածների՝ 3, 4 և 5 տարիքների զորական դըպրոցներն ավարտածների թվից, վորոնք գտնվում են յերկարատև արձակուրդում յերկրային զորամասի համալրման շրջանում ներկա հրահանգի հոդ. 56 կարգով.

գ) սովական կազմի անձանց նկատմամբ— ըստ չորս տարիքային կոնտինգենտների 2, 3, 4 և 5 տարիքների, վորոնք խակական զինվորական ծառայությունն անցել են արտադրական կարգով և ապրում են յերկրային զորամասի համալրման շրջանում:

Այն դեպքում, յերբ առանձին զորամասի համալրման շրջանում, վոր ցույց է տրված սույն հոդվածի «գ» կետում անձանց կատեգորիաները, վում է սովական կազմի զորական ծառայությունն արտադրական կարգով, թույլատրվում է սովական կազմի զորական ծառայողների փոփոխիկ կազմում նշանակել, յերկարատև արձակուրդում գտնվածների թվից:

67. Յերկրային զորամասերը սովական և կրտսեր պետկազմով, նոր կազմակերպումների ժամանակ, համալրման կարգի մասին ցուցմունքներ տրվում են ռազմական շրջանի (округ) շտաբի և համապատասխան ռազմա-շրջանային վարչությունների կողմից. ինչպիսի յեն՝ քաղաքական, սանիտարական և անասնաբուժական:

68. Յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում նշանակվելուց ազատվում են.

ա) մոբիլիզացիայի ժամանակ տարկետումներից օգտվողները, համաձայն տարկետումների համապատասխան հանձնաժողովների վորոշումների.

բ) զինվորական և ռազմականացված պահպանության մեջ գտնվածները.

գ) բարձրագույն.ուսումնական հաստատություններում և տեխնիկումներում սովորողները, վորոնցում անց են կենում բարձր նախազորակոչային պատրաստություն.

դ) քրեական հետախուզությունների, միլիցիայի, ուղղիչ տների, Միացյալ պետական քաղաքական վարչության, յերկաթգծի և ջրային տրանսպորտի աշխատակիցները:

69. Հոդ. 68 ցույց տված հիմնարկությունները մտնողները, փոփոխիկ կազմում նշանակվելուց հետո, յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում իսկական զինվորական ծառայությունն անց կենալուց ազատման յենթակա չեն:

70. Սոսկական և կրտսեր պետկազմի զորական ծառայողների փոփոխիկ կազմում նշանակումը կատարվում է համապատասխան հաշվառման—զորական մասնագիտությունների և պաշտոնի կատեգորիաների, ըստ վորոնց նշանակվածները գտնվում են տեղական զինվորական մարմինների հաշվառման մեջ:

71. Փոփոխիկ սոսկական կազմին պաշտոնի նշանակելը կատարվում է, յուրաքանչյուր տարիքից, փոփոխիկ հաստիքային քանակի 25 տոկոսի չափով, ավելացնելով տարվա իսկական զինվորական ծառայության 2 և 3 տարիքային կոնտենգենտների համար գյուղական վայրերում 15 տոկոս և քաղաքայինում՝ 20 տոկոս, իսկ իսկական զորական ծառայության չորրորդ և հինգերորդ տարիների տարիքային կոնտենգենտների համար գյուղական վայրերում՝ 10 տոկոս և քաղաքայինում՝ 15 տոկոս:

72. Կրտսեր պետ և սոսկական կազմի անձանց ընտրությունը յերկրային զորամասերի փոփոխվող կազմում նշանակելու համար կատարվում է առանձին զորամասերի հրամանատարության կողմից համալրվող զորամասերի քաղմարմինների և տեղական գավառական ռազմական կոմի-

*տարխանների ներկայացուցիչների մասնակցությամբ:*

*Ընտրությունը կատարվում է ըստ տեղական ռազմա-հաշվառքային մարմինների զորական ծառայողների ընդհանուր հաշվառման տվյալների գրավոր նյութերի:*

73· *Տեղեկություններ այն անձանց մասին, վորոնք ընտրված են հոդ· 72-ի կարգով ու յենթակա յեն փոփոխիկ ռոսկական և կրտսեր պետկազմում նշանակվելու, ռազմական կոմիսարիատները հանձնում են համապատասխան զորամասերին:*

*Զորամասերն այդ տեղեկությունններն ստանալով, հայտարարում են հրամաններում ռոսկական և կրտսեր պետկազմին փոփոխիկ կազմում նշանակելու մասին, ցույց տալով, վոր ստորաբաժանումներում և ի՞նչ պաշտոնի յե նշանակվում այդ անձերից ամեն մեկը:*

## Գլուխ 5· Ցերկրային զորամասերի վերաշրջանացման ժամանակ փոփոխիկ կազմով համալրումը:

74· *Ցերկրային զորամասերի համալրումներին շրջանների փոփոխությունների ժամանակ, նոր շրջաններից փոփոխիկ կազմի մեջ նշանակելը կատարվում է սույն հոդվածի 4-րդ գլխում սահմանվածի կարգով:*

75· *Ցերկրային զորամասերի համալրումների շրջանների վոչ մեծ փոփոխությունների ժամանակ, նոր շրջաններից ռոսկական փոփոխիկ կազմով համալրումը կատարվում է, միայն հերթական զինակոչվող տարիքից սկսած: Բարձր տարիքի փոփոխիկ կազմը մնում է զորամասերի ցուցակներում և կանչվում է հավաքների մինչեվ նրանց ԲԳԿԲ պահեստ արձակվելը:*

76· *Ցերկրային զորամասերը մի շրջանից մյուսը տեղափոխման ժամանակ, համալրումը*

կատարվում է փոփոխիկ կազմը մի զորամասի ցուցակներից մյուսի ցուցակների մեջ անցկացնելու միջոցով:

77. Յերկրային զորամասերի բոլորովին նոր շրջան տեղափոխության ժամանակ, վոր կապված չէ հին շրջանի հետ, համալրումը կատարվում է այն սկզբունքներով, ինչպես և նոր կազմակերպման ժամանակ:

## ՀՈԴՎԱԾ VI

## ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ ՁԻԱԿԱԶՄՈՎ, ԳՈՒՄԱԿԱՅԻՆ ՍԱՅԼԵՐՈՎ ՅԵՎ ԼԾԱՍԱՐՔՈՎ ՀԱՄԱԼՐԵԼԸ

78. Յերկրային զորամասերը ձիակազմով, գումակային սայլերով և լծասարքի կադրով համալրումը կատարվում է ԲԳԿԲ զորամասերի կադրերի հետ ընդհանուր հիմունքներով:

79. Փոփոխիկ ձիակազմով, գումակի սայլերով և լծասարքով յերկրային զորամասերի համալրումը զորական ծառայողների առաջին տարվա ծառայության փոփոխիկ կազմի ուսուցման ժամանակ, նույնպես և վարժական և կարճատեվ հավաքների ժամանակ կատարվում է հետևյալ ձեվով.

ա) յերկրային հեծյալ զորամասերի վրա գրանցվող շարքային տիպի ձիերը, վորոնք պատկանում են յերկրային հեծյալ զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողներին և այդ զորական ծառայողների ուսուցմանն և հավաքին իրենց սեփական ձիերով ներկայանալով.

բ) յերկրային զորամասերի վրա գրանցվող և այդ զորամասերին շարքային և հրետանական ձիերի մատակարարումով, նույնպես և պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր հիմնարկություններին, ձեռնարկություններին և

կազմակերպությունների ու առանձին անձանց պատկանող գումակի համար ձիերի, սայլերի և լծասարքի մատակարարումով ցույց տված զորամասերի համալրման շրջաններում.

դ) կամավոր սկզբունքով գումակի ձիեր, սայլեր և ձիասարք վարձելով հիմնարկություններից, ձեռնարկություններից, կազմակերպություններից և մասնավոր անձերից:

80. Երկրային զորամասերի համար ձիեր, գումակի սայլեր և լծասարք գրանցելու, վարձելու և մատակարարելու կարգը, նույնպես և հեծյալ զորամասերի փոփոխակի կազմի ներկայանալն իրենց սեփական ձիով ուսուցմանը, վարժական և կարճատև հավաքներին վորոշվում են. ԲԳԿԲ յերկրային զորամասերը ձիակազմով, գումակի սայլերով և լծասարքերով համալրումի կանոնադրության համապատասխան հոդվածներով և «Հրահանգով» կիրառելով վերահիշյալ կանոնադրության. (Հավելվածներ 6—7):

81. Երկրային հեծյալ զորամասերի փոփոխակի կազմի զորական ծառայողները, վորոնք շարային տիպի ձի ունեն, գրանցված են յերկրային զորամասերի վրա, յեռամսյա ուսուցումը, վարժական և կարճատև հավաքներն անցնում են իրենց ձիերով:

---

# ՀԱՏՎԱԾ VII

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ ՑԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՓՈՓՈԽԻԿ ԿԱԶՄՈՒՄ

### Գլուխ 1. Միջին, ավագ և բարձր փոփոխիկ պետկազմի ծառայության անցնելը:

82. *Ցերկրային զորամասերի միջին, ավագ և բարձր փոփոխիկ պետկազմի զորական ծառայողներն իսկական ծառայությունն անցնում են այդ զորամասերում հինգ տարվա ընթացքում:*

83. *Հոդ.* 82*-ում ցույց տված ժամկետից բացի, փոփոխիկ կազմում կարող են գտնվել պետկազմի անձերից.*

*ա) Որենք պարտադիր զինվորական ծառայության մասին հոդ.* 176 *կարգով յերկրային զորամասերը համալրելու (հոդ.* 51*) համար պետկազմը չբավարարելու դեպքում, փոփոխիկ կազմում բանող արվածները:*

*բ) փոփոխիկ կազմում ծառայությունը շարունակելու համար ցանկություն հայտնողները:*

*Փոփոխիկ կազմում նույն հոդվածում ցույց տված անձանց ծառայության ընդհանուր ժամկետն ութը տարուց չպետք ե անց կենա:*

84. *Հոդ.* 82—83*-ում ցույց տված ժամկետներից անկախ, պետկազմի անձինք կարող են գտնվել յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում վերջնական տարիներից վոչ ավելի, վոր սահմանված ե իսկական զորական ծառայության մեջ գտնվող պետկազմի համար:*

*Սրանից բացառություն կարող են կազմել պահեստի (կամ համաձայն տարիքի պահեստի մեջ տեղափոխելու յենթակաները) պետկազմի անձինք, վորոնք ցանկություն են հայտնում տանել (կամ շարունակել) ծառայությունը յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում:*

85. Փոփոխիկ պետկազմը զորամասերի հրամանատարների (պետերի) կարգադրությամբ կանչվում է (զրավվում է) վարժական հավաքների, զորաշարժերի և ուսումնական պարապմունքների յերկու ամսից վոչ ավելի ժամկետով մի տարվա ընթացքում, իսկ փոփոխիկ ծառայության ամբողջ ժամանակամիջոցում վոչ ավելի, քան 16 ամիս:

Հավաքների միջև յեղած ժամանակամիջոցում փոփոխիկ պետկազմի անձինք իրենց հրամանատարների կողմից կարող են կանչվել առանձին զինվորական հանձնարարություններ և առաջադրություններ կատարելու առանց իր ընակության տեղից և զբաղմունքներից կտրվելու:

Բացառիկ դեպքերում (տարերային աղետներ, բանդիտիզմի տարածվելը և այլն) նուքա զինվիզխանների հրամանատարների կարգադրությամբ կարող են վերադառնալ իրենց զորամասերը և մնալ մինչև կարիքի անցնելը:

Ծանոթություն 1.—Ուսումնական պարապմունքներին կանչելու նպատակահարմարության հսկողությունը հավաքների միջև ընկած ժամանակամիջոցում դրվում է զինվիզխանների հրամանատարների վրա:

Ծանոթություն 2.— Բժշկական և անասնաբուժական փոփոխիկ պետկազմը կարող է զինվորական շրջանների (округ) հրամանատարների հայեցողությամբ կանչվել սպասարկելու համար առաջին տարվա ծառայության փոփոխիկ կազմի զորական ծառայողների վարժական հավաքները, այն պայմանով միայն, վորպեսզի դուրս չգան փոփոխիկ պետկազմի հավաքների վերոհիշյալ ընդհանուր ժամկետներից:

86. Փոփոխիկ պետկազմի հետեվյալ բարձր պաշտոնի համար առաջքաշումը կատարվում է

վկայության (аттестация) կարգով ինչպես իսկական զորական ծառայությունը յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում անցած ժամանակ, այնպես էլ նրա ավարտման ժամանակ:

87. Փոփոխիկ պետկազմին ցածր կատեգորիաների պաշտոնին իջեցնելը կարող է կատարվել միայն վկայության կարգով և բացի այդ, ցածացնել վոչ ավելի, քան մեկ կատեգորիայով:

88. Փոփոխիկ պետկազմի անձինք, վոր յերկու անգամ իրար յետևից վկայված են, վորպես իրենց զբաղեցրած պաշտոններին անհամապատասխան, յենթակա յեն փոփոխիկ կազմից հեռացման, ընդ վորում ընդունում են հաշվառման մեջ վկայություններից հանած հետևությունների համապատասխան:

89. Փոփոխիկ պետկազմի վկայությունը կատարվում է վարժական հավաքները վերջանալուց հետո սկսած յերկրորդ տարվանից. առաջին հավաքից հետո կազմվում են միայն վկայության կարծիքներ, քննելով միաժամանակ յերկրորդ հավաքից հետո տված վկայությունները

## Գլուխ 2. Փոփոխիկ կրտսեր պետկազմի ծառայության անցնելը.

90. Յերկրային զորամասերի փոփոխիկ կրտսեր պետկազմի զորական ծառայողները ԲԳԿԲ կազմերում ծառայության անընդհատ ժամ կետները վերջացնելով իսկական գինվորական ծառայությունը տանում են յերկրային զորամասերում յերեք տարվա ընթացքում, այսինքն՝ վոչ ավելի վերջնակետային ժամկետներից, վոր սահմանված է սովորականների և կրտսեր պետկազմի իսկական գինվորական ծառայության համար:

91. Փոփոխիկ կրտսեր պետկազմին վարժական հավաքների կանչելը կատարվում է նրանց ԲԳԿԲ կազմերից յերկարատեվ արձակուրդ արձակվելուց հետո՝ սկսած յերկրորդ տարուց:

92․ Փոփոխիկ կրտսեր պետկազմին հենց այդ կազմի հետևյալ բարձր պաշտոնի համար առաջքաշելը թույլատրվում է միայն թափուր պաշտոններ լինելու և այդ պաշտոնները գրավելու արժանիքով:

Բարձր պաշտոնների համար առաջքաշումը կատարվում է զորամասի հրամանատարի իշխանությամբ՝ վաշտերի (հեծելավաշտերի, բաժնյակների) հրամանատարների ներկայացնելուց հետո, ոչ շուտ վերջին պաշտոնում մեկ տարի ծառայելուց կամ մեկ վարժական հավաքի մասնակցելուց հետո:

93․ Ցերկրային զորամասերի փոփոխիկ կրտսեր պետկազմի առաջքաշումը, վորոնք հենց այդ զորամասերի կադրային կազմում յերկամյա ծառայության ժամկետն ավարտել են, հետևյալ բարձր պաշտոնին կատարվում է զորամասերի հրամանատարների իշխանությամբ, անկախ փոփոխիկ կազմում վերջին պաշտոնում ծառայած ժամանակից և վարժական հավաքներին մասնակցելուց:

94․ Փոփոխիկ կրտսեր պետկազմին հենց այդ կազմի ցածր պաշտոնին իջեցնելը կամ սովկականի կազմին տեղափոխելը կատարվում է դիվիզիայի հրամանատարի իշխանությամբ, զորամասի հրամանատարի ներկայացնելու դեպքում, հետևյալ դեպքերում.

ա) վարժական հավաքների ժամանակ զբաղված պաշտոնին անհամապատասխան լինելը հաստատված լինելու դեպքում.

բ) կարգապահական կարգով.

Սովկական կազմին իջեցրածները ծառայությունն անցնում են, վերջինների համար սահմանված հիմունքներով:

Ծանոթություն.— Անասնաբուժականներին և սանիտարական հրահանգիչներին պաշտոններ զբաղեցնելու իրավունքից

ղրկելն իրականացվում է ռազմական շրջանների (округ) ռազմա–անասնաբուժական և ռազմա–սանիտարական վարչությունների պետակազմից և թույլատրվում է բացառապես հիշված անձանց անպատրաստության իրենց պաշտոններին հաստատված ժամանակ, որի մասին հաղորդվում է համապատասխան հաշվառման մարմիններին կրտսեր սանիտարական և անասնաբուժական կազմերը հաշվառումից հանելու և սոսկական կազմի մեջ հաշվի ընդունելու համար:

95․ *Երկրային զորամասերի փոփոխիկ կրտսեր պետակազմի զորական ծառայողները բարձրագույն ուսումնական դպրոց և տեխնիկումներ մտնելու դեպքում, որտեղ դրված է բարձր նախակոչային պատրաստության անցնելը, փոփոխիկ կազմի ցուցակներից հանվում են և հետագայում իսկական զորական ծառայությունն անցնում են հատված 10–րդի կարգով Օրենք պարտադիր զինվորական ծառայության մասին:*

## Գլուխ 3․ Փոփոխիկ սոսկական կազմի ծառայության անցնելը․

96․ *Երկրային զորամասերի փոփոխիկ կազմում սոսկական կազմի զորական ծառայողների իսկական զինվորական ծառայությունը տևում է հինգ տարի:*

97․ *Իսկական զորական ծառայության մեջ գտնվելու սկիզբը հաշվվում է զինակոչային հանձնաժողովների ընդունման օրը:*

*Իսկական զինվորական ծառայության ժամկետ հաշվվում են զինակոչի տարուց հետո յեկած հունվարի մեկից:*

98. Այն քաղաքացիները, վորոնք ընդունված են խնկական զորական ծառայության յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում, ծառայության առաջին տարին ընթացքում պահվում են (содержатся) զորական մասերում, հատուկքից դուրս, իսկ ծառայության յերկրորդ տարուց նշանակվում են վորոշ հատուկքային պաշտոնների:

99. Ծառայության առաջին տարում յերկրային զորամասերի բոլոր տեսակ զորքերի ասկյական փոփոխիկ կազմի զորական ծառայողները կանչվում են յեռամսյա ուսուցման, վորը կատարվում է զորամասերին կից կայաններում, վոր սահմանված են ռազմական շրջանների (округ) շտաբների կողմից:

100. Յեռամսյա ուսուցումը վերջացնելուց հետո, առաջին տարվա ծառայության ասկյական փոփոխիկ կազմի բոլոր զորական ծառայողները հանդիսավոր խոստում են տալիս, իսկ վորևե պատճառով այդ ժամանակ հանդիսավոր խոստում չտվողները—յերկրորդ տարվա ծառայության վերջանալիս:

101. Հանդիսավոր խոստումը տալուց հետո, յերկրային զորամասի հրամանատարը (պետը) թեկնածուների ընտրություն է կատարում, այն զորական ծառայողների թվից, վորոնք անցել են յեռամսյա ուսուցումը, փոփոխիկ կազմի հատուկքային պաշտոններին նշանակելու համար սահմանված հավելումով (հոդ. 60):

Հատուկքային պաշտոնների նշանակելու համար թեկնածուների ընտրությունը կատարվում է կուսակցական և բանվորական շերտի համար հոդ. 63-ի կարգով նորմաները, գրագիտության աստիճանի և ընտանեկան-գույքային դրության արտոնությունների հերթականության պահպանմամբ:

102. Առաջին տարվա ծառայության փոփո–

խիկ սոսկական կազմի զորական ծառայողները, վորոնք ջնջված են փոխարինելու հաստիքային պաշտոնները և տեղական հավելումն արձակվում են յեռամսյա ուսուցումը վերջացնելուց հետո արձակուրդ ըստ իրենց ընակության տեղի:

Դուրս մնացածները (В ИЗЛИШКЕ) հոդ. 42 կարգով՝ Որենք պարտադիր զինվորական ծառայության մասին, տեղափոխվում են արտադրորային կարգով խակական զորական ծառայության անցածների կատեգորիան:

103. Զորս կրար հաջորդող տարիների ընթացքում յերկրային զորամասերի փոփոխիկ սոսկական կազմի ամեն տեսակի զորքերը կանչվում են վարժական հավաքների:

Վարժական հավաքների տևականությունը սահմանվում է.

ա) հրաձգային և հրետանական մասերում, նույնպես զինինժեներական հիմնարկություններում— հինգ ամսից վոչ ավելի, իսկ յուրաքանչյուր առանձին տարում յերկու ամսից վոչ ավելի.

բ) հեծելական զորամասերում—ութ ամսից վոչ ավելի, իսկ յուրաքանչյուր առանձին տարում յերկու ամսից վոչ ավելի.

գ) մասնագիտական զորամասերում (դրահապատ, կապի և սակրավորական)—վեց ամսից վոչ ավելի, իսկ ամեն մի առանձին տարում յերկու ամսից վոչ ավելի.

դ) բացի դրանից, հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի ամեն տեսակ զորքերի զորական ծառայողներն ամեն տարի կարող են կանչվել, ըստ նրանց ընակության տեղի, կարճատև հավաքների՝ յոթ որվանից վոչ ավելի տևականությամբ յուրաքանչյուր տարում.

ե) մնացած ամբողջ ժամանակ յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառա-

յողներն առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ և հինգերորդ տարիների իսկական ծառայության ընթացքում գտնվում են արձակուրդում, վարժ ժամանակ նրա կարող են կանչվել իրենց հրամանատարների կողմից կատարելու առանձին զինվորական հանձնարարություններ և առաջադրություններ՝ առանց կտրվելու իրենց բնակության տեղից և զբաղմունքներից:

Բացառիկ դեպքերում (տարերային աղետ, բանդիտիզմի տարածման և այլն) հիշյալ զորական ծառայողները կարող է լինել դիվիզիայի հրամանատարի կարգադրությամբ վերադարձվեն արձակուրդից իրենց զորամասերը և պահվեն այնտեղ մինչև կարիքի անցնելը:

Յերկարատև արձակուրդավորների թվից փոփոխիկ կազմի զորական ծառայողներին վարժական հավաքներին կանչելը կատարվում է ԲԳԿԲ կարգերից նրանց յերկարատև արձակուրդ արձակելու յերկրորդ տարվանից սկսած:

104. Ամեն տարի այն ժամկետներին, վորոնք սահմանված են Միութենական ՀԹԽ կողմից շրջանների (ОКРУГ) հրամանատարների կարգադրությամբ, սակական փոփոխիկ կազմի զորական ծառայողները, վորոնք վերջացրել են իսկական զորական ծառայության սահմանված (հոդ. 96) ժամկետները, պահեստի մեջ են արձակվում՝ առաջին հերթին: Միաժամանակ ավագ հերթական տարիքները պահեստի մեջ արձակելով, կատարվում է հաստիքային պաշտոններին և տակային հավելման նշանակումն առաջին տարվա ծառայության սակական կազմի հաստիքից դուրս զորական ծառայողներից, վորոնք ջոկված են հոդ. 101 կարգով, յեռամսյա ուսուցումը վերջացնելուց հետո:

105. Յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները բարձրագույն ուսումնական դպրոցներ և տեխնիկումներ մտնե-

յու դեպքում, որտեղ գրված է բարձր նախակոչային պատրաստության անցնելը, հանվում են փոփոխիկ կազմի ցուցակներից և հետագայում պարտադիր զինվորական ծառայությունն անցնում են հոդված 10-րդի կարգով՝ Օրենք պարտադիր զինվորական ծառայության մասին:

## Գլուխ 4. Փոխահաշվումներ (перечисления). փոխադրումներ և գործուղումներ.

106 Առանձին զորամասի ներսում փոփոխիկ կազմի զորական ծառայողների մի ստորաբաժանումից մյուսը փոխահաշվումներ, որպես կանոն, չի թույլատրվում: Որպես բացառություն, առանց զորամասի ստորաբաժանումների համալրման սկզբունքները խախտելու, հարգելի պատճառների առկայության դեպքում, փոխահաշվումը կարող է թույլատրվել զորամասի հրամանատարի կարգադրությամբ:

107. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների մի յերկրային զորամասից մյուսը փոխադրությունները թույլատրվում են միջհավաքների ժամանակաշրջաններում և կատարվում են.

ա) յերկրային զորամասի համասեռ զորամասի շրջան փոխադրվելու դեպքում.

բ) փոփոխիկ կազմի զորական ծառայողները այլ վայրեր մշտապես բնակվելու համար տեղափոխվելու դեպքում, որոնք (վայրերը) մտնում են հենց նույն դիվիզիայի ուրիշ համասեռ յերկրային զորամասի համալրման շրջանի մեջ.

գ) փոփոխիկ պետկազմի միջնորդության դեպքում.

դ) ծառայության (պաշտոնեական) նկատառումներով:

Ծանոթություն.— Սույն հոդվածի «գ» և «դ» կետերի գործողությունները սովական և կրտսեր պետկազմի անձանց վրա չի տարածվում:

108. Միևնույն դիվիզիայի սահմաններում տեղափոխություններն իրականացվում են դիվիզիայի հրամատարի թույլտվությամբ, շրջանի (округ) սահմաններում այլ դիվիզիաների յերկրային զորամասերը տեղափոխությունները կատարվում են շրջանի հրամատարության կարգադրությամբ, իսկ շրջանի սահմաններից դուրս —ԲԿԳԲ Գլխավոր Վարչության կարգադրությամբ:

Ծանոթություն.— Ավագ և միջին փոփոխիկ բժշկական և անասնաբուժական կազմի տեղափոխությունները դիվիզիայի սահմաններում կատարվում են շրջանի (округ) ռազմա - սանիտարական կամ ռազմա—անասնաբուժական վարչության պետի կարգադրությամբ, ըստ պատկանելության, իսկ կրտսեր փոփոխիկ բժշկական կամ անասնաբուժական կազմի—դիվիզիաների բժիշկների կարգադրությամբ:

109. Փոփոխիկ կազմի անձինք ցանկության հայտնած դեպքում, կարող են փոխադրվել ԲԳԿԲ կադրերը:

110. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների գործուղումները պաշտոնական գործերով իր զորամասի սահմաններից դուրս թույլատրվում են բացառապես զորական ծառայողների վարժական հավաքներին զորամասի կազմում գտնված ժամանակ, վերոհիշյալ գործուղումները կատարվում են այն ընդհանուր հիմունքներով, որ սահմանված են կադրային կազմի զորական ծառայողների համար, և այն ժամկետներով, վորոնք վարժական հավաքների համար սահմանվածներին չեն գերազանցում:

## Գլուխ 5. Բնակավայրի փոխելը.

111. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների բնակավայրի փոխելը թույլատրվում և նր-

րանց արձակուրդում գտնված ժամանակ միջհավաքների ժամանակաշրջանում :

112. Բնակավայրի փոխելը թույլատրվում է հետեվյալ դեպքերում.

ա) ծառայության կամ աշխատանքի պատճառով զորամասերի համալրման շրջանի սահմաններից դուրս փոխադրության.

բ) ընտանիքի բնակության նոր տեղ փոխադրության, վորի գլուխը կամ անդամը հանդիսանում է զորական ծառայողը.

գ) առողջական դրության պատճառով բնակավայրը փոխելու անհրաժեշտության.

դ) զորամասի համալրման շրջանի սահմաններից դուրս ուսումնական դպրոցներն ու տեխնիկումներ մտնելու :

Ցույց տված բոլոր դեպքերում զորական ծառայողները պարտական են վոչ ուշ քան յերեք որ առաջ մինչև հավաքը հայտարարություն տալ այդ մասին իրենց զորամասի հրամատարի (պետի) անունով ցույց տալով իրենց ընտրած նոր բնակավայրը և գնալու պատճառները, հաստատված տեղական մարմինների կողմից :

113. Այն դեպքերում, յերբ փոփոխվի կազմի զորական ծառայողները, զորամասի շրջանից ժամանակավոր բացակայելով աշխատանք փնտրելու համար, գտել են մշտական աշխատանք և վերջնականապես տեղավորվել են նոր բնակավայրում, նրանք պարտական են այդ մասին հայտարարություն տալ զորամասին, կցելով փաստաթղթերը, վորոնք հավաստում են նրանց մըշտական ծառայության կամ աշխատանքի մտնելու և բնակավայրի փոխելու մասին :

Հայտարարությունը պետք է տալ վոչ ուշ քան յերեք որ առաջ մինչև հերթական վարժական հավաքը :

114. Փոփոխվի սովորական և կրտսեր կազմի զորական ծառայողները, ուրիշ յերկրային զո-

*բաժանելի շրջաններ մշտական բնակության համար գնացածները, յենթակա յեն իսկական զորական ծառայության մնացած ժամկետների համար նշանակվելու վերջինների փոփոխիկ կազմում:*

115. *Սովորական կրտսեր փոփոխիկ պետ կազմի զորական ծառայողները, վորոնք գնացել են մշտապես բնակվելու այն շրջաններում, վորոնք ընդգրկված չեն յերկրային կազմակերպումներով, յենթակա յեն հոդ. 42 կարգով՝ Որենք պարտադիր զորական ծառայության մասին, փոխահաշման տարածքային կարգով ուսուցման անցածների կատեգորիայում, իսկ յերկարատև արձակուրդից փոփոխիկ կազմում նշանակվածները— փոխհաշվման յերկարատև արձակուրդավորների կատեգորիայում:*

## Գլուխ 6. Կարճատև արձակուրդներ և ժամանակավորապես հեռանալը.

116. *Յեռամսյա ուսուցման և վարժական հավաքներն անցկենալու ժամանակ, փոփոխիկ կազմի զորական ծառայողները կարող են արձակվել կարճատև արձակուրդներ հետևյալ հատուկ հարգելի պատճառները յեղած դեպքում.*

*ա) մերձավոր ազգականների (հոր, մոր, կնոջ, յերեխաների) կամ ընտանիքի գլխավորի մահը կամ լուրջ հիվանդությունը.*

*բ) տարերային աղետները, յեթե նրանք տվյալ զորական ծառայողի տնտեսությանը կպել են (վնասել են).*

117. *Կարճատև արձակուրդները վերապահվում են զորամասի հրամանատարի իշխանությանը՝ 10 որից վոչ ավելի ժամանակով, հաշվելով դրա մեջ և գնալ գալու ժամանակը:*

118. *Արձակուրդում գտնված ժամանակ (հավաքների միջև) վոչ մի տեսակ սահմանափակումներ իրենց մշտական բնակության վայրից ժամանակավորապես այլ տեղ գնացող փոփոխիկ կազմի զորական ծառայողների համար չեն սահ-*

մանվում, մինչև իր շրջանի (գավառի) սահմաններից մի ամսից ավելի ժամանակով դուրս գնալու համար պահանջվում է տեղական ռազմա-հաշվառային մարմիններում (ռազմական գործավարություններում, շրջանային գործադիր կոմիտեներում, քաղաքային միլիցիայի բաժանմունքներում) կամ գյուղական խորհուրդներում գրանցել դուրս գնալը:

119. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների ժամանակավորապես հեռանալը (հոդ. 118) գրանցելու համար մշտական բնակության վայրից իրենց դուրս գնալուց առաջ, նույն տեղը վերադառնալու դեպքում և ժամանակավոր գտնված տեղը ժամանելիս և մեկնելիս պարտական են ներկայանալ իրենց մշտական և ժամանակավոր բնակության տեղի ռազմա-հաշվառման մարմիններին ցուցակագրվելու:

120. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներից իրենց մշտական բնակության վայրից ժամանակավորապես դուրս գնացածները, ուսուցման կամ վարժական հավաքի սկսվելու մասին ծանուցագիր ստանալով, պարտական են ներկայանալ ժամանակին իրենց զորամասի կազմին:

## Գլուխ 7. Յեռամսյա ուսուցումն և հավաքներն անցնելուց ազատվելն և հետաձգումները (տարկետումները).

121. Յեռամսյա ուսուցման փոփոխիկ կազմում անցկենալուց հերթական զորակոչային տարիքն ապատելը, վորպես կանոն, չի թույլատրվում:

Հիվանդության առկայության դեպքում, յերբ անհնար է դարձնում իր հասակակիցների հետ յեռամսյա ուսուցման համար ներկայանալու, վորը պետք է հաստատվի պետական ծառայության մեջ գտնված բժշկի կողմից, թույլատրվում է առաջին տարվա ծառայության սոսկական կազմի զորական ծառայողներին կանչել հե-

տեվյալ տարին հերթական կրտսեր տարիքի հետ միասին։

122․ Առաջին տարվա ծառայության փոփոխիկ սովորական կազմի զորական ծառայողները, վորոնք ուսուցումից ազատվել են բժշկական հանձնաժողովի կողմից, յեռամսյա ուսուցումը մի ամսից վոչ պակաս ժամկետում անցնելու դեպքում, կանչվում են հետեվյալ տարին, ուսուցման մնացած ժամանակի համար կրտսեր հերթական տարիքի հետ։

123․ Փոփոխիկ կազմի զորական ծառայողները յեռամսյա ուսուցումից և վարժական հավաքներից ազատվում են առժամանակ, անհրաժեշտաբար․

ա) խորհուրդներում ընտրական իրավունքներն իրականացնելու համար և խորհուրդներում ընտրական պաշտոնների նկատմամբ պարտականություններ կատարելու համար,

բ) մասնակցելու համար վորպես ներկայացուցիչ համագումարներին, կոնֆերենցիաներին և ժողովներին, վորոնք հրավիրվում են խորհրդային իշխանության մարմինների կողմից։

գ) մասնակցելու համար դատական հիմնարկությունների աշխատանքին վորպես ժողովրդական ատենակալներ, զինվորական արիբունալների ժամանակավոր անդամներ, հասարակական մեղադրողներ․

դ) ներկայանալու համար դատական հիմնարկություններին և քննչական մարմիններին վորպես մեղադրյալներ, վկաներ, փորձագետներ, թարգմանիչներ կանչվելու դեպքում․

ք) մասնակցելու համար վորպես ներկայացուցիչներ կոնֆերենցիաներին և ժողովներին, վորոնք հրավիրված են հասարակական կազմակերպությունների կողմից—յուրաքանչյուր առանձին դեպքում զորամասի հրամանատարի հատուկ թույլտվությամբ։

124․ Փոփոխիկ կազմի զորական ծառայողնե-

մանվում, միայն իր շրջանի (գավառի) սահմաններից մի ամսից ավելի ժամանակով դուրս գընալու համար պահանջվում է տեղական ռազմահաշվառային մարմիններում (ռազմական գործավարություններում, շրջանային գործադիր կոմիտեներում, քաղաքային միլիցիայի բաժանմունքներում) կամ գյուղական խորհուրդներում գրանցել դուրս գնալը:

119. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների ժամանակավորապես հեռանալը (հոդ. 118) գրանցելու համար մշտական բնակության վայրից իրենց դուրս գնալուց առաջ, նույն տեղը վերադառնալու դեպքում և ժամանակավոր գըտնված տեղը ժամանելիս և մեկնելիս պարտական են ներկայանալ իրենց մշտական և ժամանակավոր բնակության տեղի ռազմա-հաշվառման մարմիններին ցուցակագրվելու:

120. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներից իրենց մշտական բնակության վայրից ժամանակավորապես դուրս գնացածները, ուսուցման կամ վարժական հավաքի սկսվելու մասին ծանուցագիր ստանալով, պարտական են ներկայանալ ժամանակին իրենց զորամասի կազմին:

## Գլուխ 7. Յեռամսյա ուսուցումն և հավաքներն անցնելուց ազատվելն և յետաձգումները (տարկետումները).

121. Յեռամսյա ուսուցման փոփոխիկ կազմում անցկենալուց հերթական զորակոչային տարիքն ապատելը, վորպես կանոն, չի թույլատրվում:

Հիվանդության առկայության դեպքում, յերբ անհնար է դարձնում իր հասակակիցների հետ յեռամսյա ուսուցման համար ներկայանալը, վորը պետք է հաստատվի պետական ծառայության մեջ գտնված բժշկի կողմից, թույլատրվում է առաջին տարվա ծառայության սոսկական կազմի զորական ծառայողներին կանչել հե-

տեսյալ տարին հերթական կրտսեր տարիքի հետ միասին:

122. Առաջին տարվա ծառայության փոփոխիկ սոսկական կազմի զորական ծառայողները, վորոնք ուսուցումից ազատվել են բժշկական հանձնաժողովի կողմից, յեռամսյա ուսուցումը մի ամսից ոչ պակաս ժամկետում անցնելու դեպքում, կանչվում են հետեվյալ տարին, ուսուցման մնացած ժամանակի համար կրտսեր հերթական տարիքի հետ:

123. Փոփոխիկ կազմի զորական ծառայողները յեռամսյա ուսուցումից և վարժական հավաքներից ազատվում են առժամանակ, անհրաժեշտորեն.

ա) խորհուրդներում ընտրական իրավունքներն իրականացնելու համար և խորհուրդներում ընտրական պաշտոնների նկատմամբ պարտականություններ կատարելու համար,

բ) մասնակցելու համար վորպես ներկայացուցիչ համագումարներին, կոնֆերենցիաներին և ժողովներին, վորոնք հրավիրվում են խորհրդային իշխանության մարմինների կողմից:

գ) մասնակցելու համար դատական հիմնարկությունների աշխատանքին վորպես ժողովրդական ատենակալներ, զինվորական տրիբունալների ժամանակավոր անդամներ, հասարակական մեղադրողներ.

դ) ներկայանալու համար դատական հիմնարկություններին և քննչական մարմիններին վորպես մեղադրյալներ, վկաներ, փորձագետներ, թարգմանիչներ կանչվելու դեպքում.

ե) մասնակցելու համար վորպես ներկայացուցիչներ կոնֆերենցիաներին և ժողովներին, վորոնք հրավիրված են հասարակական կազմակերպությունների կողմից—յուրաքանչյուր առանձին դեպքում զորամասի հրամատարի հատուկ թույլտվությամբ:

124. Փոփոխիկ կազմի զորական ծառայողնե-

րը, վորոնք առողջապահական գրությամբ կարիք են զգում ազատվելու պարապմունքներից 7 որից ավելի ժամանակով (ստացիոնար կամ բուժարանական բժշկության համար) կարող են զորամասի հրամանատարի (պետի) կարգադրությամբ ազատվել վարժական հավաքն անցնելուց և ուղարկվել քաղաքացիական բուժական հիմնարկությունները, իրենց բնակության տեղում:

Փոփոխիկ կազմի զորական ծառայողները, վորոնք կանչվում են յեռամսյա ուսուցման և կարիք ունեն բժշկվելու գնալու, այդ դեպքերում ուղարկվում են ռազմա-բուժական հիմնարկությունները և առողջանալուց հետո շարունակում են ուսուցումը:

125․ Փոփոխիկ կազմի զորական ծառայողները, վորոնց նկատմամբ յեռամսյա ուսուցման կամ վարժական հավաքների ներկայանալու ժամանակ կամ հավաքներն անցնելու ժամանակաշրջանում կասկած է առաջ գալիս նրանց պետաքականության մասին զինվորական ծառայությունը տանելում, ուղարկվում են ռազմա-բժշկական հանձնաժողովները նույնպիսի կարգով, վորը սահմանված է ԲԳԿԲ կադրային կազմի համար:

126․ Յեռամսյա ուսուցման և վարժական հավաքներին ներկայանալուց (յետաձգումները կարող են թույլատրվել միայն վորպես բացառություն հետևյալ դեպքերում.

ա) կատարածելու հատուկ խնդիրներ, վորոնք համապետական նշանակություն ունեն և վորոնք հաստատված են համապատասխան պետական մարմինների կողմից.

բ) ուսումնական դպրոցները մտնելու քննությունների տալու դեպքում ներկայացնելու համապատասխան փաստաթղթեր:

Ծանոթություն․ Շրջանների ՀՌԽ իրավունք և վերապահվում հատուկ բացառիկ դեպքերում վարժական հավաքներից յետա-

ձգումներ թույլատրել նաև բացի «ա» և «բ» կետերում հիշված դեպքերից:

127. Փոփոխելի կազմի զորական ծառայողները, վորոնք կարող ունեն արտոնություն կամ յետաձգումներ ստանալու հերթական վարժական հավաքն անցնելուց, պարտական են վոչ ուշ քան յերեք օր առաջ մինչև հավաքի սկիզբն այդ մասին հայտարարություն տալ իրենց զորամասի հրամանատարին (պետին) կցելով փաստաթղթեր, վորոնք վկայում են արտոնման կամ յետաձգման անհրաժեշտությունը:

Միջնորդության հետևանքների մասին տեղեկությունների չստանալը, փոփոխելի կազմի զորական ծառայողներին վարժական հավաքներին ժամանակին ներկայանալուց չի ազատում:

Ծանոթություն. Յեռամսյա ուսուցման և վարժական հավաքներին ներկայանալուց յետաձգումների միջնորդությունները այն անձանց համար, վորոնք հատուկ խնդիրներ են կատարում, ներկայացվում են յերկրային (краевой) և շրջանային (окружной) գործադիր կոմիտեների միջոցով:

128. Հերթական վարժական հավաքներն անցնելուց արտոնություններ կամ յետաձգումներ թույլատրվում են առանձին զորամասի հրամանատարի (պետի) կողմից, վորը մինչև յեռամսյա ուսուցման կամ վարժական հավաքների սկիզբը պարտական է տեղեկացնել միջնորդողներին թույլատրված արտոնությունների կամ յետաձգումների կամ նրանց մերժելու մասին:

129. Վարժական հավաքն անցնելուց յետաձգումներն այն դեպքերում, վոր նախատեսնված են հոդ. 126 կարող են թույլատրվել ամբողջությամբ կամ ժամանակավոր, և, վորպես կանոն, զորամասի փոփոխելի կազմում զորական ծառայողի գտնված ամբողջ ժամանակվա համար վոչ ավելի մի անգամից:

130. Ցեռամսյա ուսուցման և վարժական հավաքների ներկայանալուց յետաձգումները կարող են թույլատրվել 10 օրից վոչ ավելի ժամանակով:

131. Մասնակիորեն այս կամ այն պատճառներով վարժական հավաքն անցնելուց ազատվածները, նույնպես և հավաքից ուշացածները կարող են ուսուցում անցնելու համար կանչվել իրենց զորամասերի հրամատարների (պետերի) կարգադրությամբ հենց նույն տարում, մնացած ժամանակների համար իրենց զորամասի կազմի մեջ:

Պետկազմի անձինք կարող են կանչվել հենց նույն ժամկետներին նախակոչակային պատրաստություն անցկացնելու համար:

## Գլուխ 8. Ցեռամսյա ուսուցման և վարժական հավաքներին չներկայանալու և ուշացման պատճառների հարգելիությունը.

132. Փոփոխիկ կազմի զորական ծառայողները վորոնք չեն կարողացել ժամկետին հարգելի պատճառներով ներկայանալ յեռամսյա ուսուցմանն և վարժական հավաքներին, իրենց զորամասի հրամատարին (պետին) ներկայացնում են փաստաթղթեր, վորոնք վկայում են չներկայանալու պատճառների հարգելիությունը:

133. Ցեռամսյա ուսուցումից և վարժական հավաքներից ուշացումների կամ չներկայանալու հարգելի պատճառներ համարվում են.

ա) անձնապես ներկայանալուն արգելք հանդիսացող հիվանդությունը, հաստատված պետական ծառայության մեջ գտնված բժշկի կամ բուժշկի ոդնականի կողմից.

բ) ազատությունից՝ դատարանի դատավճռով կամ քննական մարմինների վորոշմամբ, զրկված տեղերում գտնվելը.

գ) տարերային բնույթի արգելքներ (հեղեղում, գետերի վարարում, հաղորդակցության ճանապարհների փչացում և այլն) վկայականներ ներկայացնելու պայմանով, վորոնք տրված լինեն շրջանային, վոլոստային (և նրանց համապատասխանող) գործադիր կոմիտեների, յերկաթուղու և ջրային տրանսպորտի վարչությունների կողմից, այդ արգելքները հաղթահարելու անհընարինության մասին:

Ծանոթություն. *Ծայրագավառների սակավ բնակչություն ունեցող տեղանքներում տեղական գինվորական վարչության մարմինները շրջանային* (ОКРУГНЫМИ), *գավառական (և նրանց համապատասխանող) գործադիր կոմիտեների հետ համաձայնվելով կարելի յե թույլ տալ, վոր անձնապես ներկայանալուն արգելք յեղող հիվանդության մասին վկայականներ տան, գյուղական (և նրանց համապատասխանող) խորհուրդները:*

---

## ՀԱՏՎԱԾ VIII

## ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

### Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ.

134. *Յերկրային զորամասերում պատրաստությունը բաղկանում և կադրային և փոփոխիկ կազմերի ուսուցումից և դաստիարակությունից:*

*Կադրային կազմի պատրաստությունն ընդհանուր խնդիրներ ունի ԲԳԿԲ կադրերի պատրաստության հետ և ընդգրկում է.*

*ա) կադրային պետկազմի կատարելագործելը.*

բ) սոսկական կազմի կադրերի և զորական դպրոցների կուրսանտների ուսուցումը:

135. Փոփոխիկ կազմի պատրաստությունն ընդգրկում է.

ա) Նախակոչային մի տարիքի ուսուցումը.

բ) փոփոխիկ սոսկական կազմի զորական ծառայողների առաջին տարում իսկական զինվորական ծառայության յեռամսյա ուսուցումը.

գ) փոփոխիկ սոսկական կազմի զորական ծառայողների մնացած չորս տարում իսկական զինվորական ծառայության վարժական հավաքները.

դ) փոփոխիկ հրամկազմի գիտելիքների կատարելագործումն և խորացումը.

ե) փոփոխիկ կազմի զորական ծառայողների ռազմական, ռազմա-քաղաքական, սանիտարական և անասնաբուժական պատրաստությունը միջհավաքների ժամանակաշրջանում:

136. Նախակոչային պատրաստությունը հանդիսանում է մարտիկի պատրաստության առաջին աստիճանը: Նախակոչային պատրաստության անցկացման կարգը որոշվում է «Նախակոչային պատրաստության մասին հրահանգով»:

137. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների ռազմական և ռազմա-քաղաքական պատրաստությունն ու դաստիարակությունը միջհավաքների ժամանակաշրջաններում իրականացվում են սույն «Հրահանգի» հատված IX կարգով:

138. Նախակոչային պատրաստությունը, մարտական պատրաստությունը, քաղաքական դաստիարակությունը, սանիտարական և անասնաբուժական պատրաստությունը յերկրային զորամասերում կատարվում են ըստ ԲԳԿԲ գլխավոր վարչության, Պուռ-ի, Ռազմա-սանիտարական և Ռազմա-անասնաբուժական վարչությունների հրատարակած պլանների, ծրագրերի և ցուցմունքների:

## Գլուխ 2. Առաջին տարվա ծառայության սովորական փոփոխիկ կազմի զորական ծառայողների յեռամսյա ուսուցումը.

139. Առաջին տարվա ծառայության մեջ սովորական փոփոխիկ կազմի զորական ծառայողների յեռամսյա ուսուցումը պետք է նպատակ ունենա պատրաստել ամբողջապես կատարյալ մարտիկ, վոր ընդունակ լինի կատարելու փոքր զորական ստորաբաժանումների կազմում մարտական խնդիրներ և դաստիարակել նրանում մարտիկ-քաղաքացու հատկություններ, վոր պատրաստ լինի պաշտպան կանգնելու ԽՍՀՄ:

140. Յեռամսյա ուսուցումը տեղի յե ունենում չարային զորամասերում միայն:

Սովորական փոփոխիկ կազմի զորական ծառայողները, վորոնք նշանակված են թիկունքի հիմնարկությունները համալրելու համար, յեռամսյա ուսուցումն անցնում են համասեռ չարային զորամասերի կազմում (հրետանական կրանքինը (պարկ)—հրետանական գնդում, ճարտարագիտական պարկինը—սակրավոր վաշտում, պարենավորման և սանիտարական հիմնարկություններինը—հրաձգային գնդերում):

Սովորական փոփոխիկ կազմի զորական ծառայողները, վորոնք նշանակված են պաշարային պաշտոնները բռնելու թիկունքի հիմնարկությունները համալրելու համար, առաջին յերկու ամսին ուսուցումն անցնում են չարային ստորաբաժանումներում համազորական ծրագրով, իսկ յերրորդ ամսին—ըստ մասնագիտության:

Գայտառների պաշտոնի համար հատուկ նշանակված յերկրային զորամասերի փոփոխիկ սովորական կազմը մեկուկես ամիս ուսուցումն անցնում է չարքում, իսկ մնացած մեկուկես ամսին պատրաստվում է պայտելու գործին համապատասխան զորամասերում:

## Գլուխ 3. Վարժական հավաքների խնդիրները.

141. *Վարժական հավաքները նպատակ ունեն (հավաքել) զորական ստորաբաժանումների և զորամասերի պատրաստության ամբողջությամբ, փոխադարձ ծանոթությունն և ուսուցումը ղանազան տեսակ զորքերի միասնական գործողություններին:*

*Վարժական հավաքներին քաղաքական աշխատանքը նպատակ ունի փոփոխիկ կազմի զորական ծառայողների ռազմա-քաղաքական դաստիարակության խորացումն և նրանցում մարտիկ-քաղաքացու հատկությունների զարգացումը, որը պատրաստ լինի պաշտպան կանգնելու ԽՍՀՄ-ին:*

142. *Ուսուցումը կատարվում է այն զորական ստորաբաժանումների կազմում, որում հատիքով հաշվվում է փոփոխիկ կազմի զորական ծառայողը:*

## Գլուխ 4. Փոփոխիկ պետկազմի պատրաստությունը.

143. *Փոփոխիկ պետկազմի պատրաստության խնդիրն է ռազմական գիտելիքների կատարելագործումն և խորացումը նրանց կադրային պետկազմի համապատասխան պաշտոնը գրավելու գիտելիքների մակարդակին հասցնելու նպատակով:*

144. *Փոփոխիկ պետկազմի պատրաստությունը բաղկանում է՝*

*ա) միջին, ավագ և բարձր պետկազմի նախնական պատրաստությունից վարժական հավաքներից առաջ.*

*բ) վարժական հավաքներից.*

*գ) վարժական հավաքների միջև յեղած ժամանակամիջոցում կատարելագործվելուց:*

145. *Վարժական հավաքներից առաջ նախնական պատրաստության ժամանակ կատարվում է փոփոխիկ պետկազմի ռազմական և ռազմա-քաղաքական պատրաստության տեսական և գործնական կատարելագործումը։*

146. *Միջհավաքների ժամանակաշրջաններում կատարվում է ռազմական գիտելիքների թարմացում բառ իր մասնագիտության հատուկ պարապմունքների միջոցով առանց ընակության տեղից և զբաղմունքներից կտրվելու։*

# ՀԱՏՎԱԾ IX

## ՓՈՓՈԽԻԿ ԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (ՄԻՋՀԱՎԱՔՆԵՐԻՆ)

### Գլուխ 1. Հիմնական խնդիրները.

147. *Հավաքների միջև յեղած աշխատանքի հիմնական խնդիրը հանդիսանում է փոփոխիկ կազմի ռազմական և ռազմա-քաղաքական ուսուցման կատարելագործումը, վորն ապահովում է մշտական աղդեցությունը յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի վրա կադրային, հրամանատարական և քաղաքական կազմի կադրի և կուսակցական կազմակերպությունների կողմից։*

148. *Հավաքների միջև յեղած աշխատանքը հանդիսանում է վարժական հավաքներին անցկացրած աշխատանքի շարունակությունը։*

*Հավաքների միջև յեղած աշխատանքի կոնկրետ խնդիրները հանգում են՝*

*ա) ռազմական և ռազմա-քաղաքական գիտելիքների հմտությունների ամրացմանն ու զար-*

զացմանը, վորոնք փոփոխիկ կազմը ձեռք է բե-րում վարժական հավաքներին.

բ) փոփոխիկ կազմում պահպանելու մարտա-կան և բարոյա-քաղաքական միախոնածություն և զգացմունք իր զորամասին և Կարմիր բանակին պատկանելիության համար.

գ) սոսկական փոփոխիկ կազմի զորական ծառա-յողների ընդհանուր անգրագիտության և կիսա-գրագիտության վերացման.

դ) փոփոխիկ պետկազմի ռազմական և ռազ-մա-քաղաքական գիտելիքների թարմացման և նրա ռազմա-գիտական մտքի ըստ ամենայնի զար-գացման.

ե) սոսկական և փոփոխիկ պետկազմերի հա-սարակական կազմակերպություններում ակտիվ աշխատանքի ներգրավման, հատկապես Օսոավիա-քիմի կազմակերպություններում:

149. Հոդ. 148 բացատրված խնդիրների հա-մաձայն, փոփոխիկ կազմի հավաքների միջև յե-ղած պատրաստությունը բաժանվում է պարտա-դիր և կամավոր կարգով անցկացնելու մեջ:

## Գլուխ 2. Աշխատանքի ղեկավարու-թյունը.

150. Հավաքների միջև յեղած աշխատանքի ընդհանուր ղեկավարությունն իրականացվում է յերկրային զորամասերի հրամանատարության և քաղմարմինների կողմից, մասնակցությամբ տե-ղական ղեկավար կուսակցական, խորհրդային, արհեստակցական, կոմյերիտական և Օսոավիա-քիմի կազմակերպությունների:

151. Փոփոխիկ կազմի ռազմական ու-սուցման կազմակերպումն ինչպես պարտադիր, նույնպես և կամավոր կարգով, ռազմական աշ-

խատանքի ծրագրերի և պլանների կազմելը դըր-վում է հրամատարության և նրան ստորադըրյալ շտաբների վրա։

152. Փոփոխիկ կազմի ուսումա-քաղաքական ուսուցման և դաստիարակության կազմակերպու-մը, հասարակական կազմակերպությունների ակ-տիվ աշխատանքին նրան ներգրավումը, քաղաշ-խատանքի ծրագրերի և պլանների կազմումը դըր-վում է քաղմարմինների վրա։

153. Հավաքների միջև յեղած աշխատանքն ամիջականորեն անցկացնում ինչպես պարապներ, նույնպես և կամավոր կարգով դըրվում է համա-պատասխան զորամասերի և ստորաբաժանումների վրա տեղական կուսակցական, հասարակական և խորհրդային մարմինների աջակցությամբ և մաս-նակցությամբ։

154. Շրջանում (район) աշխատանքի ամբի-ջական ղեկավարման և անցկացման համար վո-րոշ ժամանակաշրջանում տեղի յեն ունենում վաշ-տերի կադրերի ամբողջ կազմի կամ կադրային կազմի առանձին անձերի ուսուցումը (ներեյր) վաշտային (և նրանց համապատասխանող) համա-լրման շրջանները։

## Գլուխ 3. Փոփոխիկ պետկազմի պատ-րաստությունը.

155. Փոփոխիկ պետկազմի պատրաստու-թյունը հավաքների միջև յեղած ժամանակաշըր-ջանում անց է կացվում հետևյալ միջոցով՝

ա) զորամասում ռազմական և ռազմա-քաղա-քական ուսուցման մեջ ներգրավման.

բ) գիշերային դասընթացների սպասարկման.

գ) անհատական և խմբակային առաջադրում-ների ինքնակրթության համար ԲԳԿԲ հիմնական ռազմական խնդիրների և քաղաքական աշխատան-

քի վերաբերյալ խաղաղ և պատերազմի ժամանակ․

դ) հրահանգավորման աշխատանքի հարցերի նկատմամբ փոփոխիկ կազմի մեջ։

156․ Փոփոխիկ պետկազմի գիշերային դասընթացներով ապատարկումն իրականացվում է Ռուսավխաքիմի հետ միասին փոփոխիկ և պահեստի պետկազմի համար յեղած դասընթացների միջոցով։

157․ Փոփոխիկ պետկազմին անհատական և խմբական առաջադրումներ տրվում են գնդի շտաբի և քաղապարատի կողմից համազորական հավաքների ժամանակաշրջանում։ Հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում զորամասի շտաբն և քաղապարատը սիստեմատիկաբար խորհրդակցական օգնություն են ցույց տալիս փոփոխիկ պետկազմին անհատական առաջադրումները մշակելու մեջ։

158․ Փոփոխիկ պետկազմի հրահանգավորումը փոփոխիկ սոսկական և կրտսեր պետկազմի մեջ աշխատանք անցկացնելու նկատմամբ անց է կացվում համապատասխան վաշտերի հրամատարների և քաղղեկների կողմից։

## Գլուխ 4․ Կրտսեր պետ և սոսկական փոփոխիկ կազմի պատրաստությունը․

159․ Ցերկրային զորամասերի կրտսեր պետ և սոսկական փոփոխիկ կազմի պատրաստությունը հավաքների միջև անց է կացվում հետևյալ կերպով․

ա) անհատական առաջադրումներ տալով,,

բ) ստուգողական միօրյա հավաքներ անցկացնելով։

գ) անգրագիտության վերացմամբ,

) ներգրավելով մասսայական ռազմական աշ–

խտտանքի և քաղաքացիական քաղլուսհիմնարկությունների ռազմական գիտելիքների խմբակները և Ռոսավիաքիմի կազմակերպությունները·

գ) ժողովներ և կոնֆերենցիաներ անցկացնելը·

ե) ագիտասայլերի (ագիտասահնակների) գյուղ ուղարկելը·

ը) կարմիր բանակային ակտիվի հրահանգավորումը, հատկապես ղեկավար ակտիվի աշխատանքի միջհավաքային հարցերի մասին։

160․ Ստուգողական միորյա հավաքները, անհատական առաջադրումներն և անգրագիտության վերացումը փոփոխիկ կազմի զորական ծառայողների մեջ անցկացվում պարտադիր կարգով։

Մնացած բոլոր միջհավաքային աշխատանքը անցկացվում հասարակական-կամավոր կարգով։

## Գլուխ 5․ Ստուգողական—միորյա հավաքները․

161․ Միորյա հավաքներն իրենց նշանակությամբ ունեն՝ ա) ստուգելու անհատական առաջադրումների կատարումն և նորերի տալը, բ) վարժական (մարզական) հրաձգությունների անցկացնելը, գ) քաղզրույցների անցկացնելը և դ) փոփոխիկ կազմի զորական ծառայողների հրահանգավորումը միջհավաքային աշխատանքի նպատակով, որը անց է կացվում կամավոր կարգով։

162․ Միորյա հավաքներն անց են կացվում յերկրային զորամասերի հրամանատարության կարգադրությամբ։

Յուրաքանչյուր տարվա միջհավաքային ժամանակաշրջանից հետո անց են կացվում մինչև յոթ միորյա հավաքներ։

163. Միորյա հավաքներն անց են կացվում վաշտային շրջանում միջին հաշվով ոչ ավելի 11 կմ. շառավղով, յուրաքանչյուրը 7 ժամից ոչ ավելի տևողությամբ: Նպատակահարմար է միջհավաքային ժամանակաշրջանից հետո անցկացնել յերեք հավաք—մեկ հավաքը միջհավաքային ժամանակաշրջանի սկզբին, յերկրորդը միջին և յերրորդը վերջին:

Միորյա հավաքների ժամկետները համաձայնեցվում են տեղական (վոլոստային կամ շրջանային) գործադիր կոմիտեների հետ:

Ծանոթություն. 1) Վաշտի շրջանի շառավիղը 11 կիլոմետրից ավելի լինելու դեպքում հավաքներն անց են կացվում դասակով:

2) Առաջարկված կարգը հանդիսանում է որինակ (ТИПОВОЙ), բայց ոչ պարտադիր: Դիվիզիաների հրամանատարությունը, նայած տեղական պայմաններին, իրավունք է վերապահվում փոխել այն, սակայն, չժողովել հավաքներն ամսվա մեջ մի անգամից շուտ:

164. Միորյա հավաքներից ազատվում են փոփոխիկ կազմի այն անձինք, վորոնք գնացել են բնակավայրերից դուրս աշխատանքի (ОТХОЖИЙ ПРОМЫСЕЛ) և միայնակները, վորոնք ապրում են հավաքի շրջանից դուրս: Նրանց համար անհատական պարապմունքների կատարման ստուգման յեղանակներ սահմանվում են գնդերի հրամանատարության կողմից ըստ իրենց հայեցողության:

165. Միորյա հավաքների ծրագիրը (պարապմունքների ցուցակ) կազմվում է (մշակվում է) վաշտերի և առանձին խմբերի հրամանատարների և քաղղեկների կողմից որինակելի ծրագրերի հիման վրա, վոր մշակել են գնդերի շտաբներն և քաղապարատները:

166. Միորյա հավաքներին կանչվելը կա—

*տարվում է յերկրային զորամասի հրամատարու-
թյան հրամաններով: Փոփոխիկ կազմին տեղե-
կացնելը միորյա հավաքին ներկայանալու ժա-
մանակի և տեղի մասին կատարվում է տեղական
(շրջանային, վոլոստային) գործադիր կոմիտե-
ների միջոցով հրամաններ հրապարակելու և ան-
հատական ծանուցագրերի միջոցով:*

167. *Միորյա հավաքներն անց են կացվում
կադրի հրամատարական և քաղաքական կազմի
ուժերով, վորոնք ուղարկվում են իրենց համա-
լրման շրջաններն ըստ հնարավորության վաշ-
տերի լրիվ կազմով: Միորյա հավաքներն անց-
կացնելու համար կարելի յե կանչել նույնպես և
փոփոխիկ պետկազմին:*

168. *Վարժական (մարզական) հրաձգու-
թյուններ անցկացնելու համար ոգտագործում են
զորամասի զենքը, վոր ուղարկված է վարժա-
կայաններին ամեն մի վաշտին* 20 *հրացան և* 1
*գնդացրի հաշվով:*

## Գլուխ 6. Անհատական առաջադրու-
## թյուններ.

169. *Անհատական առաջադրությունները
նպատակ ունեն ամրացնելու ռազմական և ռազ-
մա-քաղաքական գիտելիքները, վորոնք փոփո-
խիկ կազմի զորական ծառայողները ձեռք են բե-
րել հավաքների ժամանակ, և միացնել ինքնու-
րույն աշխատանքի ունակությունները իր ռազ-
մական և ռազմա-քաղաքական վորակավորումը
բարձրացնելու համար:*

170. *Առաջադրություններ տրվում են փո-
փոխիկ կազմի բոլոր դրույթ զորական ծառա-
յողներին զասակների հրամատարների միջոցով,
վաշտերի հրամատարների և քաղղեկների և ա-
ռանձին խմբերի պետերի ցուցմունքով:*

Առաջադրությունների մշակման և բաշխման ժամանակ պետք է հաշվի առնել զինվորական մասնագիտությունը, ծառայության ժամանակը փոփոխիկ կազմում, ընդհանուր և քաղաքական գրագիտության աստիճանը և փոփոխիկի կազմի զորական ծառայողների ընդունակությունը:

171. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներին առաջադրություններ տրվում են ընդհանուր հավաքները վերջանալուց առաջ, իսկ յերկրային զորամասերում առաջին տարվա ծառայության անցնողներին—3-ամսյա հավաքները վերջանալուց առաջ: Առաջադրությունների բաշխման ժամանակ կատարվում է ծանոթություն կատարված առաջադրությունների մշակման և հանձնման կարգի հետ:

172 Տվյալ տարվա միջհավաքային ամբողջ ժամանակաշրջանում փոփոխիկ կազմի զորական ծառայողներից յուրաքանչյուրին տրվում են յերեք առաջադրություններ, ընդվորում հետևյալ առաջադրությունը տալիս են նախորդը կատարելուց հետո միայն:

Առաջադրության կատարելու ժամկետը—մի ամսից պակաս չէ:

Ծանոթություն.—Առաջադրությունը պետք է պարունակի ռազմական և քաղաքական տարրեր:

173. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներին բաժանված առաջադրությունների հաշվառումը կատարվում է դասակի հրամատարների կողմից առաջադրություններն առանձին հաշվառման գրքում անցկացնելու միջոցով:

174. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներին տված առաջադրությունների մշակումը (կատարումը) կատարվում է, հիմնականում, խմբային կարգով:

Կադրի հրամատարական և քաղաքական կազմի վրա դրվում է, Օսոավիաքիմի մարմինների աջակցությամբ, փոփոխիկ կազմի խորհրդակցական օգնություն ցույց տալու անհատական առաջադրությունների մշակման մեջ:

175. Անհատական առաջադրությունների կատարման ստուգումը կատարվում է կադրի հրամատարական և հրամատար-քաղաքական կազմի համալրման շրջանները դուրս յեկած ժամանակաշրջանում նախակոչային պատրաստության և փոփոխիկ կազմի մերյա հավաքներն անցկացնելու համար զրույցների միջոցով: Գրավոր աշխատանքներ թույլատրվում են միայն վորպես բացառություն:

## Գլուխ 7. Անգրագիտության վերացումը.

176. Անգրագիտության վերացումը ռուսական փոփոխիկ կազմի և նախակոչիկների մեջ միջհավաքների ժամանակաշրջանում համաձայն այն ցուցմունքների, վորոնք կան Լուսժողկոմատի գծով, և գործադրվում են Լուսբաժնի (Քաղլուսվարի) տեղական մարմինների կողմից:

## Գլուխ 8. Մասսայական աշխատանք, վոր անցկացվում հասարակական կամավոր կարգով.

177. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների մեջ միջհավաքային աշխատանքը, վոր անց է կացվում հասարակական-կամավոր կարգով, կենտրոնացվում է Օսոավիաքիմի տեղական կազմակերպություններում (ռազմական գիտելիքների խմբակներում) և քաղլուսավորական հիմնարկություններում. ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում և կարմիր անկյուններում (գյուղում և արտադրական ձեռնարկություններում):

178. Երկրային զորամասերի պետկազմը պետք է հասնի այն բանին, որպեսզի քաղաքացիական քաղլուսավարական հիմնարկությունների և Ոսոավիաքիմի ամբողջ ռազմական աշխատանքը, համալրման շրջանում, առաջին հերթին պետք է նկատի ունենա փոփոխիկ կազմի զորական ծառայողների և նախակոչիկների առավելագույն ընդգրկումը:

179. Միջհավաքային աշխատանքի կազմակերպումն և նրա անցկացնելուն քաղաքացիական քաղլուսավարական հիմնարկություններում և Ոսոավիաքիմի կազմակերպություններում ամեն կերպ աջակցելը, կադրի հրամատարական և քաղաքական կազմի կարեվորագույն խնդիրներից մեկն է: Կադրի հրամատարական և քաղաքական կազմի վրա դրվում է.

ա) քաղլուսավարական հիմնարկությունների և Ոսոավիաքիմի աշխատակիցներին հրահանգումը ռազմական աշխատանքի կազմակերպչական բովանդակության և մեթոդների հարցերով:

բ) աջակցել կազմակերպելու մասսայական աշխատանք, ռազմական գիտելիքների խմբակներ, ֆիզկուլտի խմբակներ, առաջին օգնության խմբակներ և ներգրավել նրանցում, որպես ակտիվ մասնակիցներ փոփոխիկ կազմի զորական ծառայողներին և նախակոչիկներին.

գ) լայն կերպով տարածել զինվորական թերթեր, ժուռնալներ և մասսայական ռազմաքաղաքական գրականություն և ամեն կերպ աջակցել նրանց տարածմանը փոփոխիկ կազմի զորական ծառայողների, նախակոչիկների և բնակչության մեջ.

դ) ռազմական գործի և Կարմիր բանակի ծառայության հարցերի վերաբերյալ տեղեկատու աշխատանքի կազմակերպումը.

ե) ռազմական անկյունների կազմակերպումը

քաղաքացիական քաղլուսավորական բոլոր հիմնարկություններում:

Ծանոթություն 1.—Գյուղերի և ձեռնարկությունների կարմիր անկյուններում կազմակերպվում են ռազմական բաժիններ:

Ծանոթություն 2.—Փոխօգնության կազմի զորական ծառայողների համար ֆիզկուլտի ինքնուրույն խմբակներ չեն կազմվում: Այնտեղ, որտեղ այդ խմբակներից չկան, փոխօգնության կազմը պետք է դրանց կազմակերպման նախաձեռնողը լինի:

180. Ռազմական անկյունները հանդիսանում են ռազմական գիտական ագիտացիայի և պրոպագանդայի կենտրոն և ռազմական աշխատանքն անցկացնելու տեղ:

181 Ռազմական անկյուններում սարքավորվում են ռազմավարժանքներ կարևորագույն հարցերի մասին, կախվում են ռազմական պլակատներ, լոզունգներ, Կարմիր բանակի առաջնորդների և հերոսների նկարները, կենտրոնացվում են ուսումնական պիտույքներն և ուրիշ նյութերը, որոնք անհրաժեշտ են մասսայական աշխատանքի համար և ռազմական գիտելիքների խմբակների համար:

Ամբողջ նյութերը պետք է համապատասխանեն ընթացիկ աշխատանքի պահանջներին և սխտեմատիկորեն թարմանան:

182. Միջհավաքային աշխատանքն անց է կացվում թե մասսայական ձևերով և թե ռազմական գիտելիքների խմբակների և խմբերի աշխատանքի միջոցով:

183. Փոխօգնության կազմի զորական ծառայողների մեջ մասսայական աշխատանքի բովանդակության մեջ մանում են՝

ա) միջազգային և ներքին դրության, յերկրի պաշտպանության խնդիրների և Կարմիր բանակի

շինարարության ընթացիկ հարցերի լուսաբանումը․

բ) Ոսոավիաքիմի, Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերությունների ժողովրդականացումը․

գ) ռազմական գիտելիքների և մարտական ունակությունների վարժության (մարզանքի) լայն տարածումը․

դ) ֆիզիքական կուլտուրայի զարգացումը․

դ) Կարմիր բանակի և իր զորամասի մարտական պատմության պրոպագանդան․

ե) ռազմա-քաղաքական գրականության և թերթերի տարածումը․

ը) առողջապահական գիտելիքների և հմտությունների տարածումը, նույնպես և առաջին բժշկական օգնություն ցույց տալու ունակությունը․

թ) տեղեկատու աշխատանք։

184․ *Մասսայական միջհավաքային աշխատանքի առանցքը հանդիսանում են՝*

ա) ռազմա-քաղաքական աշխատանքը, բ) հրաձգային գործը և գ) ֆիզիքական կուլտուրան։

185․ *Մասսայական աշխատանքը տարվում է* սիստեմատիքորեն ամենատարբեր ձևերով աշխատանք (զինվորական գրքի և թերթի վրա, պատի թերթերում ռազմական բաժիններ, զրույցներ և զեկուցումներ, յերկրի պաշտպանության և Կարմիր բանակի յերեկոներ, մարտական հիշողությունների յերեկոներ, ռազմական և սպորտական մրցակցություններ և մրցություններ, խաղեր, խնդիրներ, մոդել շինելը, էքսկուրսիաներ զինվորական մասերում, ռադիոսիրողներ, ռազմական կինոֆիլմեր, դիտողական ագիտացիայի զանազան ձևեր, ռազմական անկյուններ և այլն)։

186․ *Ռազմական գիտելիքների խմբակները* հանդիսանում են ինքնագործ (ինքնուրույն) հա-

սարակական կազմակերպություններ, որոնք կառուցված են փոփոխիկ կազմի ակտիվ զորական ծառայողների և նախակոչիկների սիստեմատիկորեն ընդգրկված խորացած աշխատանքի հիման վրա:

187. Ռազմական գիտելիքների խմբակները կազմակերպվում են ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում և ձեռնարկություններում այնտեղ, որտեղ կա փոփոխիկ կազմի և նախակոչիկների ակտիվ կորիզ և որտեղ խմբակն ապահովված է մշտական ղեկավարությամբ:

Ծանոթություն.—Որտեղ ցույց տված պայմանները չկան, խմբակների փոխարեն կարող են կազմվել կարճ ժամանակվա խմբեր փոփոխիկ կազմի զորական ծառայողներից:

188. Ռազմական գիտելիքների խմբակները կազմակերպվում են պետկազմի կարգի, տեղական կուսակցական, կոմյերիտական և Ռոսավիաքիմի կազմակերպությունների կամ հենց իրենց փոփոխիկների կազմի զորական ծառայողների և նախակոչիկների նախաձեռնությամբ:

189. Ռազմական գիտելիքների խմբակների հիմնական խնդիրներ հանդիսանում են.

ա) փոփոխիկ կազմի զորական ծառայողների և նախակոչիկների վարժական հավաքներին ստացած ռազմական գիտելիքների և հմտությունների ամրացումն և զարգացումը.

բ) աջակցություն անհատական առաջադրությունները մշակելու մեջ.

գ) դաստիարակել ունակություն, կոլեկտիվ և անհատական ձևով ուսումնասիրելու ռազմական և քաղաքական գիտելիքները.

դ) ներգրավել իրենց անդամներին ակումբի, խրճիթ-ընթերցարանի և Ռոսավիաքիմի բջիջի մասսայական ռազմական աշխատանքի մեջ.

դ) ռազմական գիտելիքների և յերկրի պաշտպանության խնդիրների, շինարարության պրոպագանդայի և Կարմիր բանակի պատմության տարածումը աշխատավոր բնակչության լայն մասսաների մեջ:

190. Ռազմական գիտելիքների խմբակները, վորոնք կազմված են փոփոխիկ կազմի զորական ծառայողներից և նախակոչիկներից, աշխատում են համաձայն ծրագրերի, վոր հրատարակված են Օսոավիաքիմի Կենտրոնական Խորհրդի կողմից:

191. Հրամատարական և քաղաքական կազմի կադրի վրա դրվում է հոգ. 190 ցույց տված ծրագրերի հարմարեցումը տեղական պայմաններին, պահանջներին և խմբակի անդամների չափերին, Օսոավիաքիմի տեղական կազմակերպությունների և ռազմական գիտելիքների խմբակների ղեկավարների հետ միասին:

192. Ռազմական գիտելիքների խմբակների ներքին կազմակերպությունը վորոշվում է հատուկ կանոններով:

193. Ռազմական անհրաժեշտ գույք, զենք, պարագաներ և գրականություն ձեռք բերելու ծախքերը, հրաձգային ձգարան (տիր), մարմնամարզական և սպորտական քաղաքիկներ (городков), ռազմական աշխատանք անցկացնելը կազմակերպելը—կատարվում է ի հաշիվ տեղական բյուջեյի հատկացումների կամ արհեստակցական կազմակերպությունների կուլտուրական ֆոնդից բյուջետային նախահաշիվների կարգով՝ պահպանելու համար ակումբները, խրճիթընթերցարանները և կարմիր անկյունները, նույնպես և ի հաշիվ Օսոավիաքիմի կազմակերպությունների բաժին հանած միջոցներից, վորի համար յերկրային զորամասերի հրամատարությունը պետք է համապատասխան միջնորդություն հարուցի:

194. Երկրային զորամասերի հրամանատարական և քաղաքական կազմի վրա դրվում է՝

ա) համապատասխան մարմինների հետ միասին վորոշել ծախսերի հոդվածները, համաձայն միջհավաքային աշխատանքի պլանների.

բ) բանակցել համապատասխան մարմինների հետ լրացուցիչ միջոցներ հատկացնելու մասին.

գ) մասնակցել տեղերում ռազմական աշխատանքի հայթայթման կարգի հետազոտությանը:

195. Ռազմական գույքի, զենքերի պարագաների և գրականության պահպանելը, նորոգումն և դուրս հանելը կատարվում է տվյալ քաղլուսավարական հիմնարկությունների և Ոսոավիաքիմի կազմակերպությունների համար ընդհանուր կարգով:

## Գլուխ 9. Աշխատանքի շարժական ձևերը

196. Աշխատանքի շարժական ձևերը կատարվում են ագիտ սայլակներ (ագիտսահնակներ, ագիտավտոմոբիլներ) և շարժական ռազմական ցուցահանդեսներ և շարժական կինո-ռադիո յերկրային զորամասերի համալրման շրջաններն ուղարկելու միջոցով:

197. Աշխատանքի շարժական ձևերը կազմակերպվում են յերկրային զորամասերի հրամանատարության և քաղմարմինների կողմից քաղաքացիական, կուսակցական և քաղլուսավարական կազմակերպությունների և Ոսոավիաքիմի կազմակերպությունների աջակցությամբ:

198. Աշխատանքի շարժական ձևերի հիմնական խնդիրն է աջակցել միջհավաքային աշխատանքի զարգացմանը, գյուղում փոփոխիկ կազմի զորական ծառայողների և նախակոչիկների մեջ:

Ծանոթություն.— Ագիտ սայլակների (ագիտ սահնակներ) հետ համընթաց կարող

են օգտագործվել ըստ տեղական կուսակցական կազմակերպությունների տված առաջադրությունների գյուղում ավելի կարևոր քաղաքական կամպանիաներ անցկացնելուն նպաստելու համար։

199. Ագիտասյլակը (ագիտսահնակը, ագիտավտոմոբիլը) գյուղերում անցկացնելու յե ըստ իր հետևության առաջուց վորոշված ընթացուղու (մարշրուտի) հետևյալ աշխատանքը.

ա) փոփոխիկ կազմի զորական ծառայողների և նախակոչիկների կապի ամրացումը յերկրային զորամասերի հետ, փոփոխիկ կազմի, նախակոչիկների և համալրման շրջանների ուսումնասիրությունը.

բ) մասսայական ռազմական աշխատանքի զանազան ձևերը (հրաձգության, գրույցների, զեկուցումների և այլն), ռազմական գիտելիքների խմբակներում գրավելը, ոգնություն փոփոխիկ կազմին անհատական առաջադրությունները մշակելու մեջ.

գ) ռազմական աշխատանքի հարցերի հրահանգավորումը խրճիթվարներին, ռազմական անկյունների վարիչներին, Օսոավիախեմի բջիջների քարտուղարներին, ռազմական գիտելիքների խմբակների ղեկավարներին, կուսակցական և կոմյերիտական բջիջներին, ուսուցչության և գյուղի մյուս հասարակական աշխատողներին.

դ) ռազմական գիտելիքների նոր խմբակների Օսոավիախեմի բջիջների, ռազմական անկյունների կազմակերպումը.

զ) վաճառքի և բաժանորդագրության միջոցով, մասսայական ռազմական գրականության, ժուրնալների և լրագրերի տարածումը։

Ծանոթություն.— Ցերկրային զորամասի հրամանատարության և քաղմարմինների հայեցողությամբ ագիտասյլակի (ա-

գիտասահնակի) վրա կարող են ուրիշ խնդիրներ դրվել։

200. *Շարժական ռազմական ցուցահանդեսները համալրման շրջաններն են ուղարկվում ագիտսայլակի վրա (ագիտ սահնակների, ագիտ ավտոմոբիլների) կամ առանձին, ըստ հայեցողության յերկրային զորամասերի հրամատարների և քաղմարմինների։*

201. *Ագիտսայլակի (ագիտսահնակների, ագիտավտոմոբիլների) ընտրած յուրաքանչյուր աշխատակցի վրա դրվում է պարտականությունների վորոշ շրջան, նրա մասնագիտության համեմատ։*

202. *Ագիտսայլակն (ագիտսահնակները, ագիտավտոմոբիլը) ապահովվում է զենքի անհրաժեշտ քանակով (սահմանված տիպարի և փոքրակալիբր), փամփուշտներով, գրենական պիտույքներով, գրականությամբ, լրագրերով և այլ գույքով՝ յերկրային զորամասի տեղական կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների միջոցներից։*

Ծանոթություն.— *Ըստ հնարավորության, ագիտսայլակի (ագիտսահնակի) վրա դրվում է շարժական կինո-սարքավորում ռազմական ֆիլմերով և ռադիո-ընդունիչներով։*

203. *Փոփոխիկ կազմը և նախակոչիկները, վորոնք ապրում են ագիտսայլակի (ագիտսահնակների, ագիտավտոմոբիլի) գնացած յերթուղու վրա, նախապես տեղեկացվում են տեղական կազմակերպությունների միջոցով սայլակի գալու ժամանակի մասին։*

204. *Տեղափոխության միջոցներն և ձիակազմը տրվում են յերկրային զորամասի հրամատարության կողմից կամ վարձվում են տեղական*

կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների բաց թողած միջոցնե-րով։

## Գլուխ 10. Ժողովներ և կոնֆերենցիաներ

205. *Փոփոխիկ կազմի զորական ծառայողնե-րին ծանոթացնելու համար կարևորագույն ընթա-ցիկ քաղաքական անցուդարձերի, յերկրային զո-րամասերի խնդիրների և յերկրային զորամասերի հրամատարության և քաղմարմինների միջահա-վաքային աշխատանքի հետ, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների հետ միա-տեղ, հրավիրվում են փոփոխիկ կազմի ժողով-ներ և կոնֆերենցիաներ։*

206. *Փոփոխիկ կազմի զորական ծառայողնե-րի ժողովները կազմակերպվում են համալրման շրջանի վաշտային կենտրոնում, նաև գյուղերում ըստ բնակության տեղի։*

207. *Փոփոխիկ կազմի զորական ծառայողնե-րի գնդային կոնֆերենցիաները կազմակերպվում են 2 անգամից վոչ հաճախ միջհավաքային ժամա-նակաշրջանից հետո։*

Ծանոթություն.— *Հավաքների միջև, վորպես կանոն, գումակային կոնֆերեն-ցիաներ չեն կազմակերպվում։*

208. *Փոփոխիկ կազմի զորական ծառայողնե-րի դիվիզիոնական կոնֆերենցիաներ միջհավա-քային ժամանակաշրջանում չեն կազմակերպվում։*

209. *Ներկայացուցչական նորման, օրակարգն և ժողովների ու կոնֆերենցիաների ժամկետները սահմանվում են յերկրային զորամասերի հրամա-տարության և քաղմարմինների կողմից տեղա-կան կուսակցական և խորհրդային կազմակերպու-թյունների հետ միատեղ։*

210. *Ժողովների և կոնֆերենցիաների ժամանակի և տեղի մասին տեղեկացնելը կատարվում է յերկրային զորամասի և տեղական մարմինների կողմից:*

## Գլուխ 11. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներից ակտիվ պատրաստելը

211. *Միջհավաքային աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է հայտաբերել և դաստիարակել գործնական աշխատանքում. ա) ռազմական անկյունների վարիչներին, բ) ռազմական գիտելիքների խմբակների ղեկավարներին, գ) Օսոավիաքիմի բջիջների աշխատակիցներին, դ) լիազորներին:*

212. *Հոդ.* 211 *ցույց տված անձանց ընտրությունը կատարվում է յերկրային զորամասերի հրամանատարների և քաղմարմինների կողմից համազորական հավաքներում և միջհավաքային ժամանակաշրջանում, տեղական կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների համաձայնությամբ փոփոխիկ պետկազմի քանակից, պահեստի պետկազմից և սովորական փոփոխիկ կազմի զորական ծառայողների ամենից ավելի զարգացածներից,, պահեստի կարմիր բանակայիններից, առաջին հերթին ՀԿԿ (բ) կամ ՀԼԿՑԵՄ անդամներից:*

213. *Միջհավաքային աշխատանքի համար ակտիվի պատրաստությունն և նրա հրահանգավորումը կազմակերպման, պահպանման և ռազմական աշխատանքի մեթոդիկայի հարցերով կատարվում է.*

*ա) հատուկ սեմինարներում, վոր կազմակերպվում են յերկրային զորամասերի հավաքների ժամանակ.*

*բ) Օսոավիաքիմի, քաղլուսվարի և արհեստ-*

տակցական միությունների հետ միատեղ պարբերաբար հրավիրվող շրջանային (գավառական) և շրջանային (վոլոստնոյ) դասընթացների խորհրդակցությունների ժամանակ.

գ) անմիջական հրահանգման միջոցով հրամատարական և քաղաքական կազմի կադրի համալրան շրջանը դուրս գալու ժամանակ.

դ) հրամատարական և քաղաքական կազմի կադրի իր ստորաբաժանումների ակտիվիստների հետ ունեցած գրավոր ցուցմունքների և կանոնավոր գրագրությունների միջոցով:

214. Պետկազմի կադրի և փոփոխիկ կազմի միջև մշտական կապի կազմակերպման և պետկազմի կադրին ու տեղական մարմիններին աջակցելու համար, վարժական հավաքները կազմակերպելու և միջհավաքային աշխատանքն անցկացնելու համար, փոփոխիկ կազմից առանձնացվում են հատուկ անձինք, վորոնց հատկացվում է լիազորներ անունը:

215. Լիազորները նշանակվում են առանձին զորամասի հրամատարության կողմից փոփոխիկ պետկազմի քանակից, փոփոխիկ կազմի ամենից ակտիվ շարքայիններից (բատրակա-չքավորական մասից և միջակներից և, առավելապես, ՀԿԿ (բ)-ի և ՀԼԿՑԵՄ-ի անդամներից:

Ծանոթություն.—Լիազորների թեկնածությունները համաձայնեցվում են տեղական կուսակցական և խորհրդային մարմինների հետ:

216. Լիազորները նշանակվում են յերկրային զորամասերի համազորական հավաքների ժամանակաշրջանում մինչև հետևյալ հավաքները ժամկետով: Լիազորների կազմը հայտարարվում է զորամասի հրամանում:

Ծանոթություն.—Առանձին զորամասի հրամատարությունն իր ստորադրյալ ստո-

րաբաժանումների պետկազմին ներկայացնելու դեպքում կամ տեղական կուսակցական և խորհրդային մարմինների հայտարարության դեպքում իրավունք է վերապահվում լիազորներին փոխելու, նրանց անհամապատասխանության դեպքում, և մինչև ժամկետի լրանալը:

217. Լիազորների թիվը վորոշվում է յերկրային զորամասի հրամանատարության կողմից նայելով առանձին բնակավայրերի թվին և արտադրական ձեռնարկությունների տվյալ զորամասի համալրման շրջանում:

Ծանոթություն.— Բնակավայրերում և ձեռնարկություններում փոփոխիկ կազմի զորական ծառայողների վոչ մեծ քանակ (10 մարդուց քիչ) յեղած դեպքում լիազորներ չեն նշանակվում:

218. Լիազորներն իրենց աշխատանքի մասին ղեկավար ցուցմունքներ ստանում են իրենց ստորաբաժանումների պետկազմի կադրից:

## Գլուխ 12. Համալրման շրջանի ուսումնասիրությունը

219. Իր զորամասի համալրման շրջանի դիտենալը, վորի ուսումնասիրությունը կազմում է միջհավաքային աշխատանքի տեսակներից մեկը, յերկրային զորամասերի կադրային պետկազմի համար հանդիսանում է պարտադիր:

220. Ուսումնասիրության ամբողջ կարգը պետք է անմիջապես կապվի յերկրային զորամասերի գործնական աշխատանքի հետ, ընդգրկելով այն հարցերը միայն, վորոնք անմիջական հարաբերություն ունեն զորամասի շինարարության հետ և փոփոխիկ կազմի զորական ծառայողների մեջ կատարվող աշխատանքի հետ:

221․ Շրջանի ուսումնասիրությունը կատարվում է երեք ճանապարհով․

ա) առանձին հարցերի տեղում անմիջականորեն ուսումնասիրության միջոցով․

բ) լիազորներին առաջադրություններ տալու միջոցով։

գ) տեղական կուսակցական, խորհրդային, արհեստակցական և այլ կազմակերպությունների նյութերի և տվյալների հետ ծանոթանալու միջոցով։

## ՀԱՏՎԱԾ X

## ՑԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԴԱՐՁԸ

222․ Ցերկրային զորամասերի փոփոխիկ կազմի վարժական հավաքների անցկացման ժամկետներն և ժամանակը սահմանվում են ամեն տարի ԽՍՀ Միության ՀՌԽ կողմից։

223․ Ցերկրային զորամասերի ամբողջ ուսուցողական պլանը ենթակա յե տեղական շրջանային (նահանգական) գործադիր կոմիտեների հետ համաձայնեցման։

Ցույց տված պլանը պետք է վորքան կարելի յե ավելի մշտական (տևական) լինի, վորպեսզի ամբողջ բնակչությունը նախորոք հաշվի առնի և մտցնի իր որացույցի մեջ՝ ռազմական ուսուցման ժամկետներն և կյանքի ու աշխատանքի շրջագարձի մեջ։

224․ Սոսկական կազմի կադրի ուսուցումն և կրտսեր հրամանատարական կազմի դպրոցի և կադրային պետկազմի ինքնակատարելագործումն որացույցային տարվա տևողության ընթացքում տարվում է անընդհատ։

# ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

225. *Զորամասի հրամանատարը (պետը) և քաղաքական ղեկավար ապարատն և կուսակցական կազմակերպությունը պարտավոր են հավաքից առաջ կազմել իրենց զորամասի հավաքի կազմակերպչական պլանը, վորում նախօրոք խիստ պլանային կարգով վորոշել զորամասի բոլոր պաշտոնական մարմինների պարտականություններն և աշխատանքը:*

226. *Կազմակերպչական պլանն ըստ իր բովանդակության բաժանվում է հինգ բանվորական ետապների:*

*Առաջին ետապը հանդիսանում է միջոցների և պարագայի հաշվառումը: Այդ ետապի աշխատանքը պետք է անցնի 1—2 ամսում մինչև վարժական հավաքի սկիզբն և ընթանա անձնական կազմի հաշվառման, պարագայի պարզաբանման և նյութական ապահովության պայմանների ստուգումը, վորոնցում պետք է ընթանա վարժական հավաքի կազմակերպման և անցկացման աշխատանքը:*

*Յերկրորդ ետապը հանդիսանում է առանձին գործողությունների* (операция) *պլանավորումը: Տվյալ ետապում զորամասի հրամանատարությունը պարտական է, կատարված հաշվառման տվյալների հիման վրա, նշել առանձին մարմինների աշխատանքի առանձին գործողությունների անցնելու պլանը զորամասի ներսում և նրանից դուրս, նույնպես և վարժական հավաքի կազմակերպման մասնակցող (ռազմական կոմիսարիատներն և տեղական մարմինները) մարմինների աշխատանքը և նախատեսել անհրաժեշտ միջոցառումներ նշված*

պլանից և առանձին գործողությունների անցնելու կարգից հնարավոր թեքումները վերացնելու համար:

Երրորդ էտապը հանդիսանում է կազմակերպչական աշխատանքը: Այդ էտապի աշխատանքը կայանում է նրանում, որ աշխատանքի ընդհանուր պլանավորման հիման վրա աշխատանքի առանձին ճյուղի ղեկավարներից ամեն մեկը զորամասի ներսում (շտաբ, քաղմաս, տնտեսական մաս և այլն) պետք է մշակի անհրաժեշտ կազմակերպչական միջոցառումներ վարժական հավաքի ամբողջ գործողությունն իրականացնելու համար: Այդ միջոցառումները պետք է նախատեսեն. ուսուցման պլանի վերջնական կազմելը, ներկայանալու կարգը, անձնական կազմի բաշխումն և տեղավորումը, նյութական միջոցների օգտագործումը, տնտեսական կազմակերպությունն և գործողությունների անցնելու տեխնիկան:

Չորրորդ էտապը հանդիսանում է վարժական հավաքի մշակված պլանի անմիջական անցկացնելը, երբ յուրաքանչյուր առանձին զորամաս անմիջականորեն աշխատում և գործադրում իր առաջ դրած վերջնական նպատակն իրականացնելու:

Հինգերորդ էտապը—եզրափակող, հանդիսանում է վարժական հավաքը լուծարքելու միջոցների անցկացնելը, կատարված աշխատանքի հաշվառումը, կատարված աշխատանքի դրական նվաճումների և բացասական մոմենտների ուսումնասիրությունն և հաշվետվության կազմելը:

227. Վարժական հավաքի և առանձին աշխատանքի էտապների գործողությունների անցնելու ժամանակաշրջանների առնչությունը սխեմատիկ կազմակերպչական պլանում արտահայտվում են հետևյալ կերպ (տես սխեման ցածում):

228. *Սահմանված ետապների և ժամանակաշրջանի շրջանակներում (հոդ. հոդ. 226—227) ընդհանուր ապարատի առանձին զորամասերի աշխատանքն իրականացվում է ըստ վորոշված գործող գծերի: Աշխատանքի այդ տեսակ գծեր հանդիսանում են. վարչական-շարքային, ուսումնական, քաղ-լուսավորական, տնտեսական, բժշկա-սանիտարական և անասնաբուժական:*

*Այդ բոլոր աշխատանքները դասավորվում են համաձայն փոխադարձ կապի և հետևողականության ըստ ժամանակաշրջանների և աշխատավորական ետապների:*

(Տես աղյուսակ 80-րդ յերեսում)

229. *Փոփոխիկ կազմի զորական ծառայողներին վարժական հավաքին ներկայանալու մասին տեղեկացնելը կատարվում է յերկու յեղանակով.*

*ա) առանձին զորամասում հրաման հրատարակելով.*

*բ) առաջադրություններ* (предписание) *ուղարկելու միջոցով:*

230. *Հրամանը հրապարակվում է տեղական մամուլում և ուղարկվում է շրջանային, վոլոստային (և նրանց համապատասխանող) գործադիր կոմիտեների միջոցով, միլիցիայի տեղական հիմնարկություններին և մարմիններին փակցնելու և այդ հրամանն ամբողջ բնակչության մեջ լայն տարածելու համար:*

*Գյուղական վայրերում ապրող փոփոխիկ կազմի զորական ծառայողներին անհատապես տեղեկացնելը, կատարվում է համապատասխան գյուղական խորհուրդների միջոցով: Քաղաքում ապրողներին տեղեկացնում են համապատասխան փոստային ցանցի, միլիցիայի մարմինների կամ փոփոխիկ կազմից ընտրված անձանց միջոցով:*

Ծանոթություն.—*Զորամասի հրամանը վարժական հավաքների մասին, պետք է*

| ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ | | | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ | ԵԶՐԱՓԱԿԻՉ |
|---|---|---|---|---|
| ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | ՊԼԱՆՍՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ | ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿ. ԱՇԽԱՏԱՆՔ | ՕՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ | ՀԱՇՎԵՏՎՈՒԹ. ԱՇԽԱՏԱՆՔ |
| **Հաշվառում**<br>1. Մարդկանց ուժերի<br>2. Նյութական միջոցների<br>3. Բանվորական պարագայի | **Պլան**<br>1. Մշակումներ և ապասարկում.<br>2. Ուսումնական և լուսավորական աշխատանք. | **Կազմակերպ.**<br>1. Բան. ապարատի.<br>2. Նյութական միջոցների.<br>3. Գործողության անցկացնելու տեխնիկայի. | **Հաստատվ. պլանը**<br>1. Մշակում և սպասարկում<br>2. Ուսում. և քաղլուսավ. աշխատանք.<br>3. Նախազգուշական միջոցառումներ | **Հաշվետվումը**<br>Փորձ կատարած աշխատանքի նրա դրական նվաճումներով և բացասական թերություններով |
| **Աշխ. հանձ.**<br>Նյութերի պատրաստումը և մշակումը պլանը կազմելու համար | **Աշխ. հանձ.**<br>Վարժական հավաքի անցկացրած մշակված և համաձայնեցրած պլանը | **Աշխ. հանձ.**<br>Կազմակերպված համբար, որը պատրաստված և փոփոխել կազմի զինվորական ծառայողներին ընդունելու | **Աշխ. հանձ.**<br>Փոփոխել կազմի մշակումը և ժողովելը (զորամասի և միավորության) | **Աշխ. հանձ.**<br>Վարժական հավաքի կամպանիայի անցկացման հաշվետվությունը |

բաժանվլի տեղերը զորամասի համալրման շրջանները, վոչ ուշ քան 20 որ առաջ մինչև հավաքների սկիզբը:

231. Փոխոխիկ կազմի զորական ծառայողների վարժական հավաքներին ներկայանալը կատարվում է.

ա) մենակ ձևով իր մշտական բնակության վայրից գնալով վարժակայաններն անմիջապես.

բ) կազմակերպված ձևով—նախապես հավաքվելու միջոցով վաշտերի կամ հեծելավաշտերի կենտրոններում և ապա զորական միավորների կազմով գնալով:

232. Մենակ ձևով ներկայանալը կիրառվում է.

ա) միջին, ավագ և բարձր պետկազմի անձանց համար—ամեն դեպքերում.

բ) կրտսեր և ռոսկական կազմի անձանց համար, նույնպես և ՀԿԿ (բ) անդամների և թեկնածուների համար, նրանց զորամաս կանչվելու դեպքում մինչև վարժական հավաքի սկիզբն և այլ դեպքերում—նայած տեղական պայմաններին:

233. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների կազմակերպված ձևով ներկայանալու դեպքում վարժակայաններից նրանց ընդունելու համար գործուղվում են այդ կայանները հրամատարական և քաղաքական կազմի կազրի անձինք, իսկ անհրաժեշտ դեպքերում—և բժշկական անձնական կազմից մարդիկ:

Ներկայացրած ձիերի կայանների անասնաբուժական ստուգումը կատարվում է տեղական քաղաքացիական անասնաբուժական անձնական կազմի աջակցությամբ, և այն դեպքերում, ուր այդ հնարավոր է և անհրաժեշտ, ընդունելու համար գործուղվում է անասնաբուժակ զորամասի կադրային կազմից:

234. Ուսուցման և վարժական հավաքին ներ—

կայանալու ժամանակ ինչպես մենակ գնացած դեպքում, նույնպես և կազմակերպված ձևով, յերկաթուղային հաղորդակցություն յեղած դեպքում փոփոխիկ կազմի զորական ծառայողներին յերկաթուղով փոխադրելը, յեթե այդ տարածությունը 30 կիլոմետրից ավելի չէ, կատարվում է անվճար, ըստ առանձին վկայականների, վոր կպցրած են զորական ծառայողների ծառայության գրքույկներին (հավելված 8):

235. Վարժական հավաքների կանչվում է փոփոխիկ պետ և սոսկական ամբողջ կազմը, վոր գտնվում է զորամասի ցուցակներում, ներառյալ և սահմանված տոկոսային հավելումը:

236. Վարժական հավաքներին փոփոխիկ կազմից ուսուցման համար սահմանված նորմայից ավելանալու դեպքում, յեղած ավելորդների ազատումը կատարվում է.

ա) առաջին հերթին—բժշկական հանձնաժողովների կողմից իրենց առողջական դրության պատճառով ազատման յենթակա համարվածների թվից.

բ) յերկրորդ հերթին—ազատվելու մասին արած հայտարարությունների հարգելի պատճառների առկայության դեպքում, վորոնք ցույց են տրված սույն հրահանգի հոդ. հոդ. 115, 123 և 126-ում:

Վարժական հավաքներն անցկենալուց ազատվելու ամբողջ աշխատանքը կատարվում է սանիտարական զննության ժամանակ մինչ վարժական պարապմունքի սկիզբը:

237. Զորական ծառայողների փոփոխիկ կազմը զորամաս գալուն պես սահմանված կազմակերպչական պլանի կարգով յեկածները յենթարկվում են բժշկական քննության և սանիտարական հետազոտության, վորից հետո ստանում են ըզգեստավորություն, հանդերձանք և զենք: Փոփո-

խիկ կազմի զորական ծառայողների սեփական իրերը սանիտարական հետազոտության ժամանակ վերցվում են, բացառությամբ անհրաժեշտ առարկաների (յերեսսրբիչ, թաշկինակներ և այլն) և տրվում են պահելու գնդի պահեստներում։

238. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների յեռամսյա ուսուցմանն և վարժական հավաքին ներկայանալը վերջանալուց հետո, զորամասի հրամատարը (պետը) պարտական է հավաքից յերեք օրից վոչ ուշ հայտնել համաձայն ցուցակների չներկայացողների քանակն և միջոցներ ձեռք առնել շրջանային, վոլոստային (և նրանց համապատասխանող) գործադիր կոմիտեների գյուղական խորհրդների և միլիցիայի մարմինների միջոցով փնտրելու չներկայացողներին և ներկայանալուց խուսափողներին պատասխանատվության յենթարկելու։

239. Վարժական հավաքին և զորամաս ներկայացող փոփոխիկ կազմի զորական ծառայողների ընդունելության կողմնորոշ սխեման, տրված է հավելվածում (հավելված 9)։

240. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներին վարժական հավաքը վերջանալուց հետո բաց թողնելը կատարվում է նույն այն հիմունքներով, ինչպես և հավաքին ներկայանալը, կամ զորական միավորների կազմով վաշտային (հեծելավաշտային, մարտկոցային) կամ մենակ ձևով վայրերն ուղարկելով։

241. Վարժական հավաքի կազմակերպչական պլանի կազմելու համար անհրաժեշտ ձեռնարկ պետք է ծառայի «Յերկրային զորքերի վարժական հավաքների ցուցադրական կազմակերպչական պլանը»։

# ՀԱՏՎԱԾ XII

## ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՎՈՐՈՒՄՆ ՅԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

242. *Սանիտարական ծառայությունը յերկրային զորամասերում ունի հետևյալ հիմնական խնդիրները.*

*ա) համալրման շրջանների սանիտարա-համաճարակագիտական դրության ուսումնասիրությունը.*

*բ) յերկրային զորամասերի կադրային և փոփոխիկ ամբողջ անձնական կազմի առողջության պաշտպանության և ամրացման միջոցառումների անցկացումը.*

*գ) նրան բուժական միջոցներով ապահովելը.*

*դ) ուսումնա-դաստիարակչական աշխատանքին մասնակցելը.*

*զ) սանիտարական լուսավորության և դաստիարակության առողջապահական ունակությունների ինքնոգնության և փոխադարձ ոգնության մարտում տուժածներին առաջին ոգնությունը ցույց տալու գործում.*

*ե) յերկրային զորամասերի սանիտարական ծառայության անձնական կազմի պատրաստությունը.*

*ը) մասնակցություն առողջության պահպանման աշխատանքում տեղական մարմինների հետ միատեղ հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում։*

243. *Յերկրային զորամասերի կադրային անձնական կազմի բժշկա-սանիտարական սպասարկումը կատարվում է առողջապահության ուազմա-սանիտարական և քաղաքացիական մարմինների կողմից կադրային զորամասերի համար ընդհանուր հիմունքներով։*

244․ Յերկրային զորամասերի փոփոխիկ անձնական կազմի բժշկա-սանիտարական պատրաստումը յեռամսյա ուսուցման և վարժական հավաքների ժամանակ կատարվում է ԲԳԿԲ Ռազմա-սանիտարական վարչության հատուկ հրահանգների համաձայն:

245․ Հավաքներին նախապատրաստվելու ժամանակաշրջանում դիվիզիաների և յերկրային դիվիզիաների և զորամասերի ավագ բժիշկները կազմում են աշխատանքի օրացուցային պլանը, նպատակ ունենալով նախօրոք կարգ. սահմանել բժշկա-սանիտարական պատրաստումն իրականացնելու՝ փոփոխիկ կազմի զորական ծառայողների զորամաս գալու, զորամասում գտնվելու և տուն արձակելու ժամանակաշրջաններում, սանիտարա-պրոֆիլակտիկ (նախազգուշական) և բուժական միջոցառումներ և սանիտարա-լուսավորական աշխատանքի փոփոխիկ կազմի զորական ծառայողների նկատմամբ, նույնպես և փոփոխիկ պետ և սակական կազմի իր զորամասի ռազմա-սանիտարական ծառայության հատուկ պատրաստության անցկացնելու կարգը. այդ պլանը համաձայնեցվում է դիվիզիայի կամ զորամասի աշխատանքի ընդհանուր պլանի հետ և ներկայացվում է հրամանատարությանն ի հաստատություն, համաձայն նրա ցույց տված ժամկետների: Բժշկա-սանիտարական միջոցառումների ընդգավառում, վոր անց է կացվում առողջապահության քաղաքացիական մարմինների մասնակցությամբ, այդ տեսակ պլանը համաձայնեցվում է առողջապահության տեղական բաժինների հետ:

246․ Առաջին տարվա ծառայության փոփոխիկ կազմի զորական ծառայողների յեռամսյա հավաքների ժամանակ, զորամասերում կադրային բժշկական կազմը չբավարարելու դեպքում, շրջանի (округ) հրամանատարության կարգադրությամբ, նրան օգնության, շրջանի (округ) Ռազմա-սանիտարական վարչության պետի ներկա-

յացնելու համաձայն, կարող է կանչվել Թիկունքի սանիտարական հիմնարկությունների փոփոխիկ կազմի զորական ծառայողների բժշկական կազմից, ԲԳԿԲ Գլխավոր Վարչության վորոշումների հիման վրա և ԲԳԿԲ Ռազմա-սանիտարական վարչության համաձայնությամբ, սակայն այն պայմանով, վորպեսզի հոդ. 85 ցույց տված հավաքների ժամկետներից դուրս չգալ:

247. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների բժշկա-սանիտարական սպասարկումը հավաքների միջև կատարվում է առողջապահության քաղաքացիական մարմինների կողմից ԽՍՀՄ Դաշնակից և Ինքնավար Հանրապետությունների Առժողկոմատների և ԲԳԿԲ Ռազմա-սանիտարական վարչության հատուկ հրատարակած ցուցմունքների հիման վրա՝ ըստ համաձայնության:

248. Ցերկրային զորամասերի սանիտարական խնդիրը՝ հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում հանդիսանում է փոփոխիկ կազմի և նրա սանիտարական պատրաստության առողջացման աշխատանքի շարունակությունը, խորացնելը և զարգացումը, վոր անց է կացվել վարժական հավաքների ժամանակ քաշելով այդ աշխատանքի մեջ առողջապահական տեղական քաղաքացիական մարմիններին, նույնպես և Կարմիր Խաչի և Կիսալուսնի Ընկերության տեղական կազմակերպություններին և սահմանել սերտ կապ միջհավաքային ժամանակաշրջանում փոփոխիկ բժշկական և կարմիր բանակային այլ կազմի հետ:

Աշխատանքի մեթոդը վորոշվում է ԲԳԿԲ Ռազմա-սանիտարական վարչության հրահանգով:

249. Բշժկական կադրային կազմի մասնակցությունը նախակոչային պատրաստություն անցկացնելու մեջ վորոշվում է ԲԳԿԲ Ռազմա-սանիտարական վարչության պետի համապատասխան հրամաններով:

# ՀՈԴՎԱԾ XIII

## ՌԱԶՄԱ-ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

250. *Երկրային զորամասերի անասնաբուժական սպասարկման նպատակը հանդիսանում է նրանց անասնաբուժական բարօրության ապահովումն ինչպես ուսուցման և վարժական հավաքների ժամանակաշրջանում, նույնպես և հավաքների միջև:*

251. *Երկրային զորամասերի անասնաբուժական սպասարկման աշխատանքը բաղկանում է.*

*ա) զորամասի համալրման շրջանի* (район) *ձիու, խարամթերքի և այլ միջոցների դրության և հատկության տեղական առանձնահատկությունների ուսումնասիրությունից.*

*բ) անասնաբուժական կազմի մասնակցությունը փոփոխիկ ձիակազմը յերկրային զորամասերի վրա գրանցելու մեջ.*

*գ) անասնաբուժա-պրոֆիլակտիկ և հակահամաճարակային միջոցառումներից.*

*դ) անասնաբուժական օգնության կազմակերպությունից ու իրագործումից.*

*զ) փոփոխիկ անասնաբուժական կազմի պատրաստությունից.*

*ե) փոփոխիկ պետ և սոսկական կազմի անասնաբուժական պատրաստությունից.*

*ը) փոփոխիկ կազմի սոսկականներից պայտարներ պատրաստելուց և*

*թ) հողային մարմինների ձեռք առած միջոցառումներին ձիաբուծության հատկությունը լավացնելու և տվյալ շրջաններում բանակի համար հարկավոր ձիերի զարգացմանը մասնակցելուց:*

252. *Վերոհիշյալ միջոցառումների շարքի անցկացմանը մասնակցում են Հողժողկոմատի անասնաբուժական մարմինները՝ համապատաս-*

խան նրանց վրա դրված պարտականությունների:

253. Ցերկրային զորամասերի անասնաբուժական կազմը մասնակցում է վարժական հավաքների վայրերն ընտրելու մեջ նրանց անասնաբուժական բարեկեցության տեսակետից:

254. Հավաքի վայրի դասավորության շրջանում անասունների վարակիչ հիվանդության առկայության դեպքում, որը մասսայական բնույթ է ընդունել, թույլատրվում է շրջանի (округ) զորահրամանատարի կարգադրությամբ, շրջանի (округ) ռազմա-սանիտարական վարչության պետի զեկուցման համաձայն, ձիերի հավաքի լրիվ կամ մասնակի վերացումը:

255. Վարժական հավաքներին մտած փոփոխիկ ամբողջ ձիակազմը ենթարկվում է հավաքավայրերում անասնաբուժա-սանիտարական զննության, իսկ խլնախտով (сап) անբարեհաջող տեղերում— լրացուցիչ հետազոտության՝ աչքի մալլեյինական (маллеиновой) փորձով: Այն ձիերը, որոնք հականերգործում են դրական կամ բացասական կամ կասկածվում են մալլեյինից (маллеин), հավաքներից ազատվում են:

256. Վարժական հավաքներին ընդունած փոփոխիկ ձիակազմը տեղավորվում են կադրային ձիակազմից առանձին, խիստ անհատական պահպանման պայմաններում:

257. Այն բոլոր շենքերը, որոնք հատկացրած են հավաքների ժամանակ փոփոխիկ ձիակազմի համար, հավաքներից առաջ և հավաքները վերջանալուց հետո ենթարկվում են մաքրման և անհրաժեշտ դեպքերում՝ ախտահանման:

258. Ցերկրային զորամասերի փոփոխիկ ձիակազմը վարժական հավաքների ժամանակ ենթարկվում են պարբերական ընդհանուր (գլխովին) անասնաբուժա-սանիտարական զննությունների՝ մի անգամից ոչ պակաս շաբաթվա մեջ:

Փոփոխիկ ձիակազմի նկատմամբ հավաքների ժամանակ բոլոր անհրաժեշտ անասնաբուժական միջոցառումներն անց են կացվում կադրային ձիակազմի համար ԲԳԿԲ անասնաբուժական միջոցառումների մասին գոյություն ունեցող դրույթների համաձայն:

259․ Վարժական հավաքների ժամանակ կատարվում է ստուգական և պետ փոփոխիկ կազմի անասնաբուժական պատրաստությունը, նույնպես և փոփոխիկ անասնաբուժական կազմի և պայտարների պատրաստությունը, հատուկ վորոշված ժամերին սահմանված ծրագրերով:

260․ Հավաքները վերջանալուց հետո, փոփոխիկ ձիակազմը յենթակա յե անասնաբուժասանիտարական զննության: Անասնաբուժական հիվանդանոցում գտնված ձիերը, կարող են թողնվել հետագա բուժման և հետազոտության համար:

261․ Յերկրային զորամասերի վրա գրանցված ամբողջ փոփոխիկ ձիակազմը հավաքների միջև յեղած ժամանակաշրջաններում յենթարկվում է անասնաբուժական զննության՝ տարվա մեջ մի անգամից վոչ պակաս:

Զննությունը կազմակերպվում է զորամասի հրամանատարության կողմից տնտեսման համար վորոշված վայրերում (վոչ հեռու հեծելավաշտային և մարտկոցային համալրման տեղամասի կենտրոնից) տեղական գործադիր կոմիտեների հետ համաձայնեցրած ժամկետներին:

Զննության արդյունքները հաղորդվում են համապատասխան զորամասերին:

262․ Առաջին տարվա ծառայության զորական ծառայողները յեռամսյա հավաքների ժամանակ, զորամասերում կադրային անասնաբուժական կազմի անբավարար լինելու դեպքում, նրանց ողնության, շրջանի (округ) հրամատարի կարգադրությամբ շրջանի (округ) ռազմա-անասնաբուժական վարչության պետի ներ-

կայացնելու դեպքում, կարելի է կանչել անասնաբուժական կազմ՝ թիկունքի հիմնարկությունների փոփոխիկ կազմի զորական ծառայողներից, ԲԳԿԲ Գլխավոր Վարչության և ԲԳԿԲ Ռազմաանասնաբուժական վարչության սահմանած հիմունքներով, սակայն այն պայմանով, որ հոդ. 85 ցույց տված հավաքների ժամկետներից դուրս չգալ:

263. Հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում դիվիզիայի անասնաբուժական բժիշկը կարող է կանչել դիվիզիայի փոփոխիկ անասնաբուժական կազմին վերջինի բնակության վայրերում, առանց նրա մշտական ծառայությունը վնասելու, անասնաբուժա-սանիտարական և լուսավորական աշխատանքի համար:

264. Փոփոխիկ անասնաբուժական կազմի հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում ռազմա-սանիտարական գիտելիքների լրացման և խորացման նպատակներով, այդ կազմը գրավվում է Ոսոավիախիմի կազմակերպությունների կազմի, ռազմական գիտելիքների խմբակների, անասնաբուժա-լուսավորական աշխատանքի մեջ, տվյալ շրջանի փոփոխիկ պետ և կարմիր բանակային կազմի մեջ և այլն:

265. Փոփոխիկ կազմի զորական ծառայողների մարտական հատկությունները պահպանելու համար, անասնաբուժական կազմը մասնակցում է ձիու սպորտի պրոպագանդի մեջ և հավաքների միջև փոփոխիկ կազմի մեջ սպորտական մրցություններ կազմակերպելու:

266. Ցերկրային դիվիզիայի դիվիզիական անասնաբուժական բժշկի վրա հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում դրվում է շրջանի անասնաբուժական դրության հետ ծանոթանալը և այդ շրջանի ձիակազմի դրության հետ անձնական դիտողության միջոցով, հողային մարմիններից համապատասխան տեղեկություններ ստանալը և այլն:

## ՀԱՏՎԱԾ XIV

# ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ՀԵՏ

267. *Յերկրային զորամասերի հրամատարության և ռազմական կոմիսարիատների միատեղ և համաձայնեցրած աշխատանքից է կախված յերկրային* (территориал) *շինարարության հաջողությունը:*

*Հրամատարության և ռազմական կոմիսարիատների գործունեության շրջանը վորոշվում է սույն հրահանգով և ԽՍՀ Միութենական ՀՌԽ համապատասխան կանոններով և հրամաններով:*

*Ընդհանուր հարցերի թվին, վոր յենթակա յեն ինչպես զորական յերկրային զորամասերի, նույնպես և ռազմական կոմիսարիատների տնօրինությանը, վերաբերում են.*

*ա) Նախակոչային պատրաստությունը.*

*բ) անձնական փոփոխիկ կազմով համալրումը.*

*գ) զինապարտ բնակչության ռազմական պատրաստությունը.*

*դ) ձիակազմով և գումակով համալրումը զինվորական դրության փոխադրելու միջոցով:*

268. *Հրամատարության և ռազմական կոմիսարիատների փոխազդեցությունը, հերթական հավաքներին յերկրային զորամասերն անձնական փոփոխիկ կազմով համալրելու ժամանակ, իրականացվում է հետևյալ հիմունքներով.*

*ա) յերկրային զորամասերի համալրման շրջանում տարեկան կոնտինգենտի հերթական զինակոչը կատարվում է ԲԳԿԲ մեջ՝ հերթական զինակոչման ձեռնարկի համաձայն, այս աշխատանքում յերկրային զորամասերի հրամատարության անմիջական մասնակցությամբ.*

բ) զորամասերն իրենց համալրման շրջաններում, հերթական հավաքի ժամանակ, պետք է.

1) ժամկետներին, վոր սահմանել է ռազմական կոմիսարիատը, հաղորդեն իրենց զորամասին, անձնական փոփոխիկ կազմով համալրելու պահանջը յուրաքանչյուր վարչական միավորին առանձին (շրջգործկոմին, վոլգործկոմին):

2) հաղորդեն մանրամասն տվյալներ ռազմական դպրոցները համալրելու պահանջի մասին.

3) զորամասերից ներկայացուցիչներ մտցնեն զինակոչային հանձնաժողովների կազմի մեջ.

4) նշանակեն պաշտոնական անձինք զորակոչային հանձնաժողովներին կից յերրորդ սեղան կազմակերպելու համար, այն զինակոչիկներին հաշվառման ընդունելու համար, վորոնք նշանակված են յերկրային զորամասերը համալրելու համար:

269. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներն արձակուրդում գտնված ժամանակ, նրանց հաշվառումը կատարում են տեղական զին-հաշվառման մարմինները, վորոնք հաշվառման վերաբերմամբ, կատարում են զորամասի հրամատարի (պետի) բոլոր պահանջները և կարգադրությունները:

270. Զորամասերի հրամատարները (պետերը) փոփոխիկ կազմի զորական ծառայողների հաշվառման մասին իրենց կարգադրությունները զին-մարմիններին հաղորդելու ժամանակ, պարտական են իրենց կարգադրությունների պատճենն ուղարկել համապատասխան ռազմական կոմիսարիատներին:

271. Ռազմական կոմիսարիատները պարտավոր են անմիջականորեն մասնակցել փոփոխիկ կազմի հաշվառումը կարգավորելու աշխատանքում և ընդունել կատարման համար զորամասի հրամատարի (պետի) բոլոր որինական պահանջները:

Ծանոթություն․— *Զորամասերի հրամանատարների (պետերի) վորեվե պահանջներից մեկը կատարելու անհնարինության դեպքում, ռազմական կոմիսարիատն իրավունք ունի դեկուցել վերադասության կարգով, չդադարեցնելով ստացած պահանջի կատարումը։*

272․ *Երկրային զորամասերի համալրման շրջաններում* (район) *բնակչության նախազինակոչային պատրաստության ամբողջ պատասխանատվությունը դրվում ե զորամասերի վրա։*

273․ *Երկրային զորամասերի հրամանատարությունը ձիակազմով, գումակով և ձիասարքով համալրման վերաբերյալ պարտական ե․*

*ա) վորոշել ձիակազմի, գումակի և ձիասարքի պահանջը, վոր պետք ե հավաքել բնակչությունից․*

*բ) հաղորդել այդ պահանջը ռազմական կոմիսարիատներին, ցույց տալով, նրանցից ինչ քանակ յենթակա յե յերկրային զորամասերի վրա գրանցվելու․*

*գ) ստուգել ռազմական կոմիսարիատների և ռազմա-ձիական տեղամասերի աշխատանքի վիճակը ձիակազմի և գումակի հավաքման կազմակերպության գործում զորամասը ռազմական դրության փոխելու միջոցով։*

Ծանոթություն․— *Այն շարային ձիերը, վորոնք գրանցված են զորամասերի վրա, վորտեղ ծառայության մեջ ե նրանց տերը, չեն մտնում պահանջի թվում, վոր հաղորդված ե սույն հոդվածի «բ» կետի կարգով։ Մնացած բոլոր ձիերը, գումակը և ձիասարքը յենթակա յեն հավաքման ռազմական կոմիսարիատների միջոցով։*

274․ *Ռազմական կոմիսարիատները պարտական են․*

*ա) կազմել ձիակազմ և գումակ մատակարարելու կազմակերպման պլանը․*

բ) մասնակցել ձիակազմի, զումակի և ձիասարքի գրանցման աշխատանքում և աջակցել այն զորամաս հասցնելուն՝ զորամասը ռազմական դրության փոխադրելու միջոցով:

275․ Այն շրջաններում (район), վորոնցում տեղավորված են մի քանի զորամասեր կամ հիմնարկություններ, ամբողջ աշխատանքը, վոր կապված է ռազմական կոմիսարիատների գործունեյության հետ, միավորում է զորապետների ավագներից մեկը՝ դիվիզիայի հրամատարի ցուցմունքով:

Այս դեպքում զորամասերի և հիմնարկությունների հրամատարները (պետերը) պարտական են ամբողջ աշխատանքն անցկացնել ռազմական կոմիսարիատների հետ և այդ բնագավառի բոլոր իրենց պահանջներն ուղղել նշանակված ավագ պետի միջոցով:

---

## ՀԱՏՎԱԾ XV

## ՑԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԶՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

276․ Ցերկրային զորամասերի կադրային կազմի զորական ծառայողների իրավունքները և պարտականությունները նույնանման են ԲԳԿԲ կադրային զորամասերի զորական ծառայողների համար սահմանված իրավունքների և պարտականությունների հետ:

277․ Ցերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները զինվորական ծառայություն կատարելու ամբողջ ժամանակամիջոցում օգտվում են իրավունքների ամբողջ լրիվությամբ, վոր վերապահված է աշխատավորներին, համաձայն դաշնակից հանրապետություն-

ների սահմանադրությունների և ԽՍՀ Միության և մյուս հանրապետությունների օրենսդրությունների, վորչափով նրանց վերաբերմամբ բացառություններ չեն սահմանափակված, վորոնք բղխում են պարտադիր զինվորական ծառայությունից:

Բացի դրանից, նրանք օգտվում են արտոնություններով և առավելություններով, վոր նախատեսված են Օրենսդրքով (Кодекс Закон) յերկրային զորամասերի համար արտոնությունների և առավելությունների մասին Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի զորական ծառայողների և զինապարտների ու նրանց ընտանիքների համար:

Կարմիր բանակայինների սոսկական և կրտսեր պետկազմի պետական ապահովության կարգը, նույնպես և նրանց ընտանիքներինը, վորոշվում է ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների հատուկ օրենքներով:

278. Յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները իրանց համար սահմանված ուսուցման հավաքներին կանչվելու ժամանակ, զորական ծառայության պարտականությունները կատարելու նկատմամբ, աշխատանքի օրենսդրության ազդեցության տակ չեն ընկնում,

279. Յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները ստանում են պետության հաշվին պարենավորում (довольствие) հոդ. 280—283-ի համաձայն:

280. Դրամական և բնական բավարարում (իրեղենի բավարարում, սնունդ, ուսումնական պիտույքներ և այլն) ստանում են.

ա) յերկրային զորամասերի փոփոխիկ սոսկական և կրտսեր պետկազմի զորական ծառայողները իրանց համար սահմանված ուսուցման հավաքների ժամանակ, բացի կարճատև հավաքներից.

բ) փոփոխիկ պետկազմի միջին, ավագ և բարձր անձինք—նրանց համար սահմանված վարժական, կարճատև և չարժական հավաքների, զորաշարժերի և այլ ուսումնական պարապմունքների ժամանակ, նույնպես և արտազորային և նախակոչային պատրաստությունը, վորպես հրահանգիչներ անցկացնելու ժամանակ.

Բնական և դրամական բավարարումը տրվում է ԲԳԿԲ զորամասերի համար սահմանված նորմաներով:

281. Ցերկրային զորամասերի փոփոխիկ կազմում գտնված պետկազմի անձինք, Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի շարքերը կանչվելու դեպքում, բնակության տեղից մինչև տեղական զինվորական վարչության համապատասխան մարմնի մոտ գնալու ժամանակվա համար և վերջինից հավաք անցնելու տեղը, նույնպես և վերադառնալու ժամանակվա համար, Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի մարմինները վճարում են որադրամ ճանապարհին գտնված ամեն մի որ ու գիշերվա (сутка) համար, դասակի հրամատարի ամսական ռոճիկի 1/48-ի չափով:

282. Ցերկրային զորամասերի սովական և կրտսեր փոփոխիկ պետկազմի զորական ծառայողներին նրանց ուսուցման համար սահմանված հավաքների տեղերից վերադառնալիս, բայց կարճատևներից, վորոնցից մինչև բնակության վայրը գնալը պահանջում է մի որ ու գիշերից ավելի ժամանակ, վճարվում է նրանց բնակության տեղը գնալու ժամանակվա համար սննդադրամ:

283. Այն դեպքերում, յերբ տարածությունը մինչև ուսուցման կամ վարժական հավաքների տեղն անց է կենում 30 կիլոմետրից, փոփոխիկ կազմի զորական ծառայողները գնում են բնակության վայրից մինչև սահմանված հավաքների

տեղը և վերջիններից բնակության վայրը պետության հաշվին, ուղեթղթերով (проездной документ), վորոնք տրվում են Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի մարմինների կողմից:

284. Ցերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները նրանց համար սահմանված ուսուցման հավաքները կանչվելու ժամանակ, բացի կարճատևներից, պարտական են հագնել սահմանված տարազավոր հագուստ (զինվորական զգեստ) ինչպես ծառայության մեջ, այնպես էլ ծառայությունից դուրս:

Փոփոխիկ բարձր, ավագ և միջին պետկազմի զորական ծառայողները ծառայությունից դուրս կարող են քաղաքացիական հագուստ հագնել:

Ծանոթություն. — «Ծառայության մեջ» և «ծառայությունից դուրս» հասկացողությունը վորոշվում է ԲԳԿԲ ներքին ծառայության կանոնագրքով:

285. Ցերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները ԲԳԿԲ շարքերում գտնված ժամանակ պատասխանատվություն են կրում քրեական կարգով զինվորական տրիբունալների առաջ իրենց կատարած զինվորական հանցանքների համար, վորոնք թված են զինվորական տրիբունալների և զինվորական դատախազության կանոնադրության հոդ. 8-ում 1926 թ. ոգոստոսի 28-ում (ԽՍՀՄ Ո. Հ. № 50, հոդ. 504):

286. Ցերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները ծառայության զանցանքների համար, վոր իր մեջ քրեական հանցագործությունների նշաններ չեն պարունակում, նույնպես և այլ զանցանքների համար, վորոնք անհամատեղելի յեն զինվորական ծառայողների արժանապատվության հետ և վորոնք կատարել են ԲԳԿԲ շարքերում գտնված ժամանակ,

պատասխանատվություն են կրում ԲԳԿԲ կարգապահական կանոնագրքի համաձայն:

287. Փոփոխիկ պետակազմի զորական ծառայողները յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում ծառայության սահմանված ժամկետները վերջացնելուց հետո, կարող են իրենց կամավոր ցանկության հայտնած դեպքում շարունակել իսկական զինվորական ծառայությունը փոփոխիկ կազմում:

288. Յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները կարող են, նրանց ցանկության հայտնած դեպքում, գործուղվել ԲԳԿԲ բոլոր ռազմա-ուսումնական դպրոցները զորամասի կարգումի (наряд) հաշվին:

ԲԳԿԲ Գլխավոր Վարչության պետ՝
ԼԵՎԱՆԴՈՎՍԿԻ

ԲԳԿԲ Գլխավոր Վարչության զորական մոբիլիզացիայի և համալրման վարչության պետ՝ ՍՈԿՈԼՈՎ

# ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ ՅԵՎ ՌՍՖՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## Յերկրային զորքերի համալրման շրջաններում (район) տեղական խորհրդային մարմինների պարտականությունների մասին:

*Յերկրային զորքերի աշխատանքում տեղական խորհրդային մարմինների կողմից կազմակերպված և պլանաչափ աջակցություն ապահովելու նպատակներով Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և ՌՍՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը* վորոշում են՝

1. *Ինքնավար—հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների, վորոնք նահանգական բաժանմունքներ չունեն, յերկրային* (краевые). *մարզային, նահանգական, շրջանային* (окружные) *և գավառական գործադիր կոմիտեների վրա, յերկրային զորամասերի մարտական և քաղաքական դաստիարակության բնագավառում դրվում է. ա) աջակցել յերկրային զորքերի զորամասերի համալրման համար նշանակված շրջանների* (район) *սահմանները վորոշելու միջոցառումների անցկացնելուն տվյալ վարչա—յերկրային միավորի սահմաններում. բ) միջոցներ ձեռք առնել ավելի լրիվ և բանական (ռացիոնալ) կերպով ոգտագործելու տվյալ*

վարչա-յերկրային մխավորի մարդկային կազմն և ձիական միջոցները, յերկրային զորքերը համալրելու համար. գ) մասնակցել յերկրային զորքերի փոփոխիկ կազմի պատրաստության աշխատանքի ժամկետները սահմանելուն. դ) անցկացնել բնակչության քաղաքական պատրաստությունն ուսուցումն և վարժական հավաքներն սկսելուց առաջ. դ) միջոցներ ձեռք առնել տեղեկացնելու յերկրային զորքերի փոփոխիկ կազմին ուսուցման և վարժական հավաքների ժամկետների մասին. ե) տալ այնպիսի ղեկավար ցուցմունքներ, վորոնք ապահովեն փոփոխիկ կազմին իր ժամանակին ներկայանալու, ինչպես ուսուցման և վարժական հավաքներին, այնպես էլ մոբիլիզացիայի ժամանակ, և հայտարարել կռվի միջոցառումներ վարժական հավաքներին ներկայանալուց, ձիեր, սայլեր և լծասարք բերելուց (հանձնելուց) խուսափողների դեմ. ը) մասնակցել յերկրային զորքերի փոփոխիկ կազմի մեջ համապատասխան աշխատանք անցկացնելուն վարժական հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում:

2. Ժողովրդական լուսավորության տեղական մարմինների վրա դրվում է. ա) վերացնել անգրագիտությունը նախակոչային տարիք ունեցող յերիտասարդության մեջ և կիսագրագիտությունը փոփոխիկ կազմի կարմիր բանակայինների մեջ. բ) տանել քաղլուսավորական աշխատանք նախակոչիկների մեջ միջհավաքների ժամանակաշրջանում և փոփոխիկ կազմի մեջ նրա արձակուրդում գտնված ժամանակ. գ) ամեն կերպ աջակցել ռազմական քաղաքական աշխատանքի կազմակերպմանն և անցկացնելուն նախակոչիկների մեջ միջհավաքների ժամանակաշրջանում և փոփոխիկ կազմի զորական ծառայողների մեջ նրանց արձակուրդում գտնված ժա-

ժամանակ․ դ) սարքավորել ուսմական անկյուններ բոլոր լուսավորական կազմակերպություններում և խրճիթ-ընթերցարաններում:

3․ Առողջապահության տեղական մարմինների վրա դրվում է․ ա) անցկացնել յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի մեջ առողջապահական և սանիտարական պրոֆիլակտիկ (նախազգուշական) միջոցառումներ միջհավաքների ժամանակաշրջանում այն պլանի հիման վրա, վոր համաձայնեցրած է այդ զորամասերի (դիվիզիայի բժիշկների, գնդերի ավագ բժիշկների) սանիտարական պետերի հետ, նույնպես և աջակցել յերկրային զորամասերի բժշկական կազմին նրա աշխատանքում փոփոխիկ կազմի բժշկա-սանիտարական սպասարկման դեպքում վարժական հավաքների ժամանակ․ բ) իրականացնել նախակոչիկների և բնակչության այլ խմբերի բժշկա-սանիտարական սպասարկումը, վորոնք ուսուցումն անցնում են արտազորային կարգով և անցկացնել նրանց մեջ սանիտարա-լուսավորական աշխատանք․ գ) ակտիվ կերպով մասնակցել տեղական բնակչության մեջ սանիտարական գիտելիքների, առողջապահական ծանոթությունների և առաջին ոգնություն ցույց տալու տեղեկությունների տարածմանը, առանձնապես քիմիական վտանգի պայմաններում:

4․ Տեղական հողային մարմինների վրա դրվում է․ ա) աջակցել յերկրային զորքերին անասնաբուժական տեսակետից առողջացնել համալրման շրջանները (район) և սպասարկել անասնաբուժական զորքերին, նույնպես և ռազմավարժական կետերն անասնաբուժական տեսակետից․ բ) անասնաբուժական ոգնություն ցույց տալ յերկրային զորքերի վրա գրանցված ձիակազմին, նույնպես և զորամասերի ձիակազմին, վորոնք ջոկված են ռազմա-վարժական կետերի

համար․ գ) մասնակցել յերկրային գործերի վրա գրանցելու և վարժական հավաքների ժամանակ ձիակայմը․ բնակչությունից ընդունող հանձնաժողովների աշխատանքներին․ դ) կազմակերպել անասնաբուժական-բուսաբուծական աշխատանքներ նախակոչիկների և յերկրային գործերի փոփոխիկ կազմի մեջ։

5․ Շրջանային (районные) և վոլոստային զործավոր կոմիսարների վրա դրվում է․ ա) հաշվի առնել յերկրային գործերի փոփոխիկ կազմի զորապարտներին և զորական ծառայողներին, վորոնք ապրում են տվյալ շրջանի (район) կամ վոլոստի յերկրամասի վրա, համաձայն հաշվառման համար գործող կանոնների՝ բ) իր ժամանակին տեղեկացնել զորամասերի հրամատարներին փոփոխիկ կազմի անձանց արձակուրդում գտնված ժամանակ իրենց մշտական բնակության տեղից հեռանալու բոլոր դեպքերի մասին․ գ) հսկել փոփոխիկ կազմի հաշվառման տվյալների դրության վրա և ստուգել այդ տվյալները․ դ) իր ժամանակին տեղեկացնել փոփոխիկ կազմի անձանց և զինապարտներին, ինչպես ուսուցման, վարժական և կարճատև հավաքների ժամկետների մասին, այնպես էլ ռազմական պատրաստության պրագմունքների մասին․ դ) միջոցներ ձեռք առնել փնտրելու չներկայացողներին և ներկայանալուց խուսափողներին․ ե) միջոցներ ձեռք առնել բնակարաններ հատկացնելու պետ կազմի այն անձանց, վորոնք յեկել են շրջանը (район) կամ վոլոստի յերկրամաս՝ փոփոխիկ կազմի հետ պարապելու կամ այլ ռազմական աշխատանքի համար․ զ) ստուգել յերկրային գործերի վրա գրանցված ձիակազմի հաշվառման դրությունը։

6․ Գյուղական խորհուրդների վրա դրվում է․ ա) իր ժամանակին տեղեկացնել զորամասերի հրամա-

տարիներին փոփոխիկ կազմի անձանց արձակուրդում գտնված ժամանակ մշտական բնակության տեղից հեռանալու բոլոր դեպքերի մասին. բ) իր ժամանակին տեղեկացնել փոփոխիկ կազմի անձանց և զինապարտներին, ինչպես յեռամսյա ուսուցման և վարժական հավաքների ժամկետների մասին, այնպես էլ ստուգման պատրաստության զբաղմունքների ժամկետների մասին. գ) հսկել, վոր փոփոխիկ կազմն ու զինապարտները իր ժամանակին ներկայանան ուսուցման և վարժական հավաքներին, նույնպես և ստուգման պատրաստության զբաղմունքներին. դ) փնտրել ներկայանալուց խուսափողներին. ե) միջոցներ ձեռք առնել այլ գյուղը փոփոխիկ կազմի և զինապարտների հետ պարապելու կամ այլ ռազմական աշխատանքի համար յեկած պետ կազմի անձանց բնակարաններ հատկացնելու համար:

7. Յերկրային զորքերի կարիքների համար տեղական միջոցների հաշվին կատարված ծախսերը վորոշվում է ՌԽՖՍՀ տեղական ֆինանսների մասին յեղած կանոնադրությամբ (Որ. Ժող. 1926 թ., № 92, հոդ. 668):

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ա. ԼԵԺԱՎԱ

Իտ. Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղարի Ա. ԴՈՍՈՎ

Մոսկվա, Կրեմլ,
5 սեպտեմբերի 1927 թ.

(ԿԳԿ և ՀԿԳԿ Իզվեստիա 8/X 1927 թ., № 231):

# ԲԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## Ցերկրային գործերի համայրման շրջաններում (район) իշխանության տեղական մարմինների պարտականությունների մասին

*ԲԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը* վորոշում է․

1․ *Ցերկրային գործերի նորմալ աշխատանքը փոփոխիկ կարգով ապահովելու համար, նրանց համայրման շրջաններում* (район) *իշխանության տեղական մարմինները պարտական են.*

Ա․ Գյուղական, քաղաքատիպ վայրի և քաղաքային խորհուրդները ու շրջանային (район) գործադիր կոմիտեները․

1) *Ցերկրային գործերի կազմակերպմանն աջակցելու բնագավառում. ա) հաշվի առնել բոլոր զինապարտներին և փոփոխիկ կազմի զորական ծառայողներին հաշվառման կանոնների համաձայն. բ) իր ժամանակին տեղեկացնել զորամասերի հրամատարներին՝ փոփոխիկ կազմի զորական ծառայողների արձակուրդում գտնված ժամանակ կատարված բոլոր տեսակի մեկնումների և տեղափոխությունների մասին. գ) իր ժամանակին տեղեկացնել փոփոխիկ կազմին և զինապարտներին յեռամսյա ուսուցման, կարճատև հավաքների և նախակոչային պատրաստության պարապմունքների ժամկետների մասին. դ) հսկել, վոր*

փոփոխիկ կազմն ու զինապարաններն իր ժամանակին ներկայանան յեռամսյա ուսուցմանը, կարճատև վարժական հավաքներին և նախակոչային պատրաստության պարապմունքներին. գ) փնտրել և գտնել ներկայանալուց խուսափողներին, ե) բնակարաններ հատկացնել ռազմական աշխատանքի համար և փոփոխիկ կազմի ու զինապարների հետ պարապելու համար յեկած հրամանատարական կազմին. ը) պահպանել ռազմավարժական կայանները միջհավաքների ընթացքում (արանքում). թ) մասնակցել յերկրային զորքերի վրա գրանցվող և վարժական հավաքների բնակչությունից ձիակազմ ընդունող հանձնաժողովի աշխատանքին. ժ) հոկել յերկրային զորքերին գրանցված ձիակազմի հաշվառմանը:

2) Ժողովրդական լուսավորության բնագավառում. ա) վերացնել նախակոչային տարիք ունեցող ամբողջ յերիտասարդության անգրագիտությունն և փոփոխիկ կազմի բանակայինների կիսագրագիտությունը, բ) կատարել քաղ-լուսավորական աշխատանք նախակոչիկների մեջ միջհավաքների միջոցում և փոփոխիկ կազմի զորական ծառայողների մեջ արձակուրդում գտնված ժամանակ. գ) աջակցել ռազմա-քաղաքական աշխատանք կազմակերպելուն և անցկացնելուն՝ նախակոչիկների մեջ միջհավաքների միջոցում և փոփոխիկ կազմի—զորական ծառայողների հետ՝ արձակուրդի ժամանակ. դ) կազմակերպել ռազմական անկյուններ՝ խրճիթ-ընթերցարաններում, ժողովրդական տներում և ակումբներում:

3) Առողջության պահպանության բնագավառում. ա) տրամադրել բժշկա-սանիտարական օգնություն նախակոչիկներին միջհավաքների միջոցում և փոփոխիկ կազմին արձակուրդի ժամանակ. բ) տրամադրել բժշկա-սանիտարական

ոգնությամբ վարժակայանները նախակոչային պատրաստության անցկացնելու և բժշկական հըսկողություն սահմանելու պատրաստության վրա. գ) ակտիվ մասնակցել ընակչության մեջ տարածելու համապատասխան գիտելիքներ՝ քիմիական պաշտպանության բնագավառում և այլն. դ) կազմակերպել սանիտարական – լուսավորական աշխատանք՝ նախակոչիկների և փոփոխիկ կազմի հետ:

4) Անասնաբուժական տարբերում. ա) աջակցել յերկրային զորքերին՝ անասնաբուժական տեսակետից համալրման շրջանների (район) առողջացնելու և սպասարկել նրանց ռազմա—վարժական կայանները՝ անասնաբուժական ոգնությամբ. բ) կազմակերպել արտոնյալ և ձրի բուժական ոգնություն յերկրային զորքերին գրանցված ձիակազմին, նույնպես և ռազմա—վարժական կայանների համար ջոկված ձին. գ) կազմակերպել անասնաբուժա—լուսավորական աշխատանք անցկացնելը նախակոչիկների և փոփոխիկ կազմի մեջ:

## Բ. Շրջանային (окружные) գործադիր կոմիտեները.

ա) աջակցել յերկրային զորքերի շրջանացումն անցկացնելուն՝ շրջանի (округ) սահմաններում.

բ) միջոցներ ձեռք առնել ավելի լրիվ և բնական (ռացիոնալ) կերպով համալրելու յերկրային զորքերը և ապահովել նրանց ձիերով.

գ) մասնակցել յերկրային զորքերի փոփոխիկ կազմի պատրաստության աշխատանքի ժամկետները վորոշելուն.

դ) անցկացնել ալխատցին պատրաստության ընակչության մեջ նախ քան ուսուցումն ու վարժական հավաքները.

ե) կարգադրել տեղեկացնելու փոփոխիկ կազմին ուսուցման և վարժական հավաքների մասին.

ե) ղեկավարել շրջանի (округ) իշխանության մարմինների ամբողջ աշխատանքը՝ յերկրային զորամասերին աջակցելու գործում.

զ) մասնակցել փոփոխակ կազմի մեջ աշխատանք անցկացնելուն՝ միջհավաքների միջոցում:

2. 1-ին հոդվածում ցույց տված բոլոր աշխատանքները պետք է նախատեսվեն խորհրդային և գործադիր կոմիտեների աշխատանքների պլանով:

ԲԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ ԳՈԼՈԴԵԳ:

ԲԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Տնտեսական Խորհրդակցության գործերի կառավարիչ՝ ՄՈՐՈԶ:

ք. Մինսկ.
27 հունվարի 1928 թ.
(«Սովեցկայա Բելառուս», № 30, 4/II 1928 թ.).

# ՀԱՄԱՎՐԱՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 19 ՎՈՐՈՇՈՒՄԸ

## Յերկրային զորքերի կարիքները բավարարելու համար, տեղական խորհրդային մարմինների պարտականությունների մասին:

*Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Վրաստանի ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը* վորոշում են.

1. *Յերկրային զորքերի ամբողջ աշխատանքը փոփոխիկ կազմով, վոր ընդգրկում է զորամասերի համալրման վորոշ շրջանների* (район) *զինապարտ բնակչությունը պետք է իրականացվի՝ տվյալ շրջանի* (район) *խորհրդային բոլոր մարմինների կողմից այս աշխատանքներին անմիջական և համաձայնեցրած կերպով մասնակցելու միջոցով:*

2. *Գավառական գործադիր կոմիտեներն ամեն տեսակ միջոցներ են ձեռք առնում ամրացնելու յերկրային զորամասերի մարտական և քաղաքական դաստիարակությունը, և մասնավորապես. ա) աջակցում են գավառի սահմաններում յերկրային զորքերի շրջանացումն անցկացնելուն. բ) միջոցներ են ձեռք առնում ավելի լրիվ և բանական (ռացիոնալ) կերպով օգտագործելու մարդկային և ձիական միջոցները գավառի յերկ-*

բամասում, յերկրային զորքերը համալրելու համար. գ) մասնակցում են յերկրային զորքերի փոփոխիկ կազմի պատրաստության աշխատանքի ժամկետները սահմանելու գործին. դ) անց են կացնում բնակչության ագիտացիոն պատրաստություն, նախքան ուսուցումը և վարժական հավաքները. գ) կարգադրում են տեղեկացնելու փոփոխիկ կազմին՝ ուսուցման հավաքների և վարժական հավաքների մասին. ե) ղեկավար ցուցմունքներ են տալիս, վորոնք ապահովում են փոփոխիկ կազմն իր ժամանակին ներկայանալու, ինչպես ուսուցմանն և վարժական հավաքներին, նույնպես եվ մոբիլիզացիաների ժամանակ, և կովլի միջոցներ են հայտարարում վարժական հավաքներին ներկայանալուց խուսափողների և ձիեր, սայլեր ու լծասարք չներկայացնողների դեմ. ը) մասնակցում են փոփոխիկ կազմի մեջ միջհավաքային աշխատանք անցկացնելուն:

Ծանոթություն. Յերկրային զորքերի կարիքների վրա տեղական միջոցներից հանված ծախսվող գումարները վորոշվում են ՍԽՖՍՀ տեղական ֆինանսների կանոններով:

3. Ժողովրդական լուսավորության տեղական մարմինների վրա դրվում են հետևյալ պարտականությունները. ա) վերացնել նախակոչային տարիք ունեցող յերիտասարդության միջից անգրագիտությունն, ու փոփոխիկ կազմի կարմիր բանակայինների միջից կիսագրագիտությունը. բ) անցկացնել քաղ-լուսավորական աշխատանք նախակոչիկների մեջ միջահավաքների ժամանակաշրջանում և փոփոխիկ կազմի զորական ծառայողների մեջ՝ նրա արձակուրդում գտնված ժամանակ. գ) ամեն կերպ աջակցել և բաց թողնել անհրաժեշտ նյութական միջոցներ՝ կազմակերպելու և անցկացնելու ռազմա-քաղաքական աշխատանք

նախակոչիկների մեջ, միջհավաքների ժամանաշրջանում և փոփոխիկ կադրի զորական ծառայողների մեջ՝ նրանց արձակուրդում գտնված ժամանակ. գ) կազմակերպել ռազմական անկյուններ լուսավորության բոլոր կազմակերպություններում և խրճիթ-ընթերցարաններում:

4. Առողջապահության ժողովրդական կոմիսարիատի մարմինների վրա դրվում է. ա) սպասարկել նախակոչիկներին բժշկա-սանիտարական օգնությամբ ռազմա-վարժական կամ հավաքի կայաններում՝ տեղի ունեցող նախակոչային պատրաստության ժամանակաշրջանում և յերկրային զորքերի փոփոխիկ կադրին՝ կարճատև հավաքների ժամանակ, նույնպես և նորակոչիկներին՝ ամեն տարվա հերթական զորակոչների ժամանակ, յերկրային զորքերի մեջ նշանակելու համար. բ) ակտիվ կերպով մասնակցել բնակչության մեջ տարածելու համապատասխան գիտելիքներ, հատկապես քիմիական պաշտպանության բնագավառում, գ) կազմակերպել սանիտարալուսավորական աշխատանք նախակոչիկների և փոփոխիկ կադրի մեջ.

5. Տեղական հողային մարմինների վրա դրվում է, ա) աջակցել յերկրային զորքերին՝ անասնաբուժական տեսակետից առողջացնելու համալրման շրջանները (район) և սպասարկել նրանց, նույնպես և ռազմա-վարժական կայաններին անասնաբուժական տեսակետից. բ) ցույց տալ արտոնյալ և ձրի անասնաբուժական օգնություն զորքերի վրա գրանցված ձիակազմին, նույնպես և զորամասերի ձիակազմին, վորոնք ջոկված են ռազմավարժական կայանների համար. գ) մասնակցել յերկրային զորքերի վրա գրանցվող և բնակչությունից վարժական հավաքների ժամանակ ընդունող հանձնաժողովի աշխատանքներին. դ) կազմակերպել անասնաբուժա-լուսավորական

աշխատանք նախակոչիկների և փոփոխիկ կազմի մեջ:

6. Թեմի (գավառակ) գործադիր կոմիտեների վրա դրված է, ա) բոլոր զինապարտ և փոփոխիկ կազմի զորական ծառայողների հաշվառումը, վորոնք ապրում են Թեմի յերկրամասում, համաձայն հաշվառման գործող կանոնների. բ) իր ժամանակին տեղեկացնելը զորամասերի հրամանատարներին՝ փոփոխիկ կազմի արձակուրդում գտնված ժամանակ կատարած բոլոր դեպքերում տեղից հեռանալու և տեղափոխությունների մասին. գ) հսկել և ստուգել փոփոխիկ կազմի հաշվառման ավյալների ճշտությունը. դ) իր ժամանակին տեղեկացնել փոփոխիկ կազմին և զինապարտներին, ինչպես ուսուցման, վարժական և կարճատև հավաքների, նույնպես և ռազմական պատրաստության պարապմունքների ժամկետների մասին, դ) հսկել վոր փոփոխիկ կազմն ու զինապարտներն իր ժամանակին ներկայանան ուսուցման և վարժական հավաքներին, նույնպես և ռազմական պատրաստության պարապմունքներին. ե) միջոցներ ձեռք առնել փնտրել-գտնելու չներկայացողներին և ներկայանալուց խուսափողներին. ը) հատկացնել բնակարաններ սահմանված վճարով՝ Թեմի յերկրամասը ռազմական աշխատանքի, նույնպես և փոփոխիկ կազմի և զինապարտների հետ պարապելու յեկած պետկազմի համար. թ) հսկել և ստուգել գրանցված ձիակազմի հաշվառման դրությունը. ժ) պահպանել ռազմա-վարժական կայանները միջհավաքների ժամանակաշրջանում. ի) մասնակցել յերկրային զորքերի ամբողջ աշխատանքին, ինչպես փոփոխիկ կազմի մեջ, միջհավաքների ժամանակաշրջանում, այնպես էլ բնակչության ռազմական պատրաստության ժամանակ:

Ծանոթություն. — Սույն հոդվածի «բ», «դ», «գ», «ե», «ը», «ժ», «ի» կետերում ցույց տված գործողությունների կատարումը Վրաստանի ԽՍՀ այն վայրերում, ուր կազմակերպված են գյուղական խորհուրդներ, դրվում են և այդ վերջիններին վրա:

7. Աշխատանքի հաջողության համար բոլոր խորհրդային մարմինները պարտական են իրենց աշխատանքների պլանում նախատեսել լեռնային գործերի աշխատանքի հետ կապված, աշխատանքի բոլոր տեսակները:

Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝

Մ. ՄԱԽԱՐԱՁԵ

Վրաստանի ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝

Ս. ՋՈՒՂԵԼԻ

Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝

ՄԱՏԻԿԱՇՎԻԼԻ

Թիֆլիս, Պալատ.
18 ապրիլի 1928 թիվ.

# ՔԱՂՎԱԾՔ

## ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ 25 ՄԱՐՏԻ 1928 ԹՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ № 20

Լսեցին

7. *ԱԽՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշման նախագիծը «յերկրային գործերի համալրման շրջանների* (район) *տեղական մարմինների պարտականությունների մասին»*:

Տեղեկանք: *Հրամ. Ժողկոմխորհի* № 8 *կետ* 9 29/II 1928 *թ.* (ВН. СНК.):

*Զեկուցում ընկ. Զերնաարևի գ.* № 593:

Վորոշեցին.

*Հաստատել և հրապարակել հետևյալ ձևով.*

*Յերկրային գործերի աշխատանքին տեղական մարմինների կողմից կազմակերպված և պլանաչափ աջակցությունն ապահովելու նպատակով, ԱԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը* վորոշում են.

1. *ԱԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի, ԻԼՂ Մարզային Գործադիր Կոմիտեյի և ԱԽՍՀ գավառական գործադիր կոմիտեների վրա, յերկրային զորամասերի մարտական և քաղաքական պատրաստականության բնագավառում դրվում է.*

*ա) աջակցել միջոցառումներ գործադրելուն՝ շրջանների* (район) *սահմանները վորոշելու, վորոնք նշանակված են յերկրային զորքերի զորամասերը համալրելու համար ամբողջ վարչա-յեր-*

կրային միավորի սահմաններում, վորի համար, յերկրային զորամասերի պահանջի համաձայն, վերջիններին ներկայացնել տեղեկություններ՝ տնտեսական, վիճակագրական, ազգագրական, պատմական, կուլտուր-կենցաղային և շրջանի խորհրդային աշխատանքի մասին.

բ) միջոցներ ձեռք առնել ավելի լրիվ և բանական (ռացիոնալ) կերպով օգտագործելու տվյալ վարչա-յերկրային միավորի մարդկային կազմն ու ձիական միջոցները, վորի համար, յերկրային զորամասերի պահանջով ներկայացնել վերջիններին տեղեկություններ՝ կուսակցական, գյուղացիական և բանվորական տարրերի, նույնպես և անաշխատ և ապադասակարգ տարրի մասին-առանձին, ըստ բնակելի վայրի (գյուղ, գործարան, գավառ և այլն). տեղեկություններ ձիակազմի քանակի և դրության մասին, ըստ յերկրային զորամասերի համալրման առանձին վայրերի.

գ) մասնակցել յերկրային զորքերի փոփոխիկ կազմի պատրաստության աշխատանքի ժամկետները սահմանելուն, վորի համար յուրաքանչյուր տարի հատուկ կարգադրությամբ ներկայացուցիչ ընտրել՝ մասնակցելու Ազր. կենտգործկոմի նիստերին, յերկրային զորքերի փոփոխիկ կազմի պատրաստության աշխատանքի ժամկետների հարցը վորոշելու ժամանակ.

դ) անցկացնել բնակչության քաղաքական պատրաստությունն, ուսուցումն և վարժական հավաքները սկսելուց առաջ, վորի համար անցկացնել Ազր. Դիվիզիայի Քաղբաժնի ցուցմունքով-ագիտացիոն կամպանիա և քաղաքական պատրաստություն՝ բնակչության մեջ. ըստ վորում այդ աշխատանքը պետք անցկացնել ընդհուպ մինչև վոլոստային, գյուղական և գործարանա-գավառային բջիջները. դրել լրագրության (տեղական մամուլի) մեջ ռազմա-կենցաղային և ռազմա-տեղեկատու բնույթի հոդվածներ, վորոնք վերաբե-

րեն զորակոչն ու հավաքներն անցկացնելուն չարաթվա մեջ 3 անգամից վոչ պակաս մինչև հավաքներն ու հավաքների ժամանակ.

դ) միջոցներ ձեռք առնել անցկացնելու յերկրային զորքերի փոփոխիկ կազմին՝ ուսուցման և վարժական հավաքների ժամկետների մասին, վորի համար, յերկրային զորամասերի հրամանատարության հավաքների մասին հրամանները տարածել ամբողջ յերկրամասի վրա, վոր ընդգրկված է յերկրային ձեռակերպմամբ, իր ժամանակին, վոչ ուշ քան 30 որ առաջ, մինչև հավաքների սկիզբը, և տանել փոփոխիկների մեջ համապատասխան կամպանիա.

ե) ղեկավար ցուցմունքներ տալ, վորոնք ապահովեն իր ժամանակին փոփոխիկ կազմի ներկայանալը, ինչպես ուսուցման և վարժական հավաքների, այնպես էլ մոբիլիզացիայի ժամանակ, հայտարարել կոչի միջոցառումներ՝ վարժական հավաքներին ներկայանալու, ձիեր, սայլեր, լծասարք հանձնելու խուսափողների դեմ.

ը) մասնակցել յերկրային զորքերի փոփոխիկ կազմի մեջ համապատասխան աշխատանք անցկացնելուն՝ վարժական հավաքների միջև յեղած ժամանակաշրջանում, համաձայն Ադրբեջանի Հրաձիգ Դիվիզիայի Քաղբաժնի պլանների և դիրեկտիվների:

2. Ժողովրդական Լուսավորության մարմինների վրա դրվում է.

ա) վերացնել նախակոչային տարիք ունեցող յերիտասարդության միջից անգրագիտությունն ու փոփոխիկ կազմի կարմիր բանակայինների միջից կիսագրագիտությունը, վերջին դեպքում-ըստ յերկրային զորամասերի պլանի.

բ) անցկացնել քաղ-լուսավորական աշխատանք նախակոչիկների մեջ՝ միջհավաքների ժամանակաշրջանում և փոփոխիկ կազմի մեջ նրա արձակուրդում գտնված ժամանակ, համաձայն յերկ-

րային զորամասերի ցուցմունքների և ծրագրի․

դ) ամեն կերպ աջակցել նախակոչիկների մեջ ռազմա-քաղաքական աշխատանք կազմակերպելուն և անցկացնելուն՝ միջհավաքների ժամանակաշրջանում և փոփոխիկ կազմի զորական ծառայողների մեջ՝ արձակուրդում գտնված ժամանակ․

դ) կազմակերպել ռազմական անկյուններ լուսավորական բոլոր կազմակերպություններում և խրճիթ-ընթերցարաններում ըստ յերկրային զորամասերի ցուցակի։

3․ Առողջապահության տեղական մարմինների վրա դրվում է․

ա) անցկացնել յերկրային զորամասերի փոփոխիկ կազմի մեջ առողջացման և սանիտարա-պրոֆիլակտիկ (նախազգուշական) միջոցառումներ միջհավաքների ժամանակամիջոցում այն պլանի հիման վրա, որ համաձայնեցրած է դիվիզիայի բժշկի և գնդերի ավագ բժիշկների հետ, նույնպես և աջակցել յերկրային զորամասերի բժշկական կազմին իր աշխատանքում բժշկա-սանիտարական տեսակետից փոփոխիկ կազմին սպասարկելու վարժական հավաքների ժամանակ․

բ) իրականացնել նախակոչիկների և բնակչության այլ խմբերի բժշկա-սանիտարական սպասարկումը, վորոնք ուսուցումն անցել են արտազորային կարգով և անցկացնել նրանց մեջ սանիտարա-լուսավորական աշխատանք․

գ) ապահովել վարժակայանները բժշկա-սանիտարական օգնությամբ՝ նախակոչային պատրաստության անցկացման ժամանակաշրջանում և սահմանել բժշկական վերահսկողություն՝ սովորողների պատրաստության վրա․

դ) ակտիվ մասնակցել բնակչության մեջ տարածելու առողջապահական ծանոթություններ և տեղեկություններ ցույց տալու առաջին օգնությունը՝ հատկապես քիմիական վտանգի պայմաններում։

4. Տեղական հողային մարմիններին դրվում է.

ա) աջակցել յերկրային զորքերին՝ անասնաբուժական տեսակետից առողջացնելու յերկրային զորքերի համալրման շրջանները (район) և սպասարկելու յերկրային զորամասերը, նույնպես և ռազմա-վարժական կայանները՝ անասնաբուժական տեսակետից.

բ) ցույց տալ անասնաբուժական օգնություն յերկրային զորքերի վրա գրանցված ձիակազմին, նույնպես և զորամասերի ձիակազմին, վորոնք ջոկված են ռազմա-վարժական կայանների համար.

գ) մասնակցել յերկրային զորամասերի վրա ձիակազմը գրանցող և վարժական հավաքներին բնակչությունից ընդունող հանձնաժողովի աշխատանքներին.

դ) կազմակերպել անասնաբուժա-լուսավորական աշխատանք՝ նախակոչիկների և յերկրային զորքերի փոփոխիկ կազմի մեջ, ըստ վերջինների ցուցակների և պլանների:

5. Դայրայի (շրջանային) գործադիր կոմիտեների վրա դրվում է.

ա) հաշվի առնել բոլոր զինապարտներին և յերկրային զորքերի փոփոխիկ կազմի զորական ծառայողներին, վորոնք ապրում են տվյալ շրջանի յերկրամասի վրա (դայրա, район) համաձայն հաշվառման գործող կանոնների.

բ) տեղեկացնել իր ժամանակին զորամասի հրամանատարներին՝ փոփոխիկ կազմի անձանց արձակուրդում գտնված ժամանակ իրենց մշտական բնակության տեղից հեռանալու բոլոր դեպքերի մասին.

գ) հսկել փոփոխիկ կազմի հաշվառման տվյալների դրությանը և ստուգել այդ տվյալները.

դ) իր ժամանակին տեղեկացնել փոփոխիկ կազմի անձանց և զինապարտներին, ինչպես ստուգման, վարժական, կարճատև հավաքների մասին

այնպես էլ ռազմական պատրաստության պարապմունքների ժամկետների մասին.

գ) միջոցներ ձեռք առնել բնակարաններ հատկացնելու շրջանի (դայրա, գավառակ) յերկրամասի փոփոխիկ կազմի և զինապարտների հետ պարապելու կամ այլ ռազմական աշխատանքի համար յեկածներին.

ե) միջոցներ ձեռք առնել փնտրել-գտնելու չըներկայացողներին և ներկայանալուց խուսափողներին.

ը) ստուգել յերկրային գործերի վրա գրանցված ձիակազմի հաշվառման դրությունը։

6. Գյուղական խորհուրդների վրա դրվում է.

ա) իր ժամանակին տեղեկացնել զորամասերի հրամատարներին՝ փոփոխիկ կազմի արձակուրդում գտնված ժամանակ նրանց մշտական բնակության տեղից հեռանալու բոլոր դեպքերի մասին.

բ) իր ժամանակին տեղեկացնել փոփոխիկ կազմի զորական ծառայողների անձանց և զինապարտներին, ինչպես 3-ամսյա ուսուցման և վարժական հավաքների ժամկետների մասին, այնպես էլ ռազմական պատրաստության պարապմունքների ժամկետների մասին.

գ) հսկել, որ իր ժամանակին փոփոխիկ կազմը և զինապարտները ներկայանան ուսուցման և վարժական հավաքներին, նույնպես և ռազմական պատրաստության պարապմունքներին.

դ) փնտրել-գտնել ներկայանալուց խուսափողներին.

զ) միջոցներ ձեռք առնել բնակարաններ հատկացնելու՝ տվյալ գյուղը փոփոխիկ կազմի և զինապարտների հետ պարապելու կամ այլ ռազմական աշխատանքի համար յեկածներին.

ե) պահպանել ռազմա-վարժական կայանները միջհավաքների ժամանակաշրջանում։

7. Վերեվում ցույց տված միջոցառումները հա-

ջող անցկացնելու համար բոլոր խորհրդային մարմինները պարտավոր են, յերկրային զորամասերի ցուցմունքների համաձայն, իրենց պլաններով նախատեսել աշխատանքի բոլոր այն տեսակները, վորոնք կապված են յերկրային զորամասերի պատրաստության և աշխատանքի անցկացման հետ:

8. Յերկրային զորքերի կարիքների վրա տեղական միջոցներից արած ծախսերի գումարները վորոշվում և տեղական ֆինանսների մասին կանոնադրությամբ:

Ադրբեջանի Կենտգործկոմի Քարտուղար՝
ՄԱՄԵԴՈՎ.

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (*ձև, որինակ*) ԴԻՎԻԶԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԱՏԵՂՄԱՆ ՄԱՍԻՆ

*(Համալրման ընդհանուր շրջանը. գավառների շրջանների* (округ) *և նահանգների անունը)*

| *Առանձին զորամասերի անունները* | *Կադրերի տարատեղումը* | *Համալրման շրջանը* | *Համալրմ. շրջ. միջ. շառավիղը* | *Ամենից հեռու ընկած կայանի հեռավորությունը:* *Փոփոխիկի բնակության տեղից մինչև հավաքատեղը* | *Ամենից հեռու ընկած կայանի հեռավորությունը:* *Հավաքավայրից մինչև զորամասի շտաբը, ուր անցնում են հավաքը* | *Զորամասի հավաքի համար պահանջած ժամանակը* | *Շրջանացման յեղանակները* |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| *Սույն սյունակում թվել բոլոր առանձին զորամասերը, վորոնք մտնում են դիվիզիայի կազմի մեջ* | | | | | | | |

Ծանոթություն. 1) *Շրջանացումը ցույց տալ մինչև վաշտերն ու խմբերը ներառյալ*: 2) *«Համալրման շրջան» սյունակում ցույց տալ, վոր շրջանի* (округ) *կամ գավառի շրջանից* (район) *կամ վոլոստից են, վորոնցում զորամասերը շրջանացվել*

են: 3) «Շրջանացման յեղանակ» սյունակում ցույց տալ, թե զորամասն ինքնուրույն տեղամաս ունի թե համարվում է ուրիշ տեղից (в накладку) և վոր զորամասից: 4) Տեղեկությունները կցվում է սխեմա մասշտաբում: 5. Սխեմայում պետք է պարզորեն ցույց տալ վարչական բաժանման սահմանները և յուրաքանչյուր զորամասի համալրման շրջանները: Յեթե մեկ վոլոստում կամ շրջանում համալրում են յերկու կամ ավելի զորամաս, այդ դեպքում ամեն մի զորամասի սահմանները պետք է նույնպես մտցնել:

## ՀՐԱՀԱՆԳ

## ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՅԵՎ ՏԱՐԱՏԵՂՄԱՆ, ՆՈՒՅՆՊԵՍ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Յերկրային զորամասերի տարատեղման և շրջանացման մասին տեղեկություններ ներկայացվում են զորամասերի յերկրային (տերրիտորիալ) դրության փոխադրելու, համալրման շրջանների փոփոխության և զորամասերի մասնակի վերաշրջանացման դեպքերում:

2. Ցույց տված տեղեկությունները կազմվում են զորամասի հրամանատարի կողմից, իրեն վստահած զորամասի համար: Դիվիզիաների շտաբները-բոլոր զորամասերի համար, վորոնք մտնում են դիվիզիայի կազմի մեջ, շրջանների (округов) շտաբները-յուրաքանչյուր դիվիզիայի համար առանձին:

3. Զորամասերի շրջանացման և տարատեղման մասին զեկուցումները կազմված են. ա) յերկրա-

յին զորամասերն ըստ ձև № 26 շրջանացնելու և տարատեղելու տեղեկություններից․

բ) դրան կցված է բացատրագիր, որի նպատակն է տալ ընդհանուր տեղեկություններ համալրման շրջանների դրության մասին․

գ) շրջանացման սխեմաների քարտեզը ոչ պակաս 10 վ․ մի դյույմում մասշտաբով ցույց տալով բոլոր զորամասերի ստորաբաժանումների համալրման շրջանները, մինչև վոլոստը ներառյալ:

4․ Բացատրագիրը պետք է կազմվի հետևյալ սխեմայով․

ա) Համալրման շրջանների ընդհանուր դրությունը: *Յերկրային զորամասի ընդգրկած ընդհանուր տարածությունը: Բնակչության խտությունը: Տրանսպորտի միջոցների և հաղորդակցության ճանապարհների-յերկաթգծերի, խճուղիների, նույնպես և տեղական նշանակություն ունեցող ճանապարհների դրությունը: Կապի միջոցներով ապահովությունը, հեռագրական և հեռախոսային ցանց: Կուլտուր-լուսավորական հիմնարկություններ-ու ուսումնական հաստատությունների ցանցը: Տվյալներ առողջապահության մասին-բուժական հիմնարկությունների առկայությունն ու բնակչության սպասարկումը, անասնաբուժական սպասարկումը:*

բ) Շրջանի տնտեսական դրությունը և բնակչության բնութագիրը: *Արդյունաբերական ձեռնարկությունների դրությունը՝ ցույց տալով նրանցում զբաղված բանվորներին ըստ յերեք հիմնական խմբերի՝* 500-*ից և ավելի մարդ,* 100 *մարդուց մինչև* 500 *և* 100 *մարդուց պակաս: Բնակչության հիմնական զբաղմունքները․ գյուղատնտեսությունը, տնայնագործությունը, բնակավայրից դուրս աշխատանքի գնալը* (отхожий промысел), *բնակչության բնութագիրը—սոցիալական կազմը, ազգային կազմը և գրագիտությունը:*

բ) Զինապարտների դրությունը (յերկարատև արձակուրդում գտնված զորական ծառայողների ըստ տարիքի, և արտադրության կարգով առվորողների առկայությունը): Հաշվառական տըվյալներ՝ նախակոչիկների մասին: Յուրաքանչյուր զորամաս փոփոխիկ կազմով համալրելու կարգի մասին նկատառումներ:

գ) Համալրման շրջանում ձիակազմի, սայլերի և ձիասարքի դրությունն ըստ ռազմա-ձիական հաշվառման տվյալների:

դ) Կադրին տեղավորելու պայմանները (պաշտպանության գործանոցներով և ճամբարներով. գործանոցների և ճամբարների վիճակը. շրջաններում ռազմա-ուսումնական ուղեկալների առկայությունն ու նրանց դրությունը):

ե) Շրջանի առանձնահատկությունները, վորոնք ազդեցություն ունեն զորամասերի աշխատանքների վրա:

զ) Ընդհանուր հետևություններ շրջանի դրության և զորամասերի շրջանացման մասին:

Ծանոթություն. Բացատրագիրը կազմելու ժամանակ զորամասերի հրամանատարները պետք է ոգտվեն տեղական խորհրդային մարմինների և ռազմ-կոմիսարիատների հաշվառման վիճակագրական նյութերից:

Ավելի պարզ պատկերացնելու համար, բացատրագրին կարելի յե կցել սխեմաներ, դիագրամաներ և աղյուսակներ:

5. Համալրման շրջանների մասնակի փոփոխության դեպքում շրջանների փոփոխությունների և տարատեղման մասին տեղեկությունները կազմվում են ըստ վերոհիշյալ սխեմայի միայն այն դեպքում, յեթե տեղի յեն ունենում ամբողջ զորամասի շրջանի փոփոխություններ: Շրջանները զորամասի ներսում փոփոխվելու դեպքում ներկայացվում է միայն տեղեկագիր (ведомость) առանց բացատրագրի:

Հավելված 6

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի՝ յերկրային զորամասերը ձիակազմով, գումակի սայլերով և լծասարքով համալրելու մասին, փոփոխիկ կազմի զորական ծառայողների ուսուցման, վարժական և կարճատև հավաքների ժամանակ:

*ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը* վորոշում են.

1. *Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի յերկրային զորամասերը ձիակազմով, գումակի սայլերով և լծասարքով առաջին տարվա ծառայության փոփոխիկ կազմի զորական ծառայողների ուսուցման ժամանակ, նույնպես և վարժական և կարճատև հավաքների ժամանակ համալրելը կատարվում է հետևյալ ձևով. ա) գրանցելով յերկրային հեծյալ զորամասերի վրա շարային տիպի ձիերը, վորոնք պատկանում են յերկրային հեծյալ զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողներին, և այդ զորական ծառայողների ներկայանալը իրենց սեփական շարային ձիերով ուսուցմանն և հավաքներին (հոդ.* 2) *բ) գրանցելով յերկրային զորամասերի վրա այդ զորամասերին շարային և հրետանական ձիեր հանձնելը, նույնպես և գումակի ձիեր, սայլեր և լծասարք հանձնելու, վորոնք պատկանում են պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր հիմնարկություններին, ձեռնարկություննե-*

րին և կազմակերպություններին և առանձին անձանց հիշյալ զորամասերի համալրման շրջաններում (район) (հոդ. 5 և 7). գ) վարձել կամավոր սկզբունքով գումակի ձիեր, սայլեր և լծասարք՝ հիմնարկություններից, ձեռնարկություններից, կազմակերպություններից և մասնավոր անձերից (հոդ. 6):

2. Յերկրային հեծյալ զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները պարտական են ուսուցման, նույնպես և վարժական ու կարճատև հավաքներին ներկայանալ իրենց սեփական շարային ձիերով, յեթե այդպիսին կա զորական ծառայողի տնտեսության մեջ:

Յեթե զորական ծառայողի տնտեսությունը շարային տիպի ձի չունի կամ կա մի այդպիսի ձի, բայց բանող անասունի այլ միավոր չկա, զորական ծառայողն ուսուցմանն ու հավաքներին ներկայանում է առանց ձիու:

Յերկրային հեծյալ զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողների շարային ձիերը, բացառությամբ սույն հոդվածի 2 մասում ցույց տված դեպքերից, գրանցվում են յերկրային զորամասերի վրա զորական ծառայողների իսկական զինվորական ծառայության անցնելու ամբողջ ժամանակ:

Ծանոթություն. Բանող անասունի միավոր հաշվվում է մի ձին կամ մի զույգ յեզը, կամ մեկ ուղտը, կամ մեկ ջորին, կամ ուրիշ տեսակ բանող անասունի համապատասխան քանակ, վոր սահմանված է հրահանգով ներկա վորոշումը կիրառելու համար (հոդ. 15):

3. Հեծյալ զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները, վորոնք ներկայանում են ուսուցման, նույնպես և վարժական ու կարճատև հավաքներին սեփական շարային ձիերով, ուսուցման կամ հավաքի ժամանակվա համար սըր-

վում է վարձատրություն (նորոգության դրամ)։ Հիշյալ վարձատրության չափը վորոշում է ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատը և հայտարարվում է բնակչության՝ ուսուցման, նույնպես և վարժական ու կարճատև հավաքներին ներկայանալու հրամաններում։

4․ Այն տնտեսություններում, վորոնց կազմի մեջ մտնում են յերկրային հեծյալ զորամասերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները, վորոնք զորակոչված են ուսուցման և վարժական հավաքներին սեփական չարային ձիերով, այդ ձիերից ստացած յեկամուտը յերթակա չէ միասնական գյուղատնտեսական հարկով տուրքագրման։

5․ Համալրել հրետանական և չարային ձիերով յերկրային հրաձգային, հրետանական և մասնագիտական զորամասերը՝ յերկրային զորամասերի վրա գրանցելու միջոցով և այդ զորամասերին պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր հիմնարկություններին, ձեռնարկություններին և կազմակերպություններին, նույնպես և առանձին անձանց, ցույց տված համալրման շրջաններում (район), պատկանող ձիերը հանձնելու միջոցով։ Գրանցման յենթակա ձիերի թիվը վորոշվում է գործող հաստիքներով, 50-տոկոս հավելումով։ Ընդվորում ձիերը գրանցվում են 5 տարուց վոչ ավելի ժամկետով։

Յերկրային հեծյալ զորամասերը հոդ․ 2-ի կարգով համալրելու անհնարինության դեպքում, այդ զորքերի չհերքող չարային ձիերի կազմով ապահովելը կատարվում է նույն չարային տիպի ձիերը գրանցելու և այդ ձիերը զորամասին հանձնելու կարգով։

Յերկրային զորամասերի վրա գրանցվելու յենթակա ձիերի քանակը, բաշխվում է գավառական, շրջանային (окружной) կամ նրան համապատասխանող գործադիր կոմիտեյի կողմից համապատասխան ռազմական կոմիսարիատի ներկա-

յացնելու դեպքում ռազմա-ձիական տեղամասերի մեջ, ընդորում պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկություններին, ձեռնարկություններին և կազմակերպություններին պատկանող ձիերի գրանցումը կատարվում է նրանց ունեցած ձիերի քանակի 25 տոկոսից վոչ ավելի չափով:

Գրանցման և հանձնման ենթակա ձիատերերի անվանացուցակը կազմում են գյուղական վայրերում վոլոստային, շրջանային (район) և որանց համապատասխանող գործադիր կոմիտեները, իսկ քաղաքային վայրերում՝ քաղաքային խորհուրդները:

6. Յերկրային բոլոր զորամասերը գումակի ձիերով համալրելը կատարվում է կամավոր սկզբունքների միջոցով՝ վարձելով հիմնարկություններից, ձեռնարկություններից, կազմակերպություններից և մասնավոր անձերից:

Նույն կամավոր սկզբունքների հիմունքներով վարձելու միջոցով կատարվում և յերկրային զորքերը գումակի սայլերով և լծասարքով համալրելը:

7. Յերկրային զորամասերը գումակի ձիերով, սայլերով և լծասարքով լրիվ կերպով, մինչև ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի սահմանած նորմաները համալրելու անհնարինության դեպքում, կամավոր սկզբունքով վարձելու միջոցով (հոդ. 6), համալրումը կատարվում է համաձայն գավառական, շրջանային (окружной) ու որանց համապատասխանող գործադիր կոմիտեների վորոշման, ըստ վորի հիմնարկությունները, ձեռնարկությունները, կազմակերպություններն ու մասնավոր անձինք պետք է հանձնեն իրենց ձիերը, սայլերն ու լծասարքը:

Գումակի ձիերի, սայլերի և լծասարքի ռազմա-ձիական տեղամասերի մեջ բաշխումը և հանձն-

ման յենթակա ձիերի, սայլերի և լծասարքի տերերի անվանացուցակի կազմելը կատարվում է հոդ. 5-ում ցույց տված կարգով, ըստ վորում պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից հանձնման յենթակա ձիերի, սայլերի և լծասարքի քանակը չպետք է գերազանցի նրանց ունեցածի քանակի $25^0/_0$-ից:

8. Ցերկրային զորամասերի վրա ուսուցման և հավաքների (հոդ. հոդ. 5 և 7) ժամանակ ձիեր, սայլեր և լծասարք գրանցելուց և նրան հանձնելուց ազատման յենթակա յեն հետևյալ հիմնարկությունները ու անձինք. ա) ոտարերկրյա դեսպաններն ու առաքելությունները (միսիա), նույնպես և այն անձինք, վորոնք ոգտվում են արտերկրականությամբ, այն չափով վորքան վոր ձիերը, սայլերն ու լծասարքը ծառայում են նրանց անձնական ոգտագործման համար, բ) ոտարերկրյա դեսպանները, յեթե այդ նախատեսված է դեսպանական համապատասխան դաշինքով, գ) ոտարերկրյա քաղաքացիները, յեթե այդ նախատեսված է համապատասխան պայմանագրությամբ. դ) միլիցիայի, քրեական հետախուզության, Միացյալ պետական քաղաքական վարչության և գերատեսչական պահպանության մարմինները. գ) կալանքի տեղերը. ե) փոստի և հեռագրի ժողովրդական կոմիսարիատի և ճանապարհների հաղորդակցության ժողովրդական կոմիսարիատի հիմնարկությունները:

9. Ցերկրային զորամասերին (հոդ. հոդ. 5 և 7) ձիեր, սայլեր և լծասարք հանձնող տերերին տըրվում է վարձատրություն շուկայի միջին գներով: Նույն գներով սահմանվում է վարձու վճարը կամավոր սկզբունքով (հոդ. 6) վարձելու միջոցով համալրելու դեպքերում:

10. Հեծյալ զորամասերի (հոդ. 2) փոփոխիկ կազմի զորական ծառայողների սեփական չարա-

յին գննությունը, գնահատությունն ու ընդունելությունը, նույնպես և (Հոդ․ Հոդ․ 5 և 7) կարգով ներկայացվող ձիերը, սայլերը և լծասարքը կատարվում են հանձնաժողովի կողմից, վորի կազմում է լինելու յերկրային զորամասի (նախագահ) ներկայացուցիչը, անասնաբուժ չկի և տեղական գործադիր կոմիտեյի ներկայացուցիչը:

11․ Այն ձիերի պարենավորումը, պայտելն ու բժշկությունը, վորոնցով համալրվում են յերկրային զորամասերն ուսուցման և հավաքների (Հոդ․ Հդ․ 2, 5, 6 և 7) ժամանակ, յերկրային զորամասերն ընդունվելու րոպեյից և մինչև տերերին վերադարձնելը կատարվում է ռազմական և ծովային գործերի ժողովրդական Կոմիսարիատի հաշվին:

12․ Ձիու ոչնչացումն և անգործ մնալը, յեթե նա չի ընդունված յերկրային զորամասի կողմից, վճարվում է յերկրային դիվիզիայի հրամանատարության սահմանած չափով և կարգով համապատասխան գործադիր կոմիտեյի համաձայնությամբ:

13․ Այն դեպքում յերբ տերը կհրաժարվի յետ ընդունել ձին, սայլը կամ լծասարքը, վորոնք զորամասի ոգտագործման ժամանակ անպետքացել են, և յեթե անպետքությունը կհաստատի ընդունող հանձնաժողովը (հոդ․ 10), տիրոջը տըրվում է վարձատրություն յերկրային զորամասում ձին, սայլը և լծասարքն ընդունելու ժամանակ սահմանված գնահատությամբ: Այն ձիերը, սայլերն և լծասարքը, վորոնց ընդունելուց տերը հրաժարվել է, վաճառվում են աճուրդով ԲԳԿԲ-ում սահմանված կարգով:

Աճուրդով ծախված ձիերից, սայլերից և լծասարքից ստացած գումարը մտցնում են Ֆինանսների ժողովրդական Կոմիսարիատի մերձակա գանձարկղը և հաշվում են Հօգուտ գանձարանի

ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի նախահաշվին:

14. Այն ձիատերերը, վորոնք գրանցված են զորամասերի վրա, հոդ. հոդ. 2 և 5-ում ցույց տված կարգով, գրանցված ձիու վաճառման (ոտարացման) կամ սատկելու) դեպքում, պարտական են այդ մասին տեղեկացնել համապատասխան յերկրային զորամասի հրամատարին վոլոստային, շրջանային (район) և նրանց համապատասխանող գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների միջոցով ըստ պատկանելույն:

15. Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատին հանձնարարվում է ԽՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի հետ համաձայնությամբ, նույնպես և դաշնակից հանրապետությունների ներկայացուցիչների հետ հրահանգ հրատարակել սույն վորոշումը կիրառելու համար:

16. Սույն վորոշման և հրահանգի կիրառման (հոդ. 15) խախտումը հետապնդվում է քրեական կարգով դաշնակից հանրապետությունների օրենսդրության համաձայն:

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի Տեղակալ՝ Վ. ԿՈՒՅԲԻՇԵՎ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝ Ա. ՑԵՆՈՒԿԻՁԵ

(Բանվորա-Գյուղացիական Կառավարության Օրենք. և Կարգադրությունների հավաք. 1926 թ. № 47, հոդ. հոդ. 335-336):

Հավելված 7

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Ե՝

*25 նոյեմբ. 1926 թ.*

*Ռազմա-ծովային ժողկոմ*

*և ԽՍՀՄ ՀՌԽ Նախագահի*

*Տեղակալ՝ ՈՒՆՇԼԻԽՑ*

# ՀՐԱՀԱՆԳ

## կիրառելու համար Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակը ձիակազմով, դումակի սայլերով և լծասարքով համալրելու մասին կանոնադրությունը փոփոխելի կազմի զորական ծառայողների ուսուցման, վարժական և կարճատև հավաքների ժամանակ:

*(Բանվորա-Գյուղացիական կառավարության օրենքների և կարգադրությունների համաքաղվածք* 1926 *թ.* № 47, *հոդ.* 335–336 *և ԽՍՀՄ ՀՌԽ* № 411 *հրամանը* 1926 *թ.*):

## Ա. Ընդհանուր ցուցմունքներ

1. *Յերկրային հեծյալ զորամասերի փոփոխելի կազմի զորական ծառայողների սեփական շարային տիպի ձիերը յերկրային հեծյալ զորամասերի վրա գրանցելը, նույնպես և յերկրային զորամասերի վրա գրանցելը և այդ զորամասերին շարային, հրետանական և դումակի ձիեր, սայլեր և լծասարք հանձնելը, վորոնք պատկանում են պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր հիմնարկություններին, ձեռնարկություններին, կազմակերպություններին և առանձին անձանց հիշյալ զորամասերի ռազմական շրջաննե-*

րում (районах), իրականացվում է կանոնների համաձայն, վոր սահմանվում է սույն հրահանգով:

2. Երկրային զորամասերի վրա գրանցվելուց և ձիերը հանձնելուց ուսուցման և հավաքների ժամանակ յենթակա յեն ազատման հոդ. 8-ի կարգով «Կանոններ ԲԳԿԲ յերկրային զորամասերը ձիակազմով, զումակներով, սայլերով և լծասարքով համալրելու մասին»:

Այն ձիերը, սայլերն և լծասարքը, վորոնք պատկանում են փոստատարներին (ВОЗЧИКАМ ПОЧТ), վորոնք փոստի տեղափոխությունը կատարում են կապալով ըստ պայմանագրության, այն քանակով, վոր պայմանավորված են համապատասխան պայմանագրություններով, և այն ձիերը, սայլերն և լծասարքը, վոր հատկացված են կապի վարչությանը փոստի տեղափոխության համար վոլոստային գործկոմների և գյուղխորհուրդների կողմից, այն պայմանով յերբ նրանք կապած կլինեն համապատասխան պայմաններ կապի վարչության հետ մի տարուց վոչ պակաս ժամկետով և բացի դրանից՝ ա )յն հովատակներն և զամբիկները, վորոնք հովանավորված են օրենքով պահպանելու համար ցեղական անասնաբուծությունը.

բ) քաղաքացիական անասնաբուժական բակտերիոլոգիական (մանրեաբանական) լաբորատորիաների փորձված և մարզված ձիերը:

3. Երկրային զորքերում ձիերի, սայլերի և լծասարքի ծառայության համար պետքական լինելու պայմանները վորոշվում է կանոններով, վորոնք հայտարարված են «Ձիերի, սայլերի և լծասարքի հաշվառման ժամանակավոր կանոններում»:

4. Երկրային զորամասերի վրա ձիերը, սայլերն և լծասարքը գրանցելուց խուսափելու պա-

տասխանատվությունը, հանձնման կայաններին հանձնելու չեթակա ձիերը, այլերն և լծասարքը ներկայացնելու համար, նույնպես և սեփական գրանցված ձիով հավաքներին ներկայանալուց խուսափելու դեպքերի համար, առանց հարգելի պատճառների, վորոշվում է Դաշնակից Հանրապետությունների համապատասխան օրենսդրությամբ:

## Բ. ԶՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՁԻԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԵԾՅԱԼ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ՑԵՎ. ԶՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ՁԻԵՐՈՎ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ:

5. Ձիերի գրանցումը կատարվում է փոփոխիկ կազմի զորական ծառայողների շարային տեղի սեփական ձիերը յերկրային զորամասերի ցուցակներում անցկացնելու միջոցով:

6. Գրանցումը կատարվում է. ա) զինապարտների խակական զինվորական ծառայության հերթական զինակոչների ժամանակ և բ) նոր կազմակերպումների և վերաշրջանացումների յերկրային հեծյալ զորամասերի դեպքում փոփոխիկ կազմում նշանակելու ժամանակ:

7. Սեփական շարային ձիերի գրանցումը հերթական զորակոչներին կատարվում է զինակոչային հանձնաժողովների կողմից, վոր կազմվում են հաստված VI կարգով՝ Օրենք պարտադիր զինվորական ծառայության մասին:

Զինակոչային հանձնաժողովները սեփական ձիերի գրանցումը կատարում են, ղեկավարվելով հաշվա-ձիական տոմսերով, վոր տնտեսության մեջ ունեն զորակոչվող ձիերն և նախնական այն ցուցակներով, վոր հավաքում են զորամասերի

Շտաբները նախակոչային պատրաստության ժամանակ։

8․ Սեփական շարային ձիերի նոր կազմակերպումների և վերաշրջանացման ժամանակ գրանցումը կատարվում է հատուկ հանձնաժողովների կողմից, վորոնք կազմվում են յերկրային զորամասերը համալրելու համար փոփոխիկ կազմով ԲԳԿԲ Գլխավոր Վարչության ցուցմունքների կարգով։

9․ Փոփոխիկ կազմի զորական ծառայողները, վորոնք իրենց տնտեսության մեջ մեկ շարային ձի ունեն, բանող անասնի ուրիշ միավորի բացակայության դեպքում ազատվում են սեփական ձիերը յերկրային հեծյալ զորամասերի վրա գրանցելուց։

10․ Այն դեպքում յերբ անհնար է յերկրային հեծյալ զորամասերը լրիվ կերպով համալրել շարային ձիերով 1-ին հոդ․ կարգով, այդ զորամասերը, չհերքող շարային ձիակազմով ապահովելը կատարվում է պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր ձեռնարկությունների և առանձին անձանց շարային տիպի ձիերի գրանցման կարգով և նրանց այդ զորամասերին հանձնելը։

11․ Յերկրային հեծյալ զորամասերի վրա գրանցված շարային ձիերը նշանակվում են համապատասխան հեծյալ զորամասերի փոփոխիկ կազմի ձիերի ցուցակում և հանվում են ռազմա-ձիական ընդհանուր հաշվառումից տեղական ռազմական կոմիսարիատներում զորական ծառայողների իսկական զինվորական ծառայության անց կենալու ամբողջ ժամանակ։

12․ Փոփոխիկ կազմի զորական ծառայողների յերկրային հեծյալ զորամասերում գտնվելու ընթացքում գրանցված սեփական շարային ձի-

երի վրա տարածվում է վաճառման և փոխանակման իրավունք ուրիշ գրանցված ձիով:

13. Փոփոխելի կազմի զորական ծառայողների գրանցված ձիու վաճառման և շարային տեղի ձիու նոր ձեռք բերած դեպքում, նույնպես և փոխանակության դեպքում, զորական ծառայողները պետք է ներկայանան Հերթական ստուգմանը, վարժական և կարճատև հավաքներին նոր ձեռք բերած կամ փոխանակված ձիով:

14. Զորական ծառայողների սեփական ձիերը երկրային հեծյալ զորամասերի ցուցակներից հանելը կատարվում է հետևյալ դեպքերում. ա) զորական ծառայողների իսկական զինվորական ծառայության ժամկետը երկրային զորամասերում վերջացնելուց հետո արձակվելու, բ) գրանցված ձիու սատկելու կամ վաճառման դեպքում, գ) ձին շարային ծառայության կատարելու համար անպետք ճանաչվելու դեպքում:

15. Երկրային հեծյալ զորամասերի փոփոխելի կազմի զորական ծառայողները, որոնց սեփական շարային ձիերը գրանցված են, պարտական են ներկայանալ և անցնել ստուգումը, վարժական և կարճատև հավաքներն իրենց սեփական շարային ձիով:

16. Զորական ծառայողներին գրանցված ձիով ստուգմանը, վարժական և կարճատև հավաքներին չներկայանալը թույլատրվում է հետևյալ դեպքերում. ա) սատկելու, բ) ձիու հիվանդության, վկայված անասնաբուժչկի կամ բուժակի և տեղական գործկոմների կողմից, գ) ձիու վաճառման:

17. Փոփոխելի կազմի զորական ծառայողների ստուգման և վարժական հավաքների ժամանակ օգտագործված սեփական ձիու վարձատրության չափը վորոշում է ամեն տարի Ռազմածովային Ժողովրդական Կոմիսարիատը:

18. *Կարճատև հավաքների ժամանակ փոփոխիկ կազմի զորական ծառայողներին վոչ մի վարձատրություն չի տրվում, նույնպես պարենավորման և պայտվածքը կատարվում է ձիատիրոջ հաշվին:*

19. *Ուսուցման և վարժական հավաքների ժամանակ ձիու սատկելու կամ փչանալու դեպքում, վոր կատարվել է վոչ տիրոջ մեղքով, և վերջինիս ձին ընդունելուց հրաժարվելու դեպքում, այդ դեպքն ընդունող հանձնաժողովի վավերացնելուց հետո— ձիատերը վարձատրվում է ձիու արժեքով այն գնահատությամբ, վոր արված է ընդունելու ժամանակ:*

*Սատկած կամ փչացած ձիու վարձատրությունը տրվում է նրա տիրոջը, հավաքները վերջանալու որվանից մի շաբաթից վոչ ուշ:*

20. *Գրանցված ձիերի հաշվառումը զորամասերում կատարվում է ԲԳԿԲ Գլխավոր Վարչության ցուցմունքների համաձայն:*

## Գ. ՇԱՐԱՅԻՆ ՅԵՎ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՁԻԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՅԵՎ ՀԱՆՁՆՈՒՄԸ

21. *Յերկրային հրաձգային, հրետանական և մանադրիտական զորամասերը հրետանական և շարային ձիերով համալրելը կատարվում է յերկրային զորամասերի վրա գրանցելու և այդ զորամասերին այն ձիերը հանձնելու միջոցով, վորոնք պատկանում են պետական, կոոպերատիվ, հասարակական և մասնավոր հիմնարկություններին, ձեռնարկություններին և կազմակերպություններին, նույնպես և հիշյալ զորամասերի համալրման շրջաններում զորամասերի հրամատարները տեղական ռազմական կոմիսարիատներին հայտնում են յերկրային զորմասերում գրանցելու յենթակա ձիերի քանակի մասին, վորոնք գանվում են ընդ-*

համար ռազմա-ձիական հաշվառման մեջ՝ ցույց տալով գրանցման շրջանները (районы):

23․ Տեղական ռազմական կոմիսարիատները զորամասերի հայտարարության հիման վրա կազմում են պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկությունների և առանձին անձանց գրանցման յենթակա ձիերի բաշխումն և այդպիսին ներկայացնում են գավառական (շրջանային окружным) գործադիր կոմիտեներին հաստատելու համար:

24․ Հաստատված հայտարարությունը տեղական ռազմական կոմիսարիատները հաղորդում են քաղաքային խորհուրդներին, վոլոստային գործկոմներին, ըստ պատկանելույն, և վերջինները կազմում են ձիատերերի ցուցակները, վորոնց ձիերը յենթակա յեն գրանցման:

25․ Ձիատերերի ցուցակները կազմելու ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալ ցուցմունքներով․ ա) առաջին հերթին գրանցման յենթակա յեն պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկությունների շարային և հրետանական ձիերը․ բ) յերկրորդ հերթին՝ այն ձիատերերը, վորոնց տնտեսությունն ամենից շատ քանակով ձիեր ունի:

26․ Շարային և հրետանական ձիերը գրանցվում են մինչև հինգ տարի ժամկետով:

27․ Յերկրային զորամասերի փոփոխելի կազմի ցուցակի բաշխման կարգով վերցրած ձիերի հետացումը կատարվում է․ ա) գրանցված ձիու սատկելու կամ վաճառվելու դեպքում, բ) ձին շարային ծառայություն կատարելու համար անպետք համարելու դեպքում:

28․ Յերկրային զորամասերի փոփոխելի կազմի շարային և հրետանական ձիերը գրանցված լինելու ընթացքում ամեն անգամ զորամասերի հրամանատարների հատուկ կարգադրությամբ բերվում

են ուսուցման և վարժական հավաքների 5 տարվա ընթացքում 11 ամսից վոչ ավելի, իսկ մեկ տարվա ընթացքում յերեք ամսից վոչ ավելի տեվողությամբ:

29. Գրանցվածների թվից ուսուցման և վարժական հավաքներին բերման յենթակա ձիերի քանակն ամեն տարի վորոշվում է դիվիզիաների հրամատարների կողմից և հաստատվում են գավառականից (շրջանային—окружных) վոչ ցած տեղական գործկոմների կողմից:

30. Ձիատերերի ցուցակները կազմելու ժամանակ, վորոնց ձիերը բերվում են ուսուցման և վարժական հավաքներին, առաջին հերթին պետք է նշանակել այն ձիատերերը, վորոնց հանձնելը չի անդրադառնում տնտեսության դրության վրա:

31. Ցերկրային զորամասերի վրա գրանցված ձիերը, ուսուցման և վարժական հավաքներին բերելու ժամանակ յենթարկվում են զննության հանձնաժողովների կողմից, վորոնց կազմում մտնում են յերկրային զորամասի ներկայացուցիչը (նախագահ), անասնաբուժիշկը և տեղական գործկոմի ներկայացուցիչը: Հանձնաժողովներն արձանագրություն են կազմում ձիու դրության մասին և կատարում են նրա արժեքի գնահատությունը:

32. Ցերկրային զորամասերին ձիեր հանձնող տերերին, վճարվում է վարձատրություն շուկայի միջին գներով:

33. Ձիուն ուղեգրամ և չաշխատած օրերի համար, յեթե վերջինս չի ընդունվել յերկրային զորամասի կողմից, վճարվում է յերկրային դիվիզիայի հրամատարության կողմից սահմանված չափով և կարգով համապատասխան գործադիր կոմիտեների համաձայնությամբ:

## Դ. ԿԱՄԱՎՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՅԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԵՐԻՑ ԳՈՒՄԱԿԻ ՁԻԵՐ, ՍԱՅԼԵՐ ՅԵՎ ԼԾԱՍԱՐՔ ՎԱՐՁԵԼԸ:

34. *Յերկրային բոլոր զորամասերը զումակի ձիերով համալրելը կատարվում է կամավոր ըսկզբունքներով հիմնարկություններից, ձեռնարկություններից, կազմակերպություններից և մասնավոր անձերից վարձելու միջոցով: Նույն այդ կամավոր սկզբունքներով, վարձելու միջոցով, կատարվում է յերկրային զորքերը զումակի սայլերով և լծասարքով համալրելը:*

Ծանոթություն.— *Այն դեպքում յերբ անհնար է յերկրային զորամասերը զումակի ձիերով, սայլերով և լծասարքով մինչեվ սահմանված չափը (նորման) լրիվ համալրել կամավոր սկզբունքներով վարձելու միջոցով, մինչեվ վորոշված չափը համալրումը կատարվում է գավառական, շրջանային* (ОКРУЖНЫЯ) *և նրանց համապատասխանող զործադիր կոմիտեների վորոշման համաձայն, այն կարգով, վոր ցույց է տրված սույն հրահանգի «Գ» հատվածում:*

35. *Ձիերի գնումը, գնահատությունը և ընդունելությունը կամավոր սկզբունքներով կատարվում է սույն հրահանգի հոդ. 31-րդի համաձայն:*

*ԲԳԿԲ Գլխավոր Վարչության Պետ՝*

*Ս. ԿԱՄԵՆԵՎ*

(*ԽՍՀՄ ՀԶԽ հրամ*—1926 *Թ.* № 650):

«Հաստատվում է»՝

Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ և ԽՍՀՄ ՀՌԽ նախագահ՝ ՈՒՆՇԼԻԽՏ

29 մարտի 1928 թիվ.

ԽՍՀՄ ճանապարհների և հաղորդակցության ժողովրդական կոմիսարի տեղակալ՝ ՍՈՒԼԻՄՈՎ.

17 մարտի 1928 թիվ.

## ԿԱՆՈՆՆԵՐ

Զինվորական փոխադրական փաստաթղթերն օգտագործելու այն զորական ծառայողների կողմից, վորոնք իսկական զինվորական ծառայություն անցել են ԲԳԿԲ յերկրային զորքերի փոփոխիկ կազմում փոխադրվելու ուսուցման և վարժական հավաքներն անցնելու համար:

1. *Իսկական զինվորական ծառայությունը յերկրային զորքերի փոփոխիկ կազմում անցած զորական ծառայողները, գնում են յերկաթուղով և ջրային ճանապարհներով իրենց բնակության տեղից մինչև յերկրային զորամասերում ուսուցման և վարժական հավաքների կայանները. ա) միջին, ավագ և բարձր պետկազմն ինքնուրույն, մենակ կարգով. բ) շարային և կրտսեր պետկազմը՝ ինքնուրույն մենակ կարգով կամ խմբական կազմակերպված խմբերի կազմի կարգով:*

2. *Փոփոխիկ շարային և պետկազմի զորական ծառայողները, վորոնք գնում են յերկրային զորամասերը մենակ կարգով, փոխադրությունը կատարում են ըստ զինվորական փոխադրական փաստաթղթերի—«վկայականների», որ տվել են այդ անձանց, կանոնների հոդ. հոդ. 15 և 16-ի սահմանված կարգով, վոր հաստատված է ԽՍՀՄ ՀՌԽ 1926 թ. № 709 հրամանում:*

Ծանոթություն 1.— *Այն դեպքերում, յերբ միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք պարտական չեն անձամբ ներկայանալու յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում նշանակվելու, նրանց «վկայականներ» ուղարկվում են: Անձամբ ներկայանալու պարտականները փոփոխիկ կազմում նշանակվելու համար ներկայանում են իրենց միջոցներով:*

Ծանոթություն 2.— *Մենակ կարգով փոխադրության ժամանակ «վկայականները» փոխարինվում են ուղետոմսերով «Զորքերը փոխադրելու կանոնով 1927 թ.» (§ 39) սահմանված կարգով, ընդ վորում միջին, ավագ և բարձր պետկազմի զորական ծառայողները, վորոնք ներկայացնում են «վկայականներ» կանգառման կետերում վոր տեղավորված է յերկրային զորամասից մոտիկ յերկաթուղու վրա (նավագնացության), միաժամանակ զանձարկղին ներկայացնում են «վկայականների» հետ նույնպես և անհատական տեղեկություններ, վորոնք ցույց են տրած սույն կանոնների հոդ. 8-ի ծանոթության մեջ:*

Ծանոթություն 3.—*Ամեն մի «վկայական» հատկացրած է միայն մի անձի տեղափոխության համար, և մի «վկայականով» կարելի յե ստանալ միայն մեկ տոմս յեր-*

*կայծուղով կամ ջրային ճանապարհով գնալու։*

3. *Փոփոխիկ չարային և կրտսեր պետկազմի զորական ծառայողները, որոնք յերկային զորամասերն են գնում կազմակերպված խմբերի կազմով, նախապես հավաքվում են յերկրային զորամասի հրամատարի ցույց տված տեղերը, վորտեղ նրանց ընդունելու և ուղեկցելու համար գործուղվում են յերկրային զորամասի կազմի հրամատարական կամ հրամա-քաղաքական կազմից։*

Ծանոթություն.— *Նախնական հավաքի կայաններում փոփոխիկ կազմի զորական ծառայողները ներկայանում են ինքնուրույն կերպով և իրենց միջոցներով։*

4. *Այն դեպքում, յերբ փոփոխիկները, հավաքի նախնական կայանից մինչև յերկրային զորամասը գնում են յերկաթուղով կամ ջրային ճանապարհով, այդ փոխադրության համար փոփոխիկներին ուղեկցելու համար գործուղված իրենց մարդկանց, յերկրային զորամասը տալիս է զինվորական փոխադրական փաստաթղթեր—պահանջագրեր ըստ ձև 1 (կամ ըստ ձև 2, յեթե փոփոխիկների խումբը գնում է զինվորական չարանների գնալու համար սահմանված կարգով). լրացրած բնագրով։ Պահանջագրի մեջ փոխադրվող անձանց քանակը նշանակելու ժամանակ այդ թըվում մտցվում է նաև ուղեկցողը։*

*Այս դեպքում փոփոխիկների տեղափոխությունը չի կատարվում ըստ «վկայականների»։*

Ծանոթություն.— *Կազմակերպված կարգով յերկրային զորամաս գնացող փոփոխիկների տեղափոխությունը կատարվում է յերկաթուղով կամ ջրային ճանապարհներով միայն այն դեպքում, յերբ հավաքի նախնական կայանի և յերկրային զորամասի միջև յեղած տարածությունը*

30 կիլոմետրից ավելի չէ։ Հակառակ դեպ-
քում փոփոխիկները գնում են յերթային
կարգով։

5. Վաղորոք նստելու (посадка) կայարա-
նը (նավահանգիստը) հասնելով փոփոխիկներին
ուղեկցողն իսկույն և յեթ նախազգուշացնում է
կայարանի (նավահանգստի) գանձարկղին պարե-
տի միջոցով (նրա բացակայության դեպքում կա-
յարանապետի (նավահանգստի պետի) միջոցով
չընդունելու փոփոխիկ կազմի անձերից ծառայու-
թյան գրքույկներում (հաշվա–ռազմական տոմ-
սերում) փոխադրության համար յեղած «վկայա-
կանները» մինչեվ փոփոխիկներ տանող գնացքի
(նավի) մեկնելը, և ստուգելով ներկայացած փո-
փոխիկների փոխադրության համար տված «պա-
հանջագրի» մեջ ցույց տված թվի հետ, վերջինս
ներկայացնում է կայարանի (նավահանգստի) գան-
ձարկղին ուղետոմսերով փոխարինելու (հարկա-
վոր դեպքերում բեռնագրի կրկնակներով։

6. Այն դեպքում, յերբ նստելու կայարանը
(նավահանգիստը) յեկած փոփոխիկների քանակը
փոքր թիվ կազմի, քան ցույց է տրված «պահան-
ջագրի» մեջ, այդ դեպքում ուղեկցողի հայտարա-
րության հիման վրա, կայարանապետը (նավա-
հանգստի պետը), «պահանջագրի» բնագրում վոչ
մի ուղղում չմտցնելով «պահանջագրերի» լու-
սանցքներում աջ կողմից վերեվում մակագրում է՝
«ընդունված է փոխադրելու . . . . . (ան-
ձանց թիվը»)։ Այդ մակագրության տակ ստորա-
գրում է կայարանապետը (նավահանգստի պետը)
և հաստատում է վերջինիս կնիքով ուղեկցող ըս-
տորագրությամբ։

7. Ցերկրային զորամասերի փոփոխիկ կազմի
չարային և կրտսեր պետկազմի զորական ծառա-
յողներին ուսուցման կամ վարժական հավաքնե-
րի տեղափոխության ժամանակ նույն կանոննե-

րի հոդ. հոդ. 3 և 4 նախատեսված կարգով, նրանց ծառայության գրքույկներում յեղած «վկայականները» մնում են, վորպես չօգտագործվածներ, այդ գրքույկներին կպցրածներ և թողնում են այդ անձանց կրկնական վարժական հավաքին տեղափոխելու համար նրանց ինքնուրույն կերպով մենակ կարգով ներկայանալու դեպքում:

8. Տրանսպորտի մարմինները «վկայականները» ընդունում են փոխադրելու ուղետոմսերով (յերկաթուղային, ջրային) վարժական հավաք հայտարարելուն պես:

Տրանսպորտի համապատասխան մարմիններին յերկրային զորամասում ուսուցում կամ վարժական հավաք նշանակելու մասին տեղեկացնելը և «վկայականներով» փոխադրելու ընդունելը կատարվում է հետևյալ ձևով.

Համապատասխան յերկրային զորամասը, վաղօրոք զորամասի հրամանում հայտարարելով, ուսուցում կամ վարժական հավաք կատարելու մասին, հրամանի պատճեն ուղարկում է Ռազմա-ծովային ժողկոմատի յերկրային զորամասին ամենից մոտ յերկաթուղու (պետնավագնացության վրա) ներկայացուցիչներին, վորտեղից պետք է կատարվի փոփոխիկ կազմի տեղափոխությունը:

Ռազմա-ծովային ժողկոմի յերկաթուղու վրա յեղած (պետ-նավագնացության վրա) ներկայացուցիչը հրամանի պատճենն ստանալուն պես իր ժամանակին յերկաթուղին (պետ-նավագնացությունն) իրազեկ է դարձնում հրամանում ցույց տված ժամկետից սկսած, այն անձանց տեղափոխության համար ընդունելու անհրաժեշտությունը, վորոնք «վկայականներ» են ներկայացնում:

Ծանոթություն.— Միջին, ավագ և բարձր պետկազմի անձերից տրանսպորտի

մարմինններն ընդունում են «վկայականներ» նաև Թաղմա-ծովային ժողկոմի ներկայացուցչի չտեղեկացրած ժամանակ, յերբ պետկազմի անձինք գանձարկղին են ներկայացնում անձնական տեղեկագրեր յերկրային զորամասերի հրամատարներից կամ ռազմական կազմակերպություններից վարժական հավաքին կանչվելու մասին, վորոնք պարունակում են «վկայականները» օգտագործելու մասին ցուցմունքներ։

9. Ծառայության կարիքների կամ անձնական կարիքների համար յերկրային զորամասում փոփոխիկ կազմի ուսուցման ժամանակ կամ վարժական հավաքը կատարելու ժամանակ փոխադրության համար («վկայականների» օգտագործումը կտրականապես արգելվում է։

Ուսուցման կամ վարժական հավաքի վերջանալուց հետո, փոփոխիկ կազմի զորական ծառայողներին կարմիր բանակայինների գրքույկները և հաշվա-ռազմական տոմսերը վերադարձնելու ժամանակ յերկրային զորամասը—

1) ստուգում է «վկայականների» առկայությունը կարմիր բանակայինների ծառայության գրքույկներում և տալիս է նոր «վկայականներ» այն դեպքերում, յերբ հին «վկայականները» ժամանակի ընթացքում անպետքացել են (պատռված են, քրքրված են և այլն), կամ յեթե «վկայականներն» օգտագործվել են յերկրային զորամաս տեղափոխվելու ուսուցման կամ վարժական հավաքի համար.

2) տալիս է նոր «վկայականներ» փոփոխիկ պետկազմի միջին, ավագ և բարձր զորական ծառայողներին, վորոնք օգտագործել են հին «վկայականները» վարժական հավաքի գնալու համար և

3) անօրինական կերպով «վկայականներն» օգ-

տագործելու դեպքերը յերևան բերելու դեպքերում մեղավորներին յենթարկել պատասխանատվության:

10. Տրանսպորտի գործակալների կողմից այն «վկայականների» ընդունելությունը, վոր ներկայացնում են փոփոխիկ կազմի զորական ծառայողները տեղափոխության համար հակառակ սույն կանոնների (հոդ. 9), վոչ մի տեսակ պահանջանք ռազմա-ծովային ժողկոմի կողմից տրանսպորտի մարմիններին չի արվում, յերկաթգծում (նավագնացության մեջ) «վկայականներն» ընդունելու մասին համապատասխան տեղեկության առկայության դեպքում, «վկայականը» ուղևտոմսով փոխարինելու դեպքում:

11. Յերկրային զորքերի փոփոխիկ կազմի զորական ծառայողները բնակավայրը փոխելու ժամանակ, վոր կապ չունի նրան այլ յերկրային զորամաս փոխադրելու հետ, բայց կապված է «վկայականում» նշանակված առաքման կայանի (նավահանգստի) փոփոխության հետ, փոփոխիկ կազմի զորական ծառայողը ներկայացնում է (յերկրային զորամասից 30 կիլոմետրից ավելի հեռավորության վրա ապրելու դեպքում ուղարկում է) յերկրային զորամասին ծառայության կարմիր բանակայինի գրքույկը (հաշվա-ռազմական տոմս):

Յերկրային զորամասն այդ փաստաթուղթը ստանալով, ուղղում է՝ «վկայականի» մեջ (կտրոնի և արմատի վրա) նշանակած առաքման կայանը (նավահանգիստը) նորով և «վկայականների» լուսանցքներում համապատասխան ստորագրություններից և կնիքից հետո բացատրություն է տալիս մտցրած փոփոխության մասին և վերադարձնում է (ուղարկում է) զորական ծառայողին ծառայության կարմիր բանակայինի գրքույկը (հաշվա—ռազմական տոմսը):

12. Բնակավայրը յերկրորդ անգամ փոխելու դեպքում այն պայմաններում, վոր նախատեսված և նախորդ 11 հոդվածով, յերկրային զորամասը կարմիր բանակայինի ծառայության գրքույկից (հաշվառ—ռազմական տոմսից) կտրում ե «վկայականը» կտրոնի հետ միասին և կպցնում ե գրքույկում (տոմսում) նոր «վկայական»: Հին «վկայականը» մարում և կարում գործում:

13. Փոփոխիկ կազմի զորական ծառայողներին ուրիշ յերկրային զորամասեր փոխադրելու դեպքում, այն յերկրային զորամասերը, վորոնց ծառայության մեջ են գտնում տվյալ զորական ծառայողները, պահանջում են փոխադրվողներից ներկայացնելու (ուղարկելու) կարմիր բանակայինների ծառայության գրքույկները (հաշվառազմական տոմսը) և, այդպիսիները ստանալով, նրանց մեջ գտնված «վկայականները» կտրում են կտրոնների հետ միասին, մարում են նրանց և կարում են գործում:

Նոր «վկայականներ» մնացած բոլոր փաստաթղթերի հետ միասին զորական ծառայողները ստանում են այն յերկրային զորամասերից, վորտեղ նրանք փոխադրվում են, վորի մասին փոխադրությունը իրագործող յերկրային զորամասը, այդ զորական ծառայողներին իրազեկ են անում:

14. Զորական ծառայողին յերկրային զորամասի փոփոխիկ կազմի ցուցակներից հանելու դեպքում, յերկրային զորամասը պահանջում ե զորական ծառայողից (կամ հիվանդության, մահվան, ազատազրկման և այլ դեպքերում համապատասխան մարմիններից կամ զորական ծառայողի ազգականներից), ներկայացնելու կարմիր բանակայինի ծառայության գրքույկը (հաշվառազմական տոմսը) և այդպիսին ստանալով կտրում ե նրա միջի «վկայականը» կտրոնի հետ միասին, մարում ե այն և կարում գործում:

Ծանոթություն.—*Փոփոխիկ կազմի զորական ծառայողի իսկական ծառայության ժամկետը վերջանալուց հետո պահեստ արձակվելու ժամանակ, յեթե նա «վկայականը» չի ոգտագործել, յերկրային զորամասը կատարում և այն գործողությունները, վորոնք ցույց են տված սույն հոդվածում, վերջին վարժական հավաքը վերջանալուց անմիջապես հետո:*

15. *«Վկայականների» կորցնելու կամ հափշտակման ինչպես չլրացրած, նույնպես և լրացրած բնագրով կիրառվում և «Զորքերի տեղափոխության կանոնադրությամբ* 1927 *թ.»* (§§43—49) *սահմանված կարգով, ընդվորում բոլոր դեպքերում կորցրածների կամ հափշտակվածների փոխարեն նոր «վկայականներ» տալը, յերկրային զորքերի փոփոխիկ կազմի զորական ծառայողներին կատարվում և այն յերկրային զորամասերի կողմից, վորոնց ծառայության մեջ գտնվում են այդ զորական ծառայողները:*

Ծանոթություն.— *Ժամկետին «վկայական» չստանալը զորական ծառայողին չի ազատում ժամկետին ներկայանալու վարժական հավաքին, վորպիսի դեպքերում տեղափոխությունը կատարվում և իր հաշվին, ընդհանուր սակացուցակով, առանց կատարված ծախսերը հատուցելու իրավունքի:*

16. *Այն բոլոր դեպքերում, յերբ ծառայության և կ. բանակայինների գրքույկները կամ հաշվառ—ռազմական տոմսերը յերկրային զորքերի փոփոխիկ կազմի անձինք ներկայացնում են (ուղարկում են) տեղական ռազմական վարչության մարմիններին, վերջինները ստուգում են նրանցում «վկայականների» առկայությունը, իսկ այն դեպքերում, յերբ անհրաժեշտություն կա «վկայական-*

*ները նորերով փոխելու կտրում են «վկայականները» կտրոնների հետ միասին գրքույկներից (տոմսերից) և ուղարկում են այդ «վկայականները» տվող յերկրային զորամասերը նրանք փոխարինելու համար (կամ ուղղելու)։*

*Յերկրային զորամասից նոր «վկայական» ստանալով տեղական ուսդմական վարչության մարմինը կպցնում է այն փոփոխիկի գրքույկի մեջ (տոմսի)։*

*ԲԳԿԲ Շտաբի Պետի տեղակալ՝* **ՊՈՒԳԱՉԵՎ.**

---

Հաստատվում է
29 մարտի 1928 *թ.*

*Ռազմա-ծովային ժողկոմի և ԽՍՀՄ ՀՌԽ նախագահի տեղակալ* **ՈՒՆՇԼԻԽՏ**

*ԽՍՀՄ Ճանապարհների Հաղորդակցության ժողովրդական Կոմիսարի տեղակալ՝* **ՍՈՒԼԻՄՈՎ.**

17 *մարտի* 1928 *թ.*

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2-ՐԴ**

§ 48-*ին «Կանոններ զորքերի տեղափոխության մասին* 1927 *թ.»*

Ծանոթություն 2.— *Կորցրած կամ հափշտակված «վկայականների» վերականգնելը կատարվում է յերկրային զորամասերի կողմից բոլոր դեպքերում, վորոնց ծառայության մեջ գտնում են փոփոխիկ կազմի զորական ծառայողները։*

*ԲԳԿԲ ՇՏաբի Պետի տեղակալ՝* **ՊՈՒԳԱՋԵՎ.**

(*ԽՍՀՄ-ՀՌԽ հրամանը* 1928 *թ.*, № 97)։

---

Հավելված 9

Փոփոխիկ կազմի զորական ծառայողների ընդունելության սխեման:




Ծանոթություն.—*Զանազան տեսակ աշխատանքների կատարելը նայած տեղական պայմաններին կարող է կատարել միաժամանակ, յեթե նրանք միևնույն վերջնական նպատակն ունեն: Որինակ՝ մազեր խուզելն և հաջորդաբար բաղնիք ուղարկելն և. ոճառ ստանալն և այլն:*

# ՑԱՆԿ


էջ

ԽՍՀՄ ՀՌԽ հրաման № 102 . . . . . . . . . . 3

ՀԱՏՎԱԾ I. Հիմնական դրույթյուններ . 5

ՀԱՏՎԱԾ II. Ցերկրային զորամասերի շըր-
ջանացումը . . . . . . . . 8

ՀԱՏՎԱԾ III. Ցերկրային զորամասերի կադ-
րերի տարատեղումը . . . . 15

ՀԱՏՎԱԾ IV. Ցերկրային զորամասերը
կադրային կազմով համալրելը . . 17

ԳԼՈՒԽ 1. Պետկազմով և շարային կազմով
համալրելը . . . . . . . . . . 17

ԳԼՈՒԽ 2. Ցերկրային զորամասերի զորա-
կան դպրոցների համալրման առանձնահատ-
կությունները . . . . . . . . . 17

ՀԱՏՎԱԾ V. Ցերկրային զորամասերը փո-
փոխիկ կազմով համալրելը . . . 21

ԳԼՈՒԽ 1. Բարձր, ավագ և միջին պետ-
կազմով համալրելը . . . . . . . . 21

ԳԼՈՒԽ 2. Կրտսեր պետկազմով համալրելը 24

ԳԼՈՒԽ 3. Շարային կազմով համալրելը . 26

ԳԼՈՒԽ 4. Նոր կազմակերպումների ժամա-
նակ փոփոխիկ կազմով համալրելը . . 28

ԳԼՈՒԽ 5. Ցերկրային զորամասերը վերա-
շրջանացման ժամանակ փոփոխիկ կազմով
համալրելը . . . . . . . . . . . 31

ՀԱՏՎԱԾ VI. Ցերկրային զորամասերը
ձիակազմով համալրելը . . . . 32

ՀԱՏՎԱԾ VII։ Ծառայության անցնելը յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում . . . . . . . 33

ԳԼՈՒԽ 1։ Միջին, ավագ և բարձր պետ-կազմի ծառայության անցնելը . . . . 33

ԳԼՈՒԽ 2։ Փոփոխիկ կրտսեր պետկազմի ծառայության անցնելը . . . . . 36

ԳԼՈՒԽ 3։ Փոփոխիկ շարային կազմի ծառա-յության անցնելը . . . . . . . 38

ԳԼՈՒԽ 4։ Փոխհաշվումներ, փոխա-դրություններ և գործուղումներ . . . 42

ԳԼՈՒԽ 5։ Բնակավայրի փոխելը . . . 43

ԳԼՈՒԽ 6։ Կարճատև արձակուրդներ և ժամանակավոր հեռացումներ . . . . 45

ԳԼՈՒԽ 7։ Ազատումներ և յետաձգումներ յեռամսյա ուսուցումն և վարժական հա-վաքներն անցնելուց . . . . . . . . 46

ԳԼՈՒԽ 8։ Յեռամսյա ուսուցման և վար-ժական հավաքներին չներկայանալու և ու-շանալու պատճառների հարգելիությունը . 50

ՀԱՎԵԼՎԱԾ VIII։ Յերկրային զորամասերի մարտական պատրաստությունը . 51

ԳԼՈՒԽ 1։ Ընդհանուր դրություններ . . 51

ԳԼՈՒԽ 2։ Առաջին տարվա ծառայության սոսկական փոփոխիկ կազմի զորական ծա-ռայողների յեռամսյա ուսուցումը . . . 53

ԳԼՈՒԽ 3։ Վարժական հավաքների խնդիր-ները . . . . . . . . . . . . . 54

ԳԼՈՒԽ 4։ Փոփոխիկ պետկազմի պատրաս-տությունը . . . . . . . . . . . 54

ՀԱՏՎԱԾ IX։ Փոփոխիկ կազմի պատ-րաստությունը (միջհավաքներին) . 55

ԳԼՈՒԽ 1։ Հիմնական խնդիրներ . . . 55

ԳԼՈՒԽ 2․ Աշխատանքի դեկավարությունը 56
ԳԼՈՒԽ 3․ Փոփոխիկ պետկազմի պատրաստությունը . . . . . . . . . . . 57
ԳԼՈՒԽ 4․ Կրտսեր պետ և սովորական փոփոխիկ կազմի պատրաստությունը . . . 58
ԳԼՈՒԽ 5․ Ստուգողական—միօրյա հավաքները . . . . . . . . . . . . . 59
ԳԼՈՒԽ 6․ Անհատական առաջադրությունններ 61
ԳԼՈՒԽ 7․ Անգրագիտության վերացումը . 63
ԳԼՈՒԽ 8․ Մասսայական աշխատանք, որ անց է կացվում հասարակական կամավոր կարգով . . . . . . . . . . . . 63
ԳԼՈՒԽ 9․ Աշխատանքի շարժական ձևերը 69
ԳԼՈՒԽ 10․ Ժողովներ և կոնֆերանսներ 72
ԳԼՈՒԽ 11․ Փոփոխիկ կազմի զորական ծառայողներից ակտիվ պատրաստելը . . 73
ԳԼՈՒԽ 12․ Համալրման շրջանի ուսումնասիրությունը . . . . . . . . . . 75
ՀԱՏՎԱԾ X․ Ցերկրային զորամասերի աշխատանքների շրջադարձը . . . 76
ՀԱՏՎԱԾ XI․ Վարժական համաքի կազմակերպչական պլանի կառուցվածքը . 77
ՀԱՏՎԱԾ XII․ Ցերակրային զորամասերի սանիտարական սպասարկումը և սանիտարական պատրաստությունը . 84
ՀԱՏՎԱԾ XIII․ Ռազմա-անասնաբուժական սպասարկումը . . . . . . . 87
ՀԱՏՎԱԾ XIV․ Ցերկրային զորամասերի հրամանատարների փոխհարաբերությունը ռազմական կամիսարիատների հետ 91
ՀԱՏՎԱԾ XV․ Ցերկրային զորամասերի զորական ծառայողների իրավունքները և պարտականությունները . . . 94

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ. 1. Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և ՌԽՖՍՀ ԺԿԽ վորոշումը յերկրային գործերի համալրման շրջաններում տեղական խորհրդային մարմինների պարտականությունների մասին . 99

2. ԲԽՍՀ ԺԿԽ վորոշումը յերկրային գործերի համալրման շրջաններում իշխանության տեղական մարմինների պարտականությունների մասին . . . . . . . . 104

3. Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Վրաստանի ԽՍՀ ԺԿԽ № 19 վորոշումը յերկրային զորքերի կարիքները բավարարելու համար տեղական խորհրդային մարմինների պարտականությունների մասին . . . . . . . . . . . 108

4. Քաղվածք Անդրկենտգործկոմի նախագահության նիստի 1928 թ. մարտի 25-ի արձանագրությունից յերկրային զորքերի համալրման շրջանների տեղական մարմինների պարտականությունների մասին . . . . . 113

5. Տեղեկությունների ձև և հրահանգ յերկրային զորամասերի շրջանացման և տարատեղման մասին տեղեկություններ կազմելու, նույնպես նրանց փոփոխությունների մասին 120

6. Կանոնադրություն ԲԳԿԲ յերկրային զորամասերը ձիակազմով, գումակի սայլերով և լծասարքով համալրելու մասին փոփոխիկ կազմի զորական ծառայողների ուսուցման, վարժական և կարճատև հավաքների ժամանակ . . . . . . . . . . . . . . 124

7. Հրահանգ կիրառելու համար ԲԳԿԲ ձիակազմով, գումակի սայլերով և լծասարքով համալրելու մասին կանոնադրությունը փոփոխիկ կազմի զորական ծառայողների ուսուցման, վարժական և կարճատև հավաքների ժամանակ . . . . . . . . . . 131

8· Կանոններ զինվորական փոխադրական փաստաթղթերն օգտագործելու այն զորական ծառայողների կողմից, վորոնք իսկական զինվորական ծառայությունն անցել են Բ·Գ·ԿԲ յերկրային զորքերի փոփոխիկ կազմում փոխադրվելու նրանց ուսուցման և վարժական հավաքների համար . . . . . 140

9· Փոփոխիկ կազմի զորական ծառայողների ընդունելության սխեման . . . . . . . 151

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039049

Г 387.
А $\frac{I}{4457}$